



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

25954

ՊԱՏԱՌԻԹԻՒՆ

ՊԼՆՁԷ ԲԱՂԱԿԻ

ՅՈՐՈՒՄ ԵՆ ԲԱՆՔ ԽՐԱՏԱԿԱՆՔ
ՕԳՏԱԿԱՐՔ ԽԻԿԱՐԱՅ ԽՄԱՍՏՆՈՒ

ԵՒ ԱՅԼ ԲԱՆՔ ՊԻՏԱՆԻՔ

ՏՊԱԳՐԵԱԼ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
Տ, Տ, ՆԵՐՍԷՍԻ ՍՐԲԱԶՆԱԿԱՏԱՐ ԿԱԹՈՒՂԻ
ԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱԼԷՍԻ
Տ, ԿԻՐԱԿՈՍԻ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ի ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԵԱՆ ԿՈՏԱՆԿ ԵՐՈՒՍԱԼԷՍԻ
ՏԵԱՌՆ ՅԱԿՈԲԱՅ ԱԶԳԱՍԷՐ ՍՐԲԱ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՅՕՐԹԱԳԻԻՂ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՊՕՂՈՍԻ ԱՐԱՊԵՆԱՆ ԱՊՐԵՑԵԻՅԻՈՑ



~~30528~~

25954



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՊԸՆՁԷ ՔԱՂԱՔԻՆ

ՈՐԷ

ՕՐԻՊԱԿ ԱՇԽԱՐՀԻՍ



Կայր ՚ի Պաղտատ քաղաքն Խալիֆայ մի ,
որում անուանն էր Աբդուլեք: Օր մի ՚ի մէյ-
տան իջաւ , ժողովեց զիւր մեծամեծսն , ու
եհարց վասն Սողոմոնի՝ թէ որպէս հրաման
առնէր ՚ի վերայ դիւանցն:

Յառաջ եկն Ամիրայն և ասաց , հըգօր և
մեծ Խալիֆայ , կայր մարդ մի որդի վաճա-
ռականի և ասէր՝ թէ ես գնացի ՚ի Սելեկի-
այ կղզին , և մոլորեցաք ՚ի ծովին քառասուն
օր: Եւ ապա ելաք ՚ի լեառն մի բարձր՝ և
ամենեկն ոչ ճանաչեաք զանդին , և սեռաք
մարդիկք սեք և այլադէմք . բարև ետուն և

տարան զմեզ ՚ի առնս իւրեանց . և կացաք
 առ նոսա երեք օր: Եւ ելեալ գնացին ՚ի ծովն
 ՚ի յորս, և տարան զմեզ զհետ իւրեանց . ար-
 կին զգործին՝ և կալան շատ ձկներ . և զհետ
 ձկանց բերին կուժ մի՝ արձիճով մասնէ հա-
 րած Սողոմոնի մօհրովն: Եւ բացեալ զկուժն՝
 ելաւ սև մուխ ու բարձրացաւ յօդս, և եղև
 գիշատեսիլ մարդոց . ազաղակեաց և ասէ,
 «Սողոմոն Սողոմոն որդի Դաւթի մարգա-
 բէի . մեղայ, այլ չգործեմ՝ զոր ինչ գործեցի
 մինչև ցայժմ . այլ՝ կամ ՚ի հրամանս քո»:
 Զի գիտաց դեն՝ թէ գեռես Սողոմոն կեն-
 դանի է:

Յայնժամ ասէ Խալիֆայն, ոչ հանգչի սիրա-
 իմ՝ մինչև տեսանեմ զայն կուժն, և ապա
 հաւատամ այդ բանիդ: Եւ հրամայեաց Խա-
 լիֆայն՝ Տալիպին որդւոյն Սէհալայ՝ թէ գնա
 առ Ամիրմուսէն առ յարեմօից տէրն, որ եր-
 թայք երկուքդ յորոնել մինչև գտանէք զայն
 կուժն . և ինձ հաստատուն զրոյց ասէք՝ թէ
 ինչ կայ ՚ի ծովն կամ ՚ի ցամաքին: Եւ ետ
 Խալիֆայն շատ գանձ Տալիպին և պատուա-
 կան ակունք, տաճիկ ձիանք, և ազնիւ ծառայք:

Գնաց Տալիպն առ Ամիրմուսէն, և ելաւ
 Ամիրմուսէն շատ հեծելովք յաշխարհն Ակա-

Կայցւոց Թագաւորին: Կարդաց Թագաւորն
 Ականացւոց զհրաման Տալիպին, և կոչեաց զոր
 ինչ յաշխարհն իւր հին մարդ կայր, և զա-
 սաշրջիկ վաճառականսն: Գտան ալւոր մարդ
 մի, որ գիտէր զծով և զցամաք, և զանբնակ
 աշխարհն տեսեալ էր: Եհարց Թագաւորն
 ցժերն և ասէ, սիրելի՛ գիտե՞ս զայն տեղն՝
 յորում Սողոմոն բարկացաւ դիւացն, զորս ՚ի
 պղնձէ կռժն էած ու արճիճով մասնեհար-
 եաց, և ՚ի ծովն ձգեաց: Ասաց ալւորն՝ այն
 գիտեմ: Ասաց Թագաւորն՝ Թէ պէ՞տք է որ
 տանիս զԽալիֆայն և Ամիրայքն յայն տեղն:
 Ասաց ալւորն՝ յոյս ունիմ առ աստուած, որ
 զբարին առաջնորդէ. բայց ճանապարհն մու-
 խաթարայ է և հեռի. բառասուն օր անջուր
 պիտի գնան և գան, և շատ զարմանք կայ ՚ի
 ճանապարհին:

Յայնժամ ասաց Թագաւորն ցԱմիրաւ-
 սէն, այդ գիտուն ծերդ՝ որ յաշխարհիս այլ
 չկայ, ՚ի քեզ եմ սուեալ: Ծուներ էած Ամիր-
 մուսէն՝ և խիլաթեաց զժերն, և եհարց ցը-
 ծերն՝ ի՞նչ պէ՞տք են ՚ի ճանապարհին: Ասաց
 ծերն՝ հազար ուղտ աւելի պիտի քան զմեր
 գրասան՝ որ ջուր բառնամք և մրանումք ՚ի
 Պաի աշխարհն. այլ զջուրն պէ՞տք է որ ապակի

կժով բառնամք՝ որ չցամաքի, զի հողմն սաս-
 տիկ է՝ որ կը ցամաքեցնէ զջուրն ՚ի մէջ տիկնէ:
 Յայնժամ զուգեցին՝ և ուղեորեցան ՚ի
 ճանապարհ . և գնացին երկու հազար ձիա-
 ւորօքն ՚ի շէն և յանշէն ՚ի ներս . և հասին
 յանմարդաբնակ աշխարհն, և լննցաւ տարի-
 մի: Եւ գիշեր մի ծերն զաստղն նշան էր եղ-
 եալ՝ և երթային, և ծածկեաց ամպն զաստղն,
 և մոլորեցան ՚ի ճանապարհէն, և հարց Սմիր-
 մուսէն ցծերն և ասէ, յո՞ր աշխարհի եմք . ա-
 սաց ծերն՝ ոչ գիտեմ: Ասաց Սմիրմուսէն,
 կարե՞ս դառնալ յայն անդն՝ որ զճանապարհն
 կորուսաք . ասաց ծերն՝ ոչ գիտեմ: Յայնժամ
 շատ լացին, և գնացին յանուն աստուծոյ մին-
 չև ՚ի կէս օր . և մասն ՚ի դուր աշխարհ մի,
 և կայր ՚ի մէջ աշխարհին սևագոյն բլուր մի
 բարձր, և ՚ի հեռուստ որպէս զձուխ երևէր,
 և դիմեցին ՚ի նաւ Եւ իբրև մօտեցան՝ ան-
 սին, զի գմբէթ էր բարձր և գեղեցիկ . և
 շէնքն ամէն՝ պատուական ակունք էին, եա-
 խուա և զմրուխա, և շուրջ զանազան ակամբք
 զարդարեալ: Ասաց Սմիրմուսէն՝ փնօք նոյ,
 որպէս գեղեցիկ շինուածք են: Եւ դուռն
 գեղեցիկ մարմարիոնեայ էր . և զուպպին
 նստուածքն՝ հազար ըզայ քայլք էր . և զլմ-

բէթն բարձր՝ արձիճով կապած: Տեսաւ
 Ամիրսուսէն՝ և զարմացաւ ՚ի բարձրութեանն
 զուպակին: Եւ էր անկայր և սնմարդարնակ,
 և բուն ճէր ՚ի վերայ սարսպացն. երբ զայն
 տեսին՝ շատ լացին: Եւ ասաց Ամիրսուսէն՝
 թէ զատ ՚ի յաստուծոյ ոչ որ կարէ շինել, զե
 փառք և վայելու թիւն աշխարհիս սուտ է:

Ի վերայ նորա գրած էր ողբս այս:

Գնաց ժամանակ նոցա, իբր երազ մութն
 ՚ի գիշերին. չրկայ դառնալու ճարակ, յայս տե
 ղըս զոր ՚ի յեւթողին: Աւանդ թէ կարեմք գիտ
 նալ, թէ բարի գործով գնացին. կամ թէ հար
 ուածով անցին, վասն մեղաց որ մէկ չերեկին:

Յայնժամ ասաց Ամիրսուսէն, ո՞ւր են սոցա
 տերքն կամ շինողքն, և ո՞ւր են, որ շատ դա
 տեցան, և որպէս ծաղիկ թարշամեցան և պա
 կատեցան: Ասաց ալեորն, պարտ է քեզ դո
 հանալ զաստուծոյ, որ փրկեաց զմեզ յայն
 մութաթարայէն՝ և հասոյց ՚ի յայս վայելուչ
 տեղիքս: Գեանես Ամիրայ՝ որ քո աստուած
 սիրու թիւնդ փրկեաց զմեզ. իմ հայրն կատեր՝
 թէ սկ որ յայն տեղն մոլորեալ է՝ որ մեք
 մոլորեցաք, այլ ոչ են երեւեալ. բայց աստի

Մինչև 'ի Պղնձէ քաղաքն երեք ամսոյ ճանապարհ է . և զայս Աղէքսանդր շինեաց՝ և ընդ այսր գնայր 'ի Պղնձէ քաղաքն :

Յայնժամ ասաց Ամիրսուսէն՝ յառաջ 'ի քաղաքս մանուսք և տեսնուսք զվայելուծի քաղաքիս , և ապա երթամք : Եւ մտեալ 'ի քաղաքն՝ տեսաք գեղեցիկ դարպաս մի շինած մեծ և լայնանիստ . և 'ի դուռն գրած էր նօսր գրուէ : Ասաց Ամիրայն՝ ո՛վ կարէ կարդալ զայս գիրս . ասաց ալևորն՝ ես եօթն ազգի գիր գիտեմ : Ասաց Ամիրայն՝ կարդան որ տեսնում . և սկսաւ կարդալ զբանս զայս :

Մարդն որ գայ 'ի յայս տեղիս , թող լայ զմեզ՝ ինքն խրատուի . որ մեք 'ի մեր շատ իրացն , եմք բաժան ողորմ ու լալի : Եւ քիչ մի յառաջ երթայք , ու տեսնուք իբք զարմանալի . և փառք աստուծոյ նա տայ , քանի ի նա է միշտ կենդանի : Տեսէք դուք բազում զարմանք , թէ քանի մարդ հող է դարձեր . մահնն բաժանեաց զմեզ , կորուսաք զոր ինչ ունէաք : Համարրս տալոց եմք մեք արարչին , զոր ինչ եմք գործէր . այլ վայ անաչառ ատեանն , ուր զահեղ բարբառն է հրնչէր : Ժողովեցաք գանձս բազումս , ու այլոց թողաք գնացաք . ըզքինն շաաին սուսաք , ու զանդէնն մեք մո

ուացաք: Եւ զհետ մեր այն երեկ, զինչ որ
յայս կեանքս գործեցաք. նա թէ չար արարե-
ալ եմք, զամէն գործոց հաշիւն աի տամք:

Յայնժամ մահն ՚ի կայսրին տեղն և տեսին
զարմանալի շինուածս՝ և ՚ի գետնամէջն սալեր
կապած էր, արծաթած և ոսկեջրած: Եւ գը-
նացին ՚ի մէկալ գուռն, յորոյ վերայ գրած
էր ողբս այս:

Քանի՛ Ադամայ որդիք, ծներ է յայս
կեանքս ու մեռեր. և քան զանասուն անբան,
կենդանեօքս աստէն մոլորեր: Այլ որ գի-
տունք են եղեր, զայս կեանքս սուտ են հա-
մարեր. անդէնն իւրեանց սուռն շիներ, ու
վստահ ՚ի ներս գնացեր:

Լսեց Ամիրսուսէն՝ և աղիողորմ ելաց և
ասաց, որ ունի խելք և միտք և խմաստու-
թիւն՝ նա՛ կարէ ճանաչել զայս կեանքս որ
ամէն մեծութիւն ոչ ինչ է: Եւ կայր ՚ի մէջ
այնր տեղին գմբեթ մի մեծ և բարձր, և ՚ի
բոլորն նորա չորս հարիւր գերեզման կայր
մարմարոնեայ քարիւ՝ ազգի ազգի գունով.
և էր գրած ՚ի վերայ տապաններուն՝ փորած
ու ոսկւով լցած՝ Յունարէն գրով շատ ող-

բեր . և գերեզման մի ուրիշ կայր զարդարած՝
յորոյ վերայ գրած էր որքս այս , զոր կարդաց
այլ որն :

Անղ թէ քանի կացի , կենդանի ու վայել-
լիցի . գործոյս ամէնն հաշուի , ահա եհաս
ժամ՝ որ խընդրի : Քանի կենդանի էի , նա
բազմաց պարգևք բաշխէի . ես զիս անմահ
կարծէի , նա եղէ սակաւ մի փոշի :

Եւ գրած էր՝ թէ այս գերեզմանս Հէճուպին է ,
որ 'ի մահուն ժամանակն ասաց 'ի վերայ իւր անձին
որքս այս :

Քանի որ յայս կեանքն եկիր , նա կացեր
զամէնն 'ի յերեր . բերդեր ու բազում քա-
ղաք , դու զամէնն յայլոց խլեցեր : Հիսի ես
խաւար դարձեր , որ որդունքն 'ի քեզ կան 'ի
կեր . դու ես պատասխան տալու , զոր 'ի յայս
կեանքս զրկեցեր :

Յայնժամ մտան 'ի մէկ ալ դուռն , և գը-
րած էր այսպէս : Երբ մահն երեկ՝ իմ զօրքն
չկարացին թափել զիս . իմ անչափ մեծու-
թենէն՝ ոչ կայր այլ մարդ . իմ բաժին պա-
տանքս է , ու ամուսնքս , ու փորոզքս , ու գե-
րեզմանս . և ամէն մեծութիւնս կորեաւ . և

այլոց մնաց: Եւ դեռ խնացայ որ մարմնոյս
սէրն կորոյս զիս. երբ իմ անչափ մեծութիւնս
ինձի դէմ չեկաւ, նա այլ մարդ կայ, որ այս
սուտ կենցաղոյս կու հաւատայ:

Եւ մտան 'ի մէկալ դուռն, և տեսան՝ որ
զարմանալի շինուածովք զարդարած, և գրած
էր ողբս և բանս այս: Ո՛վ եղբարք՝ աստուած
միայն է անմահ ու անեղ. մի՛ վստահանայք 'ի
սէր այլսարհիս. զի խաբէութիւն և սուտ է,
և երազոյ նման:

Ա՛յ իմ սիրելի եղբարք, աչք 'ի յիս ար-
ւէք զէն էհար. զի շատ 'ի մէկ անդ կեցաք,
և եղաք ուրախ հաւասար: Ի յայս անդս իմ
խիսա գումար, զի դժոխքն է մութն ու խա-
ւար. զիս անսէք արէք ձեզ ճար, զէն էհար
հազար զէն էհար:

Եւ գրած էր՝ Թէ ո՛վ զիս տեսնու, Թող
Վայ տայ ինձ. զի ես Թագաւոր էի հզօր և
յողթօղ 'ի սրասերազմի. այժմ լաւ է մու-
րացկան մի քան զիս:

Երբ ես կենդանի էի, անէր էի հազար քա-
ղաքի. բերդեր ու գաւառ բազում, անհա-
մար և անթուերի: Քսան հազար ձի ունէի,
զօրեղ և զարմանալի. երբ ես 'ի տընէն ել-

նէի , քսան հազար մարդ հեծցնէի : Անչափ
 ոսկի ու արծաթ , ակն և մարգարիտ ունէի . որ
 պրծելով լցեր էի , ու ապրեցայ հարիւր սարի :
 Յանկարծակի մահ անկաւ , 'ի յիմ դարպասն
 և չք մնացաք . ոչ ծեր և ոչ տղայ ասաց , հանց որ
 թաղել ոչ կարացաք : Բայց թէ զմեծսն թա-
 դէաք , և զայսն 'ի բաց ընկեցաք . այլ այժմ
 մեք յոյժ յաղթեցաք , ու զայս բաներս առ-
 ձեզ գրեցաք :

Որ զմեր խեղճ մահրն լսէք , ու դուք ձեզի
 մեզմէն խրատուիք . լսելով հասեալ բարկու-
 թիւնն , 'ի մանկութեան ձերում ապրիք : Ես
 մեծ թագաւոր էի , հզոր զօրաւոր և արի .
 շատ գանձ ու ապրանք ունէի , որ չունէր
 մարդ 'ի վերայ երկրի : Չհոգիս իմ անտես
 արի , ու զընչից շահս թուէի . զամէնն այժմ
 այլոց թողի , մէն ըզպատանքս առի գնացի :
 Մեռայ ես որ սէր էի , բարութեանս զոր
 դուք տեսանէք . մարդ ու հանց աղուոր վայ-
 ելք , չէ հասեր ու մեք հայրենիք : Նա դեռ
 զըկէի զայլ որ , մինչ որ մահն ասաց թէ հե-
 րիք . մոխրիս եմ հաւասար եղեր , այ եղբարք
 իմ դուք մի խաբուիք :

Եւ երբ ցաւն զիս նեղէց՝ կոչեցի զման-
 զամենայն և առի թէ օգնեցէք ինձ . թափե-

ցէք զիս ՚ի մահուանէ , որ կու բաժանէ զիս
 ՚ի ձեզանէ : Ասացին , թէ չարկամ ունիս ,
 ասէ որ կուռնիք . թէ չէ ՚ի հետ աստուծոյ
 սլ կարէ կուռիլ , մահն առաջի ամենեցուն
 կայ : Յորժամ որ զայն լսեցի , նա կայի նյ ՚ի
 հրամանքն . բերել տուի զապրանքն իմ զամե-
 նայն , ու կուտեցի որպէս զգլուր մի : Եւ ա-
 սացի իմ գանձիս՝ թէ գնեցէք զիս , որ մէկ
 տարի մի ալ ապրիմ . նա՛ ասացին , թէ այդ բա-
 նիդ այլ ճար չկայ . նա կացի աստուծոյ հրա-
 մանքնին , ու արձակեցի զհոգիս :

Աւանդ մեռած անունս իմ , որ այլ ոչ բը-
 նաւ յիշուի բարի . թագաւոր որդի Գաղատայ ,
 որդի Շատայ թագաւորի : Ինչ գանձ ու ապ-
 րանք կայր ինձ , զոր մեղօք էի ժողովեր . չը
 կարաց ինձ մէկն օգնել , կամ սակաւ մի ցաւ
 փարատել : Տուք զայս կեանքս ու զայն ա-
 ուէք , երբ մահուն ճարակն է հատեր , չը կայ
 հողածին ծնունդ , կենդանի որ զինքն է պահեր :

Եւ բոլորայ մի կայր ՚ի մէջ դարպասին , ու
 ոսկի արծիւ մի դրած ՚ի վերայ նորա . որ ջուրն
 ՚ի բերանէն ՚ի վայր կը թափէր , տակն սակ էր
 կապած , արծաթած ու ոսկեջրած : Եւ գրած
 էր որքս և բանս այս :

Ո՛վ որ տեսնու զայս վայելչութիւնս , նա
 թող փառաւորէ զաստուած : Մարդ՝ իմացի՛ր
 զայս կեանքս , և գիտես որ չէ՛ մնացական .
 զմահըն մոռացերէք դուք , ամենիս է ասպըն-
 ջական : Զոր ինչ Ադամայ ՚ի վեր , են ծընէր
 ամէնն ու գնան . Զանա՛ որ բարի գործես , որ
 անդէնն չլինիս փոշիման :

Եւ գնացին ՚ի չորրորդ դուռն՝ յորոյ վերայ գրած
 էր ողբս այս :

Հիմի եմ ՚ի հող դարձէր , կերակուր որ-
 դանց եմ եղեր . և ՚ի յիմ անհուն բարեացն ,
 դատարկ է ՚ի բաց եմ մընացեր : Ետ մարդ-
 անարժան ոտօք , յիմ տունս եկեալ ժուռ
 գայր կոխէր . այժմ այլ ոք յիսնէ չվախէր ,
 աղքատաց նման եմ եղեր : Ո՛ մարդ՝ որ երբ
 գաս առ մեզ , լաց ու զմեր կորուսան որոնէ .
 մահ մարդոյն դիւրաւ հասնի , ըզկեանք մար-
 դոյն դիւրաւ կը փոխէ : Մինչ մեք կենդանի
 էաք , նստէաք ընդ ում արժան է . հիմի ամէ-
 նէն ՚ի զատ , որ անանց հուրն զմեզ կայրէ :

Եւ գնացին ՚ի հինգերորդ դուռն՝ յորոյ վերայ
 գրած էր շատ խրատ , և ողբս այս :

Այս ասանւորիս բարիքն , չէ՛ իսկի մարդոյ
 մնացական . մահըն զօրաւոր կուգայ , և սանի

՚ի հող և ՚ի զընտանս: Որչափ որ անհոգ լինիս,
 ու շատ գանձ ունիս ՚ի խաղնան. մահըն գայ
 քակտէ սանի, որ խկի հետքըն չերևան:

Ի վեցերորդ դուռն գրած էր ողբս այս:

Յիմար Ադամայ որդիք, որ յաշխարհս էք
 դուք շրփացեր. տեսէք թէ քանի մարդիք,
 յԱդամայ ՚ի վեր են անցեր: Դուք խկի բնաւ
 չյիշէք, այլ անբանից պէս էք եղեր. ու ան-
 մտիթար քայլօք, ըզմահուն օրն էք մոռացեր:

Ի յեօթներորդ դուռն գրած էր ողբս այս:

Այս աստուծորիս բարին, երազի ինքըն նը-
 ման է. հազար վայ նորա ասեմ, որ զայս
 կեանքս խիստ կու սիրէ: Երանի տամ այն
 մարդոյն, որ անդէնն ըզտուն կու շինէ. որ երբ
 այս կենացս ելնէ, յաստուծոյ ինքըն չամաչէ:

Ի յութերորդ դուռն գրած էր ողբս այս:

Իսկ ոչ խրրատին մարդիք, թէ մահուն օրն
 գալոց է. մոռնան զահագին տանջանքն, որ
 ըզբազումս անդ ժաղովէ: Չինչ որ աստ գոր-
 ծած լինի, անդ մէկին հազար վրձարէ. ջանն
 դքեզ ՚ի զատ պահել, ՚ի մեղաց և ՚ի չարեաց
 գործէ: Տեսէք որ այս ամենայն շինուածոյս

և գանձոյս որ ես տէր էի, նստէի յայս գրմբեթս ու վայելէի, և ՚ի յայս անուշահոտութենէս անմահանայի: Արդ՝ տեսէք զայս ամթագաւորութիւնս, որ սուն է եղեր այժմ գազանաց և թրոջնոց. քանի զայս տեսանէք այլ մի՛ հպարտանայք, և մի՛ գործէք չար, և մի՛ նախանձիք ՚ի սուտ փառքն: Յիշեցէք զայն՝ որ համարս սալոց էք առաջի քրիստոսի. զի ոչ կարէք պատճառել, թէ ոչ գիտացաք:

Արե՛ք դուք այս տեղս եկէք, ու տեսէք զիս ՚ի մէջ հողին. թողէր եմ զամէնն ՚ի բաց, նա՛ համար կուզեն իմ գործին: Լացէք զամէնին պարօնս, որ տէր էի հազար երկրի. այսօր յամէնէն զըրկած, ակն ունի հոգիս գեհենի:

Եւ այլ շատ ողորմ բաներ գրած էր, այլ թեթեացոյց Ամիրմուսէն զաշխարհս՝ յիւր աչքէն: Եւ գնացին յայն գմբեթն՝ որ քան զծուխ երևէր, այնչտի բարձր էր ու արձրձով կապած. զայն տեսան՝ և զայլոց վայելչութիւնն մոռացան: Քանզի պատերն ամէն ոսկւով շինած, ու դռներն ամէն ծխանելիք էր, մեք ոչ կարացաք գրել: Յայն գմբեթին մէջն սեղան մի կայր, որ դեղին ակամբ ու ոսկւով և մարգարտով էր կազմած, և կայր

17
շուրջ զնովաւ երկոտասան անկն . և բոլորն սե-
ղանոյն հարիւր թիզ էր :

Գրած էր 'ի վերայ 'նորա ողբս և բանս այս՝ թէ՛
Ո՛ւր են 'նոքա , որ զուարճանային շուրջ զսեղանովս :

Հաս թագաւորք ճաշակեալ , 'իսմա այսօր
մէկ մի չերևին . և այն որ գալոց է ասա , գնա-
լոց է անհրնարին : Փոխին ցեղ ու ցեղ աւուր-
քս , օր լինի ամէն մեռանին . անտէր թողին
զայս սեղանս , ու լալով ելան գրնացին :

Եւ 'ի միւս կողմն գրած էր ողբս և բանս այս՝
Թէ՛ Այս սեղանս զըմբուխս թագաւորին է :

5087
21809
Չինչ կայ գեղեցիկ շինուած , մահրն գայ
զամէնն խափանէ . ճարտար դու մըտիկ արէ ,
թէ սոցա շինողքն այժմ ո՛ւր է : Նոյնպէս ար-
ժեցն՝ զաշխարհս , ու մըտօք զինքնրդ դու քըն-
նէ . երկնաւորին դու փառք տ՛ուր , որ ամէն
հոգւոց 'նա տիրէ : Հազար թագաւոր է կե-
րակրեր 'ի վերայ սեղանոյս , ու ամէն թագա-
ւորաց անուանքն գրած է . ու ամենեքեան
անցեալ են 'ի ներքե հողին :

Եւ իբրև տեսաւ Ամիրմուսէն՝ հրամայեց
մարդոցը՝ թէ գրեցէք զայս բաներս . և մնա-
ցին 'ի յայն գմբէթն երեք օր : Եւ այս գրու-

ցին երեք աւուր ճանապարհ, և տեսան բարձր բլուր մի, ու ՚ի վերայ բլրին կայր ձիաւոր մի սղնձէ. և գրած էր ՚ի վերայ ըմբին թէ՛ Վալ զիս աստուած և առաջնորդեա՛ ինձ ՚ի ճանապարհն յայն ընդ որ դադարի՛ն ան է Պղնձէ քաղաքն:

Արարին որպէս և գրած էր. և ըզորդեցաւ ըմբին ծայրն ընդ յարեմուտս. և գնացին ընդ այն, և անցան ընդ դիժար կապան մի, և տեսան բարձր բլուր մի քարէ: Եւ յայն սիւնին ծայրն կայր կենդանի մի ՚ի մարդոյ ձև, թաղած ՚ի յայն սիւնն մինչև ՚ի մէջքն. և ունէր երկու թևք մեծամեծ. ձեռքն որպէս առիւծու էր. մազն որպէս ձիու. աչքն մեծամեծք և կարմիր զէտ զըոց ՚ի վառ. և կերպարանք նորա որպէս զթուխ սագի: Գոչէր ահագին ձայնիւ և ասէր, Փա՛ռք աստուծոյ անեղին և անմահին բարձրեղյն և միշտ կենդանւոյն, որ զայս անտանելի չարչարանքս ՚ի վերայ իմ էած: Եւ իբրև տեսան, յոյժ զարմացան: Եւ ասաց Ամիրմուսէն զողբս զայս ՚ի վերայ նորա:

Զարմանք մեք այսօր տեսաք, չէր տեսած այլ մարդ հողածին. կենդանի մի թևաւոր, որ յաչացն հուր փայլէին: Աերպարանքն որպէս

Թուխ սագի, փառք ասէր անմահ արարչին .
 զայս չարչարանքս որ ինձ ես, չէր կրէր այլ
 քաջ անմարմին:

Եւ գնացին ՚ի մօտ նորա . եհարց այլորն
 և ասաց, ո՞վ ես դու . կամ ո՞վ է որ եղ զքեզ
 յայդ սիւնդ: Ասաց՝ Թէ ես այն դէն եմ, որ
 զհեա Սողոմօնի պատերազմեցայ . իմ անունս
 Տամշեր է . ես աստ կամ ՚ի չարչարանս հրա-
 մանաւ Սողոմօնի, մինչև աստուծոյ հրամանն
 հասանէ առ իս:

Ասաց Ամիրմուսէն, վասն էր եղ զքեզ
 Սողոմօն յայդպիսի չարչարանքն: Ասաց քաջն,
 կայր Թագաւոր մի Աբսիլազիզ անունն, որ
 ինձ քրոջ որդի էր . և ունէր երկու կուռք,
 կանաչ զմրուխտ ու եսխուտ, և ես ըսպասա-
 ւոր էի կռոցն: Եւ մեր Թագաւորին բազում
 հեծեալ զօրք կայր, և ոչ որ կարէր դէմ կենալ
 նմա, և բազում քաջք ՚ի նորս հրամանացն
 կախեալ էին . և ունէր դուստր մի անօրինակ
 զարմանալի պատկերաց ատէր: Ուղարկեց Սո-
 ղոմօն դեսպան առ Թագաւորն մեր և ասաց,
 ա՛ռ զքո դուստրն ինձ ՚ի կնուծիւն, և կո-
 աորեա՛ն զկուռքսն քո . և հաւաստն յաստուածն
 իմ, որ արար զերկինս և զերկիր: Թէ զայս

առնես՝ եղբայր լինիս ինձ . ապա թէ ոչ պատ-
րաստեա՛ս զքեզ ՚ի պատերազմ , որ գամ տամ
քեզ բաժին զմահն :

Լսեց մեր Թագաւորն և բարկացաւ . կոչեց
զիւր զօրքսն ամենայն , ու եհարց՝ թէ զի՞նչ
տամք պատասխանի Սողոմոնի : Ասացին մե-
ծամեծքն՝ թէ ՚ի մարմնաւորաց քան զքեզ ոչ
կայ մեծ , դու մեծ ես քան զնա . բայց մուտ
դու առաջի չաստուածոցն , ու աղաչեա՛ն նոցա՝
թէ օգնեցէք ինձ , զի Սողոմոն գալ կամի ՚ի
մերայ մեր առ ՚ի կոտորել զմեզ :

Յայնժամ ես անբան տխմար ու հպարտ ,
որ ոչ ճանաչեցի զՍողոմոն հզօր Դաւթի որ-
դին՝ հարցի զկուռքսն վասն այսր բանիս : Եւ
նոքա պատասխան ետուն՝ թէ մի՛ երկնչիք ՚ի
Սողոմոնէ արքայէն , զի կարօղ եմք առնել
զգործ Սողոմոնի , և տամք ձեզ զյաղթու թի :

Լսեց Աբաիլագիզ Թագաւորն մեր ու
խիտա ուրախացաւ . և զՍողոմոնի դեսպանն
ծեծեց , ու շատ վատ ասաց Սողոմոնի . և ա-
սաց՝ Թող պատրաստի ՚ի պատերազմ , որ ես
եկեալ տամ նորա բաժին զմահն : Գնաց դես-
պանն և ասաց Սողոմոնի զամենայն , որ պա-
րաստեց զինքն ՚ի պատերազմ . Ժողովեց զօրքն
և քաջք բազումք մարմնաւորք և անմարմիւք .

հազարք հազարաց և բիւրք բիւրոց օձք և
 վիշապք, գազանք և անասունք և թռչունք,
 և ուսոյց նոցա զկռուիլն: Եւ եկեալ Սողոմօն
 յաշխարհն մեր՝ ուղարկեց դեսպան առ թա-
 գաւորն մեր, թէ ահա եկի ՚ի քո աշխարհն .
 լսէ իմ հրամանացս, եկ առ իս . և կոտորեան
 զկռուքսն, և հաւասան յաստուածն իմ զի ոչ
 կարեն դոքա պահել զքեզ ՚ի ձեռաց իմոց:

Լսեց մեր թագաւորն՝ ու կալաւ զդես-
 պանն Սողոմօնի, և զերեսն նորա սեւացոյց, և
 ուղարկեց առ նա՝ թէ պատրաստ լեր, որ
 կռուիմք . տեսնուիք՝ որ աստուած կարող է
 և յաղթող: Գնաց դեսպանն՝ և ասաց նմա
 զամենայն եղեալն:

Յայնժամ գնաց Սողոմօն ՚ի դուր գաշա-
 մի . և իմ թագաւորն ՚ի դուր լեռ մի: Ժողո-
 վեցան զօրք բազումք անթիւ և անհամար՝ և
 քաջք բազումք, և յաջողեցաւ կռիւն: Եւ
 հրամայեց Սողոմօն գազանացն՝ որ կէսն ընդ
 աջմէ կային, և կէսն ՚ի ձախմէ: Եւ թռչնոցն
 հրամայեց՝ որ բարձրանային ՚ի վերայ ձայ-
 թերով, ու կրտրցով ծակէին զերեսս և զաչս
 մեր, և չտային բանալէ Գազանացն հրամայեց՝
 թէ զգրասանին լափեցէք և փախատական ա-
 րարէք: Օձիցն և վիշապացն հրամայեց՝ թէ

՚ի մէջ ոտից նոցա մահէք ու պաշարեցէք: Եւ
ինքն նստած յոսկիակազմ թախտ օձուն վրայ,
զարդարած ազգի ազգի, հրամայեց՝ որ բարձ-
րացուցին զթախտն, որ հայեր ՚ի վերայ պա-
տերազմին: Եւ հրամայեց իւր բոլորին՝ որ
կայր յիւր աջոյ կողմն, և այլ հեծեալք ընդ
անմարմնոցն ՚ի ձախմէ կային: Եւ արարին կռիւ-
երեք օր և երեք գիշեր. և ո՛վ կարէ պատմել
զահագին սպատերազմն, թէ զղղղուամն՝ և
թէ զգոռուամն:

Եւ քան զամէնն յառաջ ես յաղթեցի Սո-
ղոմօնի զօրացն, ու պարծեցայ, թէ զՍողոմօնի
բոլորինն Ամիրաթ՝ բերեմ առաջի իմ թագա-
ւորին: Անչեցի և խառնեցայ ընդ զօրքնն ա-
սելով թէ զայլ ոք չուզեմ, բայց զքեզ Ամի-
րաթ, ե՛կ զի տեսցուք զմիմեանս: Եւ նա ևս
գոչեաց ահեղագո՛չ ձայնիւ. և ինձ այնպէս
թուեց՝ թէ երկինք պատառեցաւ և երկիր
շարժեցաւ, և անկան քարինք ՚ի վերայ իմ ՚ի
սաստիկ ձայնէ նորա:

Եւ երբ խառնեցաք ամէնքս իրար, թրու-
չունքն չտային ՚ի մեզ աչք բանալ. գազանքն
ու սողունքն ամիշեցուցին զմեզ: Եւ այնպէս
խտացաւ կռիւն՝ որ ոչ հայր որդւոյ որոր-
մէր, և ոչ եղբայր եղբօր կարէր օգնել. և

բազումք ՚ի մեր զօրացն մեռան: Ապա զհետ
 Ամիրաթինն վեց ժամ կռուեցաք, մինչ որ
 ձանձրացաք երկուքս. և ես կամէի՝ որ բաժա-
 նէի յԱմիրաթէն: Տեսաւ Սողոմօն զիմ դառ-
 նայն ՚ի հետ, հրամայեց՝ թէ բռնեցէք զայդ
 անհաւատդ: Փախեայ ես, և Ամիրաթն ան-
 կաւ ՚ի վերայ իմ. ասացի նմա՝ երդմնեցուցա-
 նեմ զքեզ յաստուած կենդանին, որ երբ
 տանիս զիս առաջի Սողոմօնի արքային, սպա-
 նանել չասս: Եւ տարաւ զիս առաջի նորա,
 որ ետ բերել զայս քարէ սիւնս, և զընդան-
 եաց զիս աստ երկաթով, ու արճրճով, ու ար-
 զընձով: Եւ հրամայեց Ամիրաթին՝ որ շալկեց
 զիս այս քարովս, ու եբեր յայս լեռս՝ որ կո-
 ւեսանէք:

Ասաց արևորն, այն պատերազմն զի՞նչ
 եղև: Ասաց քաջն, յորժամ Ամիրաթն զիս
 փախոյց ու բռնեց, իմ թագաւորն փախաւ,
 և Սողոմօն յեռանց ընկաւ, ու զիմ թագա-
 ւորն սպան և զզօրքն կոտորեաց: Առին զկրղ-
 զին, ու զկուռքսն Չարդեցին. և զթագաւորի
 դուստրն էառ Սողոմօն իւրն ՚ի կնու թիւն, և
 զերկիրն Ամիրաթինն ՚ի ձեռն ետ, և ինքն դար-
 ձաւ ուրախութեամբ ՚ի տուն իւր:

Ասաց Ամիրամուսէն, օրհնեալ է աստուած:

որ յամենայն տեղիս փառաբանի անունն նորա: Եհարց ցքաջն՝ թէ զայն տեղն գիտես, որ Սողոմոն զդւ. քն ՚ի պղնձէ կուժն ելից՝ ու ՚ի ծովն ընկեց: Ասաց քաջն՝ թէ մօտ է ՚ի Աուու կուռեայ լեռնն ՚ի ծովն, և բնակեալ են յայն լերինն մարմնաւոր սև մարդիք. և ետ քաջն զնշան լերինն և զՊղնձէ քաղաքին: Եւ ապա գնացին՝ և զինի բազում աւուր իջան ՚ի դաշտ մի, որ կայր ծառ և տունկ, և պտուղն անուշահամ, գետ և աղբերակունք և ջուր քաղցր: Եւ անտի գնացին քառասուն օր, և ապա հասին ՚ի Պղնձէ քաղաքն, և էր որպէս զհուր ՚ի վառ:

Ասաց ալևորն, ահա այս է Պղնձէ քաղաքն: Եւ իջան ՚ի դուռն քաղաքին, և ոչ գրասին զմուտն. և հեծուցին երեք մարդ ՚ի յուղարն, և շրջեցան ընդ պարսպաւն երեք օր և երեք գիշեր. և ոչ գտան այլ տեղ, որ ցած էր քան զայն տեղն՝ յորում իջեալ էին: Եւ պարիսպն ամէն ողորկ սև քար էր. և այնպէս թուէր որպէս միաբերդ: Աթսուն կանգուն բարձրութիւն էր, և քառասուն թիզ լայնութիւնն էր պարսպին. և ունէր քսան և եօթը դուռ. ՚ի մէկ դռնէն ՚ի մէկալ դուռն ոչ երևէր մարդն:

Յայնժամ էառ Ամիրմուսէն ընդ իւր զՏա-
լիպն ու զալեորն , և գնացին 'ի բարձր լեռ մի ,
որ մօտ էր քաղաքին : Հայեցան 'ի վերայ քա-
ղաքին ու ասացին՝ Թէ ոչ եմք տեսեալ այսպի-
սի շինուածք 'ի վերայ երկրի . և բուն ճչէր 'ի
վերայ պարսպացն : Յետ դարձան և գտին
տապանք մարմարիոնեայ գոյն զգոյն :

Ի վերայ տապանին գրած էր ողբս այս :

Ո՛վ դուք Ադամայ որդիք , բերէ՛ք զխեղքան
ձեր 'ի վերայ . մտօք իմացիք ըզսուտ կեանքս ,
ու զմահու գայն 'ի վերայ : Զի քակէ զամէն
շինուածք , որ շինէ տէրն ոչ իմանայ . մեզ կայ
պատասխան տալու , ամէնի որ մէկ մի չմնայ :

Ի մէկ ալ գերեզմանն գրած էր ողբս այս :

Ո՛վ դուք Ադամայ որդիք , չլինի որ զանձ
մոռանայք . աստուած իւր բարեացն առատ ,
համբերէ՛ դուք զայն չիմացայք : Այլ դար-
ձիք 'ի պիղծ գործոցն , որ անանց հուրն չիմա-
նայք . մեք 'ի մեր անհուն բարեացն , քան
զպատանքն այլ իրք չտարաք :

Ի մէկ ալ գերեզմանն գրած էր ողբս այս :

Ո՛վ դուք Ադամայ որդիք , թափեցէ՛ք զգի-
նին 'ի ձեզնէ . զմարմինսըդ մի՛ պարարէ՛ք , այլ

Հողւոց բաժինն պատրաստեցէք: Որ երբ ճա-
նապարհ ելանէք, նա՛ դողումն ըզձեզ չխա-
տէ՛. զգոյշ և պատրաստ կացէք, որ երկան դեն
զձեզ չարգիլէ:

Ի մէկ ալ գերեզմանն գրած էր ողբս այս:

Գիտացէք քը չիկ քը չիկ, որ գնաց մեր օրն
՚ի մաղպուն . քանի ՚ի մեզ զարմանք թուի, գը-
նալոց եմք ներքև հողոյն: Արթնն և պատ-
րաստ կացէք, դատողին առէք պատասխան .
վայ այն Ադամայ որդւոյն, որ չունի խկի ահ
մահուան:

Ի մէկ ալ գերեզմանն գրած էր ողբս այս:

Ա՛յ իմ բարերար աստուած, աղաչեմ որ
զիս խրրատես . ծառայիս քո միտ դնես, զիս
յիմ մեղացն ալ ազատես: Ու ասս ինձ բարի
խրրատ, ու զիմ շատ մեղքն ոչ յիշես . դու
ես ողորմած աստուած, ընդ մեղաց ըզմարդ ոչ
դատես:

Ի մէկ ալ գերեզմանն գրած էր ողբս այս:

Ա՛յ Ադամայ դուք որդիք, զայն սարաք
զինչ աստ որ ունիք . յոյժ ցեղ ու ցեղ շատ
դատիք, աստ թողուք անդէն ոչ սանիք:

Գիտեմ Սողոմոն ասաց , զորքն կերայ զորքն
 խաբեցի . զոր սուլի ձեռօքս աղքատաց , ան-
 դէնն ես ամէն զայն գտի :

Այս բաներս՝ որ գրած էր ՚ի վերայ սա-
 պաններուն՝ զամէնն գրեցին , և եկին ՚ի տե-
 դիսն , և կապեցին սանդուխտ և եղին ՚ի պա-
 րիսպն : Ասաց մէկ մարդ մի՝ թէ ես ելանեմ
 ՚ի պարիսպն : Երբ ելաւ ՚ի պարիսպն՝ ծիծա-
 դեցաւ . ծափ էզարկ և ասաց , շապա՛շ շապա՛շ ,
 թէ ինչ աղուոր է քաղաքս . և անկաւ ՚ի քա-
 ղաքն ու մեռաւ : Մէկ մարդ մի ալ երէկ՝ ու
 ասաց ես ելանեմ ՚ի պարիսպն . զի այն մարդն
 թեթեախեւէք էր , չըկարաց զխեւէքն ՚ի վերայ
 պահել :

Ասաց Ամիրմուսէն , խելաց բան չէ՛ որ զիւր
 ընկերն մեռած տեսանէ և ինքն չըլախենայ :
 Ապա եօթը մարդ ևս ելան ՚ի պարիսպն , և
 ամենեքեան ծիծաղեցան . ծափ զարկին ու ան-
 կան ՚ի քաղաքն և մեռան : Ուշաթափեցաւ
 Ամիրմուսէն՝ և ելաց դառնապէս , և ասաց
 զողբս այս ՚ի վերայ պարսպին :

Պարիսպ ես դու աննրման , ընկեցեր ՚ի վայր
 զամենայն . մարդիկդ որ ՚ի քեզ ելան , քան
 զծաղիկ ՚ի վայր թափեցան : Ոչ եմ ես տէր

ամէնի, լինի թէ չարին թուեցան. զօրքս հաւասար կու դողան, յայս բանէս քաղաքդ աննրման:

Դարձաւ ու ասաց Տալիպն, կամիմ ես գընալ վասն զօրացդ: Ասաց Ամիրմուսէն, գնա՛ վասն նոցա, և վասն Խալիֆային սիրոյն. ապա իմ բանիս մի՛ գնար: Յայնժամ Տալիպն զիւր մալին կէսն աստուծոյ խոստացաւ. ու երբ ՚ի պարիսպն ելաւ՝ զաստուած յիշեց. ծիծաղեցաւ ու ծափ էզարկ, անկաւ ՚ի քաղաքն և ուշաթափեցաւ:

Յայնժամ Ամիրմուսէն ելաց յոյժ, զի գիտաց թէ մեռաւ: Տալիպն յուշ եկաւ, ձայն ետուր՝ թէ մի՛ լար, ես կենդանի եմ: Տեսաւ Տալիպն՝ որ ՚ի մէջ միոյ դռան ձիաւոր մի կայր կանգնած, ու գրած էր ՚ի վերայ ձեռին՝ թէ Ա՛յլ զպորտիս բեւո՛ն՝ երկոտասան անգամ շրջեա՛ն, և ապա բանաս զդուռդ: Աարդաց Տալիպն՝ և արար զոր գրած էր, ու եբաց զդուռն քաղաքին:

Յայնժամ էառ Ամիրմուսէն զկէս զօրքսն, և ՚ի քաղաքն մտաւ, և շուրջ եկին զքաղաքն. տեսան, զի մեռած էին ամենեքեան, ու փակած շուկայքն ամէն. սալ կապած էր, և շուրն շուրջ կայր ՚ի վերայ: Եւ ամէն փողոցի գլուխ

Բրքայ մի շինած էր, և ոսկի արծիւ մի դրած 'ի վերայ, և ջուրն ընդ բերանն ելանէր. ծաղկունքն անուշահոտ և գեղեցիկ: Մարդիքն 'ի գմբէթն նստած էին. ոսկին և արծաթն ակունքն ու մարգարիտն կուտած էր. և տէրքն 'ի մօտն մեռած էին և իրտած. երբ մարդ ձեռն հասցնէր՝ նա 'ի հող դառնային: Ո՛վ որ տեսնոյր՝ նա լայր ու սրտէն զչարն հանէր՝ որ 'ի միջէն 'ի դուրս ելանէր:

Յայնժամ ելան անտի ու գնացին 'ի թագաւորի դարպասն, որ ունէր երիս դուռս՝ քան զբերդի. մէկն՝ պղնձի, մէկն՝ արծաթի, մէկն՝ ոսկի: Տեսան զարմանալի շինուածք՝ որ այլ չէր տեսեր աչք մարդկան, ու զնորա նմանութիւն ոչ կարացին գրել: Եւ 'ի դուռն դարպասին կայր ձիաւոր մի, և 'ի մօտն Բրքայ մի. և 'ի հինգ կողմէ ջուր ելանէր 'ի նմանէ, յառաջէն ծաղկնոց էր, ու մրգաբերաց ծառ և տունկ բազում: Եւ թէ մարդ 'ի մէջն մըտանէր՝ նա յանուշահոտութենէն գինովնար, և վարդն ըմբի չափ էր կանգնէր, և մարդիքն 'ի շուքն մեռած էին: Յայնժամ մտան 'ի յայն գմբէթն, որ քաղաքն ամէն յառաջէն էր. և ասաց Ամիրմուսէն զողջս զայս 'ի վերայ քաղաքին:

Աւանդ քեզ անդուոր քաղաք , որ չըկայ 'ի
 քեզ կենդանի . ամէնքն են 'ի հող դարձեր ,
 մարդ չըկայ բարիքն է 'ի լի : Ա՛յ վնյ , թէ
 չէաք տեսեր , սոցա խեղճն 'ի յայսմ վայրի .
 վախեմ թէ այսպէս լինիմք , քան զսոսա ողորմ
 ու լալի :

Ապա մտան 'ի տէրկեահն ու տեսան ազգի
 ազգի սէհ կապած . ըռումք և չարխի աղեղ
 լարած , ու թրեր . և բլատկի ասպարք , ու քէ-
 շիկ : Երբ 'ի դարպասն մտան , տեսան որ մար-
 դիքն նստած ու մեռած , բայց փրտած չէին ,
 այլ կաշին սևացեալ էր 'ի վր : Տեսաւ Ամիր-
 մուսէն ու զարմացաւ , և ասաց զողբս այս :

Եկայք նոր զարմանք տեսէք , որ եղաք մեք
 անսխիթար . լաւ էր թէ չէաք տեսեր , այս
 տեսիլս 'ի լաց մեզ արար : Ես փառք արարչին
 ասեմ , որ ինքն է աստուած բարերար . մի թէ
 յարութեան աւուրն , ոչ ձգէ 'ի հուր և 'ի
 խաւար :

Գնացին 'ի մէկալ դուռն՝ ու տեսան զքա-
 մարն բարձր ու զարմանալի . խայտուածքն
 ամէն կարմիր ակունք էր , որ զնմանութիւնն
 գրեւ ոչ կարացին :

Եւ ՚ի վերայ շէմին դրած էր ողբս այս :

Այս դրունս գեղեցիկ աղուոր , գովելի մեծ արքայական . չկարէ շինել այլ քան զայս , զի այս շինուածքս է աննման : Այ վայ դուք սոցա աուէք , որ չեղաւ նա մեզ բնակարան . դընացաք և ասա թողաք , զանցաւոր շինուածքըս ամենայն :

Ի ներս մտան ու տեսին՝ զի երեք սիւն կայր ՚ի մէջ դարպասին . մէկն՝ լուրջ , մէկն՝ կարսիր , մէկն՝ կանաչ , ու գմբէթ մի ՚ի վերայ սեանցն ՚ի յոսկւոյ ծեփած : Եւ ՚ի յայն գըմբէթն ոչ քարեղէն շէնք տեսան , և ոչ փայտեղէն . այլ ամէնն ոսկի և արծաթ էր :

Եւ սիւն մի ևս կայր ՚ի մէջ դարպասին , որ եռեսուն կանգուն բարձր էր , և ոսկի գըմբէթ մի ՚ի վերայ . և ոսկի առիւծ մի զուգած էր քան զկենդանի , ու լուսաաու ալունք դըրած յառիւծն , որ երբ գիշեր լինէր՝ նա ալունքն լոյս տային քան զարեգակն : Եւ ոսկի տախտակ մի դրած էր ՚ի վերայ աթուոյ միոյ , և գոհար ալունք ՚ի նմա մարգարտով յօրինած : Եւ գեղեցիկ թագուհի մի ՚ի վերայ աթուոյն նստած . և խալիչայ մի փուռ մարգարտով լցած ՚ի ներքև թագուհւոյն : Եւ

կայր 'ի գլուխն թագ մի գեղեցիկ և աննման
 յօրինած , որոյ զձեն գրելոյ չըկարացաք : Եւ
 'ի վիզն շարոց մարգարիս մեծ քան զաղաւնոյ
 ձու , և 'ի մէջ շարոցին լուսատու ակն մի .
 և կայր գլխադիր մի նման սիրամարգի գոյն
 զգոյն : Եւ այն թագն որ 'ի գլուխն էր՝ չորս
 ակն կայր 'ի նմա . մէկն՝ կարմիր , մէկն՝ լուրջ ,
 մէկն՝ կանաչ զըմբուխս , մէկն՝ լուսատու ակն
 աննման , որ մարդ չըկարէր հայիլ . և այնպէս
 երևէր թէ թագուհին յայն օրն էր մեռած :
 Տեսաւ Ամիրմուսէն՝ ու խիստ ելաց , և ասաց
 զողբս զայս 'ի վերայ թագուհւոյն :

Անգին աննման գոհար , վայ դու էր ես
 անպիտացեր . դու քան կենդանի մարդոյն ,
 մարմնիդ էր հանց հողէ դարձեր : Քան զքո
 աղւոր աչքերդ , հողեղէն մարդոյ չեմ տե-
 սեր . վայ տամ ես հազար բերան , քո քաղա-
 քին որ չէ վայլեր :

Ապա ասաց զողբս զայս 'ի թագուհւոյն բերնէն :

Եզընաբ սիրելիք որ կայք , մի խարիք 'ի
 յայսմ աշխարհիս . այս կենացս մի հաւատայք ,
 ամէնքդ օրինակ առէք զիս : Չինչ որ Ադա-
 մայ որդիք , ճնանին ամէն դան առ իս , դու

Չանա՛ բարի գործել , որ շինի՛ ՚ի հուրն առաքիս :

Յիւր բերնէն :

Ինչ մարդ որ այլ զայս տեսնու , և այս կէնացս նա հաւանի . կամ աստէն իւր տուն շինէ , և անհոգ ՚ի ներս բնակի : Չաւտամ թէ բնաւ այն մարդ է , կամ ունի միայք բանականի . անբան և անասուն է նա , խոտակեր և չորքոտանի :

Ի Թագուհւոյն բերնէն :

Գէրի Ադամայ որդի , էր դատիս զամէն հետ մեղաց . յիշեա՛ զահեղ դատաստանն ու ծեծէ ըզրափկդ ու լաց : Չիս տես և քեզ ճարարա՛ , և փախի՛ր դու ՚ի մեղաց . թէ չէ աներեկ աւուրն , դուն այրիս ՚ի հուրն յանանց :

Յիւր բերնէն :

Ա՛յ իմ պատուական դըշտոյ , որ դու ես ողորմ ու լալի . այսչափ քո անհուն բարիքդ , չօգնեցին քեզ փոքր ՚ի շատէ : Մեռար դու և ՚ի հող դարձար , ու թողէր զամէնն ՚ի յերկրի . մարդն որ իմաստուն լինի , նա քեզնով ինքն խրատի :

Իբրև լուեցին ասելու՝ ասաց Տախան ընդ Ամիրսուսէն՝ թէ երբ այսպիսի մեծ մարդոյ զաւակ մեռանի, յաչքն անդիկ դնեն՝ որ եռայ, ու զմարմինն զմռեն՝ որ փափուկ մնայ և չփրաի: Եւ կայր առաջի թագուհւոյն երկու մարդ կանգնած. մէկն սև, մէկն ճերմակ. ՚ի ճերմակ մարդոյն ձեռն թափած թուր, և ՚ի սև մարդոյն ձեռն լաւ թօփուղ մի: Եւ կայր ՚ի դիրկն թագուհւոյն տախտակ մի՝ ոսկի լաւ ճիւղէրտով գրած բանս այս, զոր կարդաց արեւորն այսպէս:

Անունն աստուծոյ օրհնեալ, որ է ինքն միշտ կենդանի. իշխան է երկնի և երկրի, արարիչ աստուած ամէնի: Հողածին անմահ չլինի, բայց միայն ըստեղծօղն ամէնի. անպէտք է փառքն աշխարհի, քան երազ և մութ գիշերի: Ես մեծ թագուհի էի, դուսարը հըզօր թագաւորի. ունէի իշխանութի, որ մարդ չունէր վերայ երկրի: Բայց մահն երբ առիս եկաւ, զամէն ինչս ես ատեցի. զի ատեալ իրաատեցար՝ էք, յամ չարեաց դ՛ուք փախերուք:

Գրած էր խրատս այս:

Ո՛վ զիս ատնու, թող իւրն ողորմի ու խրատուի, տասն և եօթը տարու էի ես, որ

երբ մեռայ: Մահն ոչ 'ի թագաւորէն վա-
խէ, և ոչ աղքատին ողորմի: Ո՞ւր է Ադամ,
որ աստուած իւր ձեռօքն ստեղծեց. կամ ո՞ւր
է Սողոմոն արքայն. կամ Աղէքսանդր թագա-
ւորն, նա որ սիրեց երեք կողմ աշխարհիս.
բայց զայս քաղաքս ոչ կարաց առնուլ: Ինձ
այն մնաց՝ որ իմ ձեռօքն ետու աղքա-
տաց: Գուք որ կենդանիքդ էք՝ մի՛ թո-
ղուք զձեր ասրանքն այլոց, որպէս և մեք
թողաք. այլ ձեր ձեռօքն յայս կեանքս տը-
ւէք, և զայն կեանքն գնեցէք:

Գրած էր ողբս այս:

Մարդն որ իմաստուն լինի, 'ի յիւր գոր-
ծոցն իսկ ճանաչի. որ զամէն բարի գործէ, 'ի
չարէն 'ի զատ նա փախչի: Զ'ի այս մեծու-
թիւնս է սուս, և փառքն շուտով կութա-
փի. որպէս թագաւորք եղէն, որ յառաջ
զանուեն ասացի:

Ես Զմբուխո թագաւորին դուստրն եմ.
մեր դարպասին բուրգերն ամէն ոսկի և ար-
ծաթ էր: Եւ 'ի մեր սարերն բազում ոսկե-
հանք կային. ակն և մարգարիտն 'ի մեր ծովէն
կու ելանէր: Յառաջ մեռաւ իմ մայրն, և
ես եօթը տարեկան մնացի, տասը տարուն 'ի

վեր' կալայ զաթոռ թագաւորութե՛ն ու եօթը տարի վարեցի , յայնժամ հասաւ ինձ մահ : Եւ յորժամ կարդաց ալևորն՝ ելաց Ամիրամուսէն , և ասաց զողբս զայս :

Ասանւորիս այս բարիքն , չէ՛ իսկի մարդոց մնացական . բայց մարդն իմաստուն լինի , որ ձրի բաշխէ զամենայն : Մարդիք քան զգարնան ծաղիկ , փրթթին անդէն չորանան . երանի հազար բերան , արդարոցն աւուր յարութե՛ն : Ո՛ւր են թագաւորք երկրի , որ յառաջ զաշխարհ շինեցին . քանի քաղաք և բերդեր , թողին շինուածովք ու գնացին : Երբ մահն 'ի վերայ եկաւ , յամէնէն դատարկ գնացին . և յիւրեանց անհուն գանձէն , հետ իւրեանց մէկ փող մի չառին :

Գրած էր բանս այս :

Անձրե չեկաւ 'ի մեր աշխարհս , վասն որոց չորացան ամէն արգասիք և ցորեանք : Յայնժամ շատ գանձ , և պատուական ակունս և ազգի ազգի կերպաս ուղարկեցաք յամենայն երկիր . և նովաւ շուրջ եկին , և ոչ գտան ցորեան , և դարձան դատարկ 'ի տուն : Տանեին զոսկին ընդ հացի սային և ոչ գտանէին , ոչ գնով և ոչ անողին : Երբ ամէնուն յոյսը կտու

ընցաւ՝ որ մարդ որ ուժով էր՝ կերաւ զան
 նուժն: Պարօնն զճառայն ուտէր. և աղքատ
 քնն զմխտանս: Եւ ապա գիտացաք՝ թէ բար
 կութիւն տեսան է ՚ի վերայ մեր, յանձն ա
 բարաք զմեզ աստուծոյ:

Գրած էր խրատս այս:

Խրրատ մի լըսէ յինէն, այ յիմար խելօք
 դու արխմար. գիտեմ մեռանիլ պիտի, որ չը
 կայ յաշխարհիս քեզ ճար: Չքո սիրտդ ողոր
 մած պահէ, զի ունիս գնալ դու յերկիր
 օտար. ՚ի պահս և ՚ի յաղօթս կացիր, զի տա
 պանն է մութն ու խաւար:

Գրած էր բանս այս:

Քաղաքս երկնաչափ աստեղօք էր շինած,
 քան զայս այլ ամուր քաղաք չըկայր ՚ի վերայ
 երկրի: Ո՛վ որ աստուծոյ հրամանաւն յայս
 քաղաքս որ մանու՛ռ սկի և արծաթ առնէ
 որչափ և պիտի. ապա զայս որ յիմ վերայ կայ՝
 մի՛ առնոյք ձեր աստուծոյ սիրոյն համար:
 Այսչափ ինչս որ յիմ վերայ է՝ ինձ թողէք.
 յիմ ամէն թագաւորութենէս զայս առեալ
 եմ ինձ բաժին: Երդմնեցուցանեմ զձեզ ՚ի
 յաստուած կենդանին. որ չառնէք իմ մարմն

նոյս մեաս , և կամ զիս յիրար սաք ու խոռէք :
 Ա՛վ իմ աղաչանացս լսէ՛ , ա՛ծ իւրն ողորմի ,
 ապա թէ չէ՛ չըհամբերէ աստուած անխեղձ
 և անօրէն գործոցն : Լսեց Ամիրմուսէն ու
 շատ ելաց . և ասաց զբանս զայս ՚ի թագուհւ
 ւոյն բերնէն :

Ըզբարոզն զոր դու գրեցեր , իմաստուն
 ճարտար թագուհի . յայս ժամս ինձ շատ
 խեղձ թուեց , քո գանկասն որ ես լսեցի :
 Բայց յայս անչափ գանձերէս , մեզ դատարկ
 գնալ չըպիտի . քիչ մի մեզ վայելա առնումք ,
 ու թողումք զայն ում որ գիպի :

Յայնժամ հրամայեց զօրացն , բերէք զինչ
 որ աման ունիք , և լցէք որչափ և պիտի ակն
 ու մարգարիտ և ոսկի : Ասաց Տալիան , ես
 զայս ինչքս՝ որ ՚ի վերայ թագուհւոյս է ,
 կառնում , ու Խալիֆային ընծայ կու տանիմ :
 Ասաց Ամիրմուսէն , ամենայն իրօք որ ոչ եմք
 կուշտ , նա և ոչ այնով կշտանամք : Ասաց Տա-
 լիան , աստուած զոսկին ու զարծաթն ու զպար-
 զեքն և զապրանքն՝ կենդանեացն է աուեր
 և ոչ մեռելոց : Այլ սորա պատանքն իւրեան
 բաւական է , զի հող է և ՚ի հող դառնալոց
 է . վասն որոյ ես կառնում զայն ակունքն ու
 տանիմ Խալիֆային ընծայ :

Ասաց Ամիրմուսէն զայս խրատս :

Ինչ մարդ որ ազահ լինի , նա փութով
ինքըն կու կորի . հազար խրատ քեզ ասեմ , մի
առներ այ իմ սիրելի : Անպարտ եմ ՚ի յայդ-
բանէդ , մի առներ դու բան խոտելի . չլինի
աղօթք թաղուհւոյն , որ ՚ի վերայ քո կատարի :

Նաև ասաց Ամիրմուսէն՝ թէ իմ բանիւս
մի առնուր զայն ՚ի նմանէ . ես անպարտ եմ
՚ի յերդմանէն , որ թագուհին էր գրեր : Չլսեց
Տալիպն զխրատն , այլ գնաց յառաջ՝ և կամե-
ցաւ առնուլ զթագն ՚ի գլխոյ թագուհւոյն :
Իսկ այն սև մարդն որ զթօփուզն ունէր՝ էզարկ
՚ի վերայ թիկանցն ու ընկեց զՏալիպն . և ճեր-
մակ մարդն որ զթուրն ունէր՝ էզարկ զգը-
լուխն ու կարեց :

Իսկ Ամիրմուսէն զարմացեալ փախեաւ ՚ի
զատ . և ամսոսաց զՏալիպն որ կորաւ իւր յի-
մարուքն , ու չսեց խրատու իւրն : Եւ վասն այն
ասաց Ամիրմուսէն զողջս զայս ՚ի վեր Տալիպին :

Չ խրրատն զոր տուի ես քեզ , չսեցիր այ
իմ սիրելի . ո՛վ որ չողորմիր դորա , նա նրման
է սատանայի : Ո՛վ շատ գանձ ժողովել կամի ,
նա յիւրմէն շուտով կու զըրկի . ինքըն կարօ-
տած մընայ , ՚ի գանձէն զոր ինչ ունիցի :

Յայնժամ ելաւ Ամիրմուսէն 'ի գմբէթն
'ի դուրս: Եւ բարձին ամենեքեան որջափ և
կարացին՝ զբազում ակնս և մարգարիսս և ոս-
կիս, և զոր ինչ գտինն: Եւ երբ բարձան ամե-
նեքեան՝ զմէկ գանձի ապրանքն ու զոսկին չկա-
րացին ամէնն բառնալ: Ասացին թէ՛ զինչ որ 'ի
Պաղտատ մարդ կայ ու գրաստ՝ զայս ապրանքս
ու զոսկիս չկարեն վերցնել 'ի քաղաքէս:

Եւ փակեցին զդուռն, ու գնացին ընդ ծո-
վեզերօքն քառասուն օր: Եւ տեսան բարձր
բլուր մի, և 'ի վերայ բլրին սև մարդիկք այ-
լադէմք. և 'ի ներքոյ բլրին քար կայր, իջաւ
Ամիրմուսէն անդ. և փախեան սև մարդիքն.
Շատ մարդ 'ի ներքոյ քարին մտան, և այլք 'ի
լերինն թաքեան: Երբ պահ մի կացին՝ եկին
սև մարդիքն, ու հայէին 'ի վերայ նոցա: Գնաց
ալևորն՝ ճայնեաց և հասկացոյց. և սևերն
գնացին բերին զթագաւորն իւրեանց 'ի մօտ
Ամիրմուսէին. և իւրեանց հալաւն սև էր ու
մազեղէն. նրստան կերան ու խմեցին և ուրա-
խացան:

Ասաց Ամիրմուսէն ցալևորն՝ հարցից թա-
գաւորին, թէ մարմնաւոր էք թէ անմարմին:
Երբ հարցաւ՝ ասաց թագաւորն, մեք մարմ-
նաւոր եմք յԱրաբիայի որդւոցն:

Ասաց Ամիրմուսէն , զի՞նչ հաւատք պաշ-
տէք : Ասաց սե պարոնն՝ թէ երեւցաւ ՚ի
յայս ծովուս մարդ լուսեղէն , որ ամենայն
անձն ըյս տայր , և լուսաւորէր զերկին և
զերկիր : Եւ ՚ի մեզ ասաց , լսեցէք պարօն որ-
դիք՝ և ՚ի միս առէք , հաւատացէք արարչին
երկնի և երկրի՝ ծովու և ցամաքի , սարսեցէք
՚ի նմանէ , զի նա՛ զամենայն տեսանէ , և նա
միայն է աստուած կենդանի . աղօթք մատու-
ցէք նմա հանապազ . և աո՛ւք զողորմութիւն
աղքատաց : Նա՛ խրատեց զմեզ և ուսոյց մի
աստուած պաշտել . և ինքն վերացաւ լուսե-
ղէն ամպօք յերկինս : Եւ մեք յամէն օր եօթը
անգամ աղօթք մատուցանեմք , և զաստուած
փառաւորեմք , ու գոհանամք զնմանէ :

Ասաց Ամիրմուսէն զբանս զայս :

Քեզ փառք արարիչ աստուած , որ յամէն
տեղ օրհնաբանիս . բանիւ դու բարձեալ
ունիս , զամենայն երկիր և զերկինս : Այլ և
յԱդամայ որդւոցս , ՚ի չարեաց զատիլըն
կամիս . զի աներեկի աւուրն , յոր լսեն նոքա
զեկայքն առ իս :

Ապա եհարց զսե թագաւորն՝ թէ յայն
կուժերէն՝ որ Սողոմօն բարկացաւ դիւացն ,

և ՚ի պղնձէ կուժն էած , և ՚ի ծովն ձգեաց ,
 ասա գտանի՞ թէ ոչ : Ասաց սև թագաւորն՝
 թէ բազում որսորդաց կարօտ է այդ բանդ ,
 զոր կամիս անսանել : Ասաց Ամիրմուսէն՝
 մեք այն կուժերուն համար եմք եկեր յայս-
 քան ճանապարհս : Յայնժամ հրամայեց սև
 թագաւորն որսորդացն , որք բերին երկոսա-
 սան կուժ առաջի Ամիրմուսէին , զոր առեալ
 բազում ուրախութեամբ եդ ՚ի մէջ ոսկի սըն-
 տուկին իւրոյ : Եւ խիստ պատիւ արար սև
 թագաւորին . խիլաթեաց և ետուր նմա շատ
 ոսկի , ակունս ու զօրեղ ձիանք : Շնորհակալ
 եղև սև թագաւորն ու չէառ , ասաց թէ այդ
 մեզ չախտի . ոչ ծախեմք և ոչ հեճնումք . մերն
 այն է որ որս առնումք զմիսն ուտեմք , և զմոր-
 թին հագնիմք և զաստուած փառաւորեմք :

Յայնժամ ՚ի յորս ելաւ սև թագաւորն
 զօրօքն հանդերձ . կէսն ՚ի ծովու , և կէսն ՚ի
 ցամաքի , որք որսացին ու դիզեցին : Եւ այլ
 բազում հրեղէն ձի հանին ՚ի ծովէն , և մար-
 դադէմ գազանս և անասունս՝ որ ոչ լինի յայլ
 երկիր , զոր բերեալ ետուն Ամիրմուսէին :
 Այլ ՚ի յամէն ուրբաթի գիշերն գայր ՚ի
 ծովէն ՚ի դուրս ահեղագոչ ձայն մի բարձր՝
 որ ասէր , փանք աստուծոյ այնմ որ սանդեց

զերկիրնս և զերկիր , և փառք իւր մեծութենն՝
որ զամենայն կենդանի մահկանացուն է ստեղծ
ծեր , և ինքն միայն է անմահ : Լսեց Ամիր-
մուսէն ու եհարց զսև թագաւորն , ո՞վ է այն՝
որ յամէն ուրբաթ գիշեր կու փառաբանէ
զաստուած : Ասաց թագաւորն , մեք ոչ ինչ
տեսանեմք՝ բայց զձայնն կու լսեմք :

Ասաց Ամիրմուսէն զօրհնութիւնս զայս :

Աստուած արարիչ բարի , քո անունդ միշտ
փառաբանի . տէր ես դու եթկնի և երկրի ,
անսկիզբն և անիմանալի : Քերին զօրքն ըզքեզ
օրհնեն , անդադար և անլուելի . այլև երկրա-
ծինքս ամէն , խոնարհեալ քեզ երկրպագեն :

Յայնժամ սև թագաւորն երկու լաւ մարդ
դրաւ զհեա Ամիրմուսէին , որ շնորհակալ ե-
ղև , և ողջունեցին զիրեարս . և տարան զԱմիր-
մուսէն կարճ ճանապարհով յերկիրն Ակա-
նացւոց . որ շատ ոսկի և արծաթ , և սկունս
պատուականս ուղարկեց թագաւորին . և թա-
գաւորն չէառ . ասաց թէ զայն կուժերն
խնդրեմ տեսանել :

Ապա Ամիրմուսէն երկու կուժ ուղար-
կեց թագաւորին . և թագաւորն երբ եբաց

զըերան կուժերուն, ելաւ սև մուխ ու բարձ-
րացաւ յօգն, և եղև ՚ի կերպարանս գիշա-
տեսիլ մարդկան: Աղաղակեաց և ասէ, Սո՛ղոմ
մօն Սո՛ղոմօն որդի Գաւթի մարգարէի, այլ
չգործեմ զոր ինչ գործեցի, և կամ ՚ի հրամանս
քո • զի գիտաց դէն թէ դեռ ևս Սողոմօն
կենդանի է. և յոյժ զարմացաւ թագաւորն:

Ապա տարաւ Ամիրմուսէն զալևորն առա-
ջի թագաւորին և ասաց, այ՛ մեծագոր թագա-
ւոր՝ որ զայս իմաստուն ծերս զհետ մեզ
դրիր, սո՛ տարաւ զմեզ և եբեր: Եւ եօթն
ուղաւ բարձած ոսկի և արծաթ ետուր ալևո-
րին՝ Ամիրմուսէն. և թագաւորն խիլաթեաց
զծերն, և զԱմիրմուսէն ևս լաւ պատուեաց,
և զօրեղ ձիանս ետուր և ուղարկեց ՚ի Մսրը:
Լսեց Մսրայ տէրն և ուղարկեց մարդ առ
Ամիրմուսէն, և ետ բերել առաջի իւր, և յոյժ
պատուեաց զնոսա: Ապա ելան անտի և գնացին
յերկիրն իւրեանց, և հասան ՚ի Պաղտատ:

Խալիֆայն ՚ի դէմ ելաւ և մեծ ուրախու-
թիւն արարին. և բաշխեց Խալիֆայն աղքա-
տաց շատ ողորմութիւն վասն նոցա դալուն,
զի երեք տարի էր՝ որ գնացեալ էին. և եհարց
զԱմիրմուսէն և նա սկսաւ խօսիլ կարգաւ
թագաւորին: Զսողոմօնի կուուիլն՝ որ քաջն

ասաց , այլ և զքաղաքին . և զԹագուհւոյն
 գիրն կարդացին առաջի Խալիֆային . ապա շատ
 ուրախացաւ Խալիֆայն 'ի նոցա գնալն և 'ի
 գալն , և ասաց՝ Տալիսն ո՛ւր է . և Ամիրմուսէն
 պատմեց զմահ նորա : Իբրև լեց Խալիֆայն՝
 ասաց վայ նմա , որ իւր յիմարութեամբն կոր-
 եաւ . և ասաց զողջս զայս 'ի վերայ նորա :

Ո՛վ իմ արևմար վէզիր , է՞ր կորար ընդ վայր
 ու նանիր . դու զիւրեանքն իսկ տեսար , և ըզ
 գանկատն ստոյգ լեցիր : Մի թէ դուն անմահ
 էիր , որ ըզնորա թագն խլէիր . Մուսէն քեզ
 խրրաս ետուր , ոչ լրեցիր զքեզ կորուսիր :

Յայնժամ հրամայեց Խալիֆայն՝ թէ բե-
 րէք զկուժերն , որ տեսնում : Բերին զկուժերն
 ու բացին առաջի նորա . և ելան 'ի նոցանէ
 որպէս զսև մուխ քան զառաջինն : Եւ երբ
 տեսաւ զայն՝ զարմացումն կալաւ զինքն . և
 ասաց փառք աստուծոյ , որ մեծ պատիւ էր
 այս Սողոմոնի . որ իւր իմաստութեամբն 'ի
 յայս նեղութիւն և 'ի բանտս էր դրեր զդեքն .
 այսպիսի շնորհք հողեղինի չէր տուեր աստ-
 ուած՝ բայց միայն Սողոմոնի : Եւ ապա հրա-
 մայեց որ բերին զամենայն ոսկին և արծաթն ,
 զապրանքն և զակունսն և զմարդարիան առաջի

իւր . և տեսեալ զնոսա զամենայն՝ շատ ելաց ,
և ասաց զողբս զայս :

Աւաղ տամ հազար բերան , քո տիրոջն
որում դուն էիր . որ յայսչափ անհուն գան-
ձէս , մէկ պատանք մի մէն է տարեր : Երդամ
աղաչեմ զաստուած , որ տայ ինձ աղէկ թաղ-
տիր . որ աստ տամ և անդ առնում , ու չթո-
ղում այսպէս ՚ի յերկիր :

Ապա հրամայեց՝ զոր ինչ ապրանք և ոսկի
բերած էին , զամէնն բաշխեց աղքատաց . և
ասաց՝ Թող աստուած զայս իւրեանց տիրոջ
հոգւոյն համարի : Ապա բերել ետուր և ինքն
զիւր ինչսն և զարծաթն և զոսկին և զապրանքն
ամենայն , և բաշխեց աղքատաց : Միայն մէկ
կտաւ մի էաւ , և ասաց թէ՛ զթագուհւոյն
խրատն լսեմ . աստ տամ , և անդէնն գտանեմ
յաստուծոյ : Զոր ՚ի զնսանն էր՝ արձակեց ,
զժառայսն ազատեց , և զհարկն վերցոյց յաշ-
խարհէն : Եւ պարոն մի եղիր ՚ի յիւր տեղն .
և ինքն շինել ետուր սենեակ մի աղօթանաց .
և եմուտ ՚ի ներս , և եօթն տարի աղօթեաց .
և ապա փոխեցաւ յաշխարհէս :

Եւ Ամիրմուսէն ալ ետուր զպարօնութիւնն
իւր որդւոյն , և բաշխեց զիւր ինչսն և զոսկին

և զապրանքն նամ աղքատաց . հազաւ մազեղէն
 և մաշկեղէն , և գնաց ՚ի լեաուն բնակեցաւ
 ապաշխարութեամբ մինչև ՚ի մահ : Այսպէս
 փոխեցան ՚ի սուտ և ՚ի փուտ յաշխարհէս , և
 հասին ՚ի յաւիտենական կեանքն և յերկնային
 ուրախութիւնն ՚ի քս յս ՚ի տէր մեր . որ է
 որհնեալ յաւիտեանս յաւիտենից , ամէն :



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՅԱՂԱԳՍ ՓԱՀԼՈՒԼ ԹԱԳԱՒՈՐԻՆ

Եր սա մեծ թագաւոր և տէր արևելե
 եան աշխարհին , և էր իմաստուն և առաքինի :
 Սիրէր զաղքատութի , և ասէր զայս կեանքս
 և ասէր՝ փանօք աստուծոյ կենդանւոյն՝ որ
 կայ և մնայ յաւիտեան . նա և ասէր ընդ իւր
 անձինն զբանս զայս :

Չարժէ այս կենացս իրքն , այն կենաց ոչ
 մէկին մին մազ . յորժամ բաժանի հոգին , կը
 մրնայ շատ մարդոյ վրուազէ Է՞ր կամիս սիրել
 զայն իրքն , որ չգայ զհետ քեզ ՚ի վազ . արմ

դու ինքնին քեզ զճար, և ժողովէ զբարին ա-
նանց: Այնպէս դու բարի գործէ, և բաշխէ
զինչդ աղքատաց. զի յօրն մահուն հոգիդ,
մարմնդ չառնէ վազ ՚ի վազ:

Եւ ՚ի ժամ աղօթիցն հանէր զամէնն ՚ի
դուրս և ինքն միայն մնայր, և աղօթս առնէր
՚ի վերայ ոսկի աթոռոյն. և դարձեալ ասէր
ընդ անձին իւրում զբանս զայս:

Մի՛ յաղօթից ծոյլ կենար, դի՛ր ուղորդ-
հեա աստուծոյ սէր. յիշեա՛ զիւր անեղ ա-
նունն, որ փրկիս որպէս Ադամն էր: Յիւր
ձեռքն է երկինք Լերկիր, ըստեղծօղ և տէր
ամէնի. ջանա՛ խնդրել դու զբարի, որ փրկիս
՚ի հրոյն գեհեհի:

Ամէն օր զիւր սովորական աղօթսն առ-
նէր. և օր մի հայեցաւ ՚ի դարպասն ՚ի վեր,
և տեսաւ մէկ մի ՚ի ձև իւր ուղտապանին,
և ասաց՝ քեզ ո՛վ հրամանն եա, որ յայդ տեղն
ելեր: Ասաց այն մարդն, ես ուղտապան եմ
և զուղտերս կորուսեր եմ, աստ որոնեմ գը-
տանեք: Ասաց թագաւորն՝ ի՞նչ կանէ ուղտն
՚ի վերայ դարպասին, յորում կամիս գտանեք:
Եւ նա ասաց՝ ապա դու ո՞րպէս կամիս զանձ
գտանել ՚ի վերայ ոսկի աթոռոյդ, և ՚ի վերայ

փեարալից բարձիդ , և 'ի մարգարտաշար գա-
հոյդ : Այդ աղօթքդ չէ՛ ընդունելի աստու-
ծոյ . այլ արի՛ , էջ յաթոռոյդ , և եկ 'ի վերայ
մոխրոյն , և այնպէս երկրպագէ՛ աստուծոյ , ու-
րով գասնես զողորմութիւնս : Եւ արա ասաց
զբանս զայս , և անյայտ եղև :

Երկրպագեան անմահ բանին , թապլեցն
զերեսդ 'ի հողին . զի այն սատեղծ գբեզ 'ի բա-
րին , և նման արար իւր պատկերին : Չայս
կեանքս քանի գու սիրես , անձար երթաս
ներքև հողին . մի՛ անշահ կենօք կենար , մի՛
փոխեր զոսկին պղնձին :

Ապա իմացաւ թագաւորն , որ հրեշտակ
էր մարդն այն . և անկաւ զեղջ յիւր միաքն ,
և ելաց գառնասպէս . և իջաւ յաթոռոյն 'ի
գետին , և երկիր եպագ աստուծոյ : Եւ թէպէտ
ասէր զիւր կեանքն , այլ սուելի ատեց այնու-
հետև զաշխարհս և զմեծութիւնն , և ասաց 'ի
վերայ անձին իւր զբանս զայս :

Չանամ թէ ես հոգիս սիրեմ՝ , մարմինս ինձ
միշտ ասց 'ի խափ . զինչ որ խոյանայ բաղէն ,
կաքաւքն չանկանին 'ի յափ : Առտեցաւ առ իս-
շատ մեղք , ու՛յ անձրև որ գայ տարափ . խոցվե-
րեմ՝ մահու սրով , և եղերեմ զինչ որ շողափ :

Եւ կոչեց զիւր մեծամեծսն և զիշխանսն ,
 և երբեր զիւր որդիսն , և նստոյց առաջի նոցա
 ՚ի յաթոռն իւր , և նոքա ոչ կամեցան . և նա՝
 ուժովն և իմաստութեամբն հաւանեցոյց զիշ-
 խանսն և զզօրսն : Եւ ինքն գաղտարար ելեալ
 ետ զանձն իւր յաղքատութի . և ելաւ յաշ-
 խարհէն իւրմէ , և եթող զթագաւորութիւնն
 վասն սիրոյն աստուծոյ . և ասաց ընդ իւր ան-
 ձին զբանս զայս :

Յիշեան զարարիչն աստուած , տո՛ւր հոգ-
 ւոյդ առնել պատարագ . ընդ մութն է՞ր կա-
 միս գընալ , երբ աստէնս լինի քեզ ճարակ :
 Ազմարմինդ քանի սիրես , և զհետ իւրն եր-
 թաս կամակ . ընկերք քո գնացին աստի , բնա-
 կեցան ՚ի սունն անքանակ : Ես քեզ ամէն օր
 ասեմ , հասիր շուտ նոցա դու միակ . թէ չէ
 եղկելի հոգիդ , առաքի ՚ի հուր և ՚ի կրակ :

Ապա գնաց աշխարհէ յաշխարհ , և եհաս
 ՚ի Պաղտատ . և եմուտ ՚ի քաղաքն՝ և կամեցաւ
 մնալ անդ ՚ի կերպարանս աղքատի մուրալու :
 Եւ մարմինն նեղէր զինքն ՚ի կողմանէ ուտելոյ
 և ըմպելոյ և ագանելոյ . զի սովոր էր ՚ի սէր
 աշխարհիս՝ կեցեալ ՚ի սունն արքունի : Ապա
 գտաւ հնարք , և երթայր ՚ի շուկայն , և լինէր

սուտ խնէ: Եւ մարդիքն ծեծէին զինքն, և
տղայքն զհետ երթային և ներդէին. և ինքն վա-
րէր և ասէր ՚ի մէջ մարդկան զբանս զայս:

Մարդիք մի անհոգ կենայք, ձեր մեղաց
զաղարն լըւացէք. ողորմեցէք աղքատաց, և
այնով ձեր մեղքն քաւեցէք: Դարձիք ՚ի
մեղաց ճանախն, և անդէն ձեզ սուն շինե-
ցէք. մի թողուք ՚ի կից ներդելոց, վեր զմար-
մինսդ ՚ի կամաց հանէք:

Եւ յերդէգն հեծնոյր, ՚ի վայր և ՚ի վեր վա-
զէր, և ասէր բան զարմանալի: Ասէին մար-
դիքն որք զհետ երթային՝ թէ մարգարիսն ՚ի
բերանոյն ՚ի վայր կը թաբի, և ոչ գիտէ թէ
զի՛նչ ասէ. հազար սուաղ խելօք խուճարիս:
Եւ ապա դրին իւր անունն ֆահլուլ. և նա
եղև ջրկիր՝ և ջուր կրէր ՚ի շուկայն. և տային
իւրեան հաց և փող. այլ նա զամէնն տայր
աղքատաց. և ասէր զբանս զայս:

Աղքատսիրութիւն և պահք, և աղօթքն
ընկերք են միմեանց. սիրէ՛ զայս երեք բարիս,
որ փրկկիս ՚ի մեծ տանջանաց: Մի զմարմինդ
՚ի ձեռքդ առնուր, կը գընան օրերդ ՚ի ձե-
ռաց. այս օրերս որ մեք ունիմք, կը հատնին
և կերթան ՚ի բաց:

Աւուր մի երթայր 'ի շուկայն 'ի վայր ,
 մէկ մի խլեց զիւր փակեղն 'ի գլխոյն՝ և փախ-
 եաւ : Եւ գնաց Փահլուլն 'ի հողվարքն , և ու-
 բունէր զայն մարդն՝ որ փակեղն էառ փախեաւ :
 Նա տեսաւ մէկ մի և ասաց , ո՞վ Փահլուլն յայս
 տեղս ի՞նչ կանէ այն մարդն , գնա՛ 'ի շուկայն
 որունէ : Ասաց ինքն՝ այ եղբայր , ուր երթայ՝
 վաղն անագան յայս տեղս պիտի գայ . և ասաց
 զբանս զայս :

Թէ շատ թէ սակաւ զըրկես , վայլես զեր-
 կիրս ինդալով . ունիս դու աստի գնալ , և
 մարմինդ ծածկի հողով : Դարձի՛ր և բարիս գոր-
 ծէ , գիտ բրժիշկ և դեղ քեզ շուտով . զի յա-
 հեղ և մեծ ատեանն , չը լինիս ահով ամօթով :

Ընտելացաւ ընդ քաղաքացւոցն , և ճանա-
 չէին զինքն ամէն մարդ . և օր մի միս ետ սորա
 մէկ մարդ մի , թէ տար 'ի մեր տունն . նա
 էառ՝ և 'ի հողվարքն տարաւ զայն : Եւ դար-
 ձաւ եկաւ այն մարդն 'ի տուն իւր , և տե-
 սաւ՝ որ զմիան չէր բերեր . գնաց գտաւ ըզ-
 Փահլուլն 'ի շուկայն՝ և ասաց ո՞ւր է միան իմ :
 Ասաց Փահլուլն , 'ի քո տունն տարի . ասաց
 մարդն այն , արի՛ ցոյց զիմ տունն . ելաւ և
 էառ զայն մարդն՝ գնաց 'ի հողվարքն , և ասաց

այն մարդն , այս է իմ տունն : Ասաց Փահլուլն , ահա այս է քո տունն . այն տունն՝ որ այժմ կը կենաա , այն չէ՛ մնացական , զի յետոյ յայս տեղն պիտի գաս . և ասաց զբանս զայս :

Աշխարհիս սահմանքն է հանց , կեանք կը քրտնի կեանք թերանայ . կը թեթեւցնէ զիւր բեռն , թէ ո՞վ շարկել որ կարենայ : Ունկն մատն գու հիւսանին , որ միշտ շինէ զդագաղ նա . մէկըն գայ մէկըն գընայ , ինքն բնաւ անգործ չըմնայ :

Զարմացաւ այն մարդն ընդ Փահլուլին խօսքին՝ թէ մեք զդա յիմար գիտէաք , նա մեզ վարդապետ եղև : Եւ ունէր սովորութի Փահլուլն՝ որ երթայր ՚ի հողվարքն և մնար , և շատ անգամ՝ ննջէր անդ : Օր մի ՚ի դուրս էր ելեր խալիֆայն շատ զօրօք՝ դէպ ՚ի հողվարքն անցանէր , աեսաւ զնա , և ասաց նմա՝ թէ հոս ի՞նչ կանես : Եւ ասաց Փահլուլն՝ ո՞վ արեղէրակալ խալիֆայ , զայս ամէն մեռեալքս կը նզովեմ : Եւ ասաց խալիֆայն , էր կը նզովես . և ասաց ցնա Փահլուլն զբանս զայս :

Թէ շատ թէ սակաւ զըրկէ մարդ , զհետ իւր սանիլ չըկարէ . մարդըն պիտի հանց ջանայ , որ ՚ի յայն կեանքն չամաչէ : Որ ասդէն

այս և անդ առնու , ասա զըրկէ նա անդ-
վըճարէ . զի յայն կեանքն ճարակ չըկայ , որ
փողով իւր պարտքն ազատէ :

Զարմացաւ Խալիֆայն՝ և ասաց , փառք
ասաուծոյ կենդանւոյն՝ որ կայ և մնայ յա-
ւիտեան . զի խումարն այնչափ խելօք խօսք կը
խօսի : Եւ ասաց թէ այս մարդս խելօք է , և
վասն մեղաց զայն առնէ . զի թէ դա խումար
էր՝ նա հանց բան չասէր . և դարձաւ Խա-
լիֆայն ՚ի քաղաքն : Եւ օր մի հեծեալ ՚ի ձի
անցանէր դէս ՚ի հողվարքն , զի ճանապարհն
ընդ այն էր . և տեսաւ զՓահլուլն և ասաց ,
զի՞նչ առնես ՚ի հողվարքն : Եւ նա ասաց ,
բազում աւուրք աստ կամ և կը չափեմ զիմ
գերեզմանն և զքոյն , նա խակի քոյն աւելի չե-
քան զիմն . դու Խալիֆայ ես , և ես աղքատ
մուրացիկ եմ . և քո հողն և իմն մէկ չափով է :
Եւ յետոյ ասաց զբանս զայս :

Ո՛վ մարդ մի՛ զհոգիդ դատեր , և զմար-
մինդ առներ սիրելի . դարձիր ՚ի մեղաց ճան-
փէն , որ չլինիս ողորմ ու լայի : Զանս և բարի
գործէ , զի քէվրանըն քեզ կը նայի . յայս հո-
ղոյս դու հանց գընս , որ հողիդ հըրոյն չլինի :

Եւ ասաց Խալիֆայն ընդ իւր մեծամեծ-
 սրն, տեսէք՝ ի՞նչ իմաստուն է դորա խօսքն .
 և համարձակապէս խօսի զբանս, չէ՛ պարտ որ
 զդա ՚ի մեզանից ՚ի զառ թողումք . և ապա
 հրամայեց կոչել զնա յիւր դարպասն: Եւ օր
 մի Խալիֆայն յաթոռոյն ելեր զնացեր էր, և
 գնաց Փահլուլն նստաւ յաթոռն Խալիֆային: Եւ
 եկին ճորտերն՝ սկսան ծեծել զնա, և նա
 ճչեց պինտ: Լսեց Խալիֆայն և բարկացաւ ՚ի
 վերայ ծառայիցն, և ասաց ո՛վ Փահլուլ է՞ր կը
 ծեծեն զքեզ: Ասաց Փահլուլն, ո՛վ տիեզե-
 րակալ Խալիֆայ՝ երբ զիս այս մէկ պահ նըս-
 տելուս համար հանց կը ծեծեն, ապա զքեզ
 զի՞նչ պիտի առնեն դատաստանին օրն . և սկը-
 սաւ ասել զբանս զայս:

Մարդիք մի ծեծէք դուք զիս, չեմ ցանկար
 փառացդ աթոռոյ . զիմն քակեցի լեւայ, և
 չունիմ սրտիկ շինելոյ: Իմ կեանքս յիմ աչացն
 ելեր, այլ չունիմ տեղիք խրնդալոյ . դրո՛ր զիմ
 մարմինս ՚ի մահ, զի չունիմ հողի տանջելոյ: Ա՛յ
 մարդ որ փառացդ հասար, նոր յերկրի եղեր ա-
 թոռոյ . դու հանց շրփացար ՚ի քեզ, որ չըդնես
 դու յանցանք մարդոյ: Ահ ՚ի մահուանէ չու-
 նիս, ոչ ճարես պաշար գնալոյ . աշխարհիս փառ-
 քըն այլոց թողուս, կը վինիս դու ափ մի հողոյ:

Լսեց Խալիֆայն զայն իմաստուն բանս, և
 հարցանէր շատ բանս փահլու լին. և նա հնար
 իւք տայր զպատասխանին: Եւ օր միալ հարցաւ
 Խալիֆայն ընդ փահլու լն և ասէ, փահլու լ
 ասա՛ ինձ, այսօր ի՞նչ առնէ աստուած: Ասաց
 փահլու լն, այդ դիժար հարցմունք է. այսօր
 համբերեա՛ ինձ, վաղիւն ասեմ. և ՚ի վաղիւն
 հեծեալ ՚ի սև էջ մի դնայր. տեսեալ Խալի
 ֆայն ասաց նմա, ո՛վ փահլու լ ի՞նչ առնէ ան
 այսօր: Ասաց փահլու լն, հրամայէ՛ որ ամէն
 ծառայքդ ՚ի դուրս ելանեն, և ես տամ զպա
 տասխանին: Եւ հրամայեաց Խալիֆայն ծա
 ռայիցն ելանել ՚ի դուրս. և մնաց ինքն և փահ
 լու լն մինակ: Եւ ասաց Խալիֆայն, ի՞նչ կանէ
 աստուած ՚ի յայս ժամս. ասաց փահլու լն, ո՛վ
 Խալիֆայ՝ արի՛ սրհ մի նիստ ՚ի յիմ էջս, և
 ես ՚ի քո յաթոռդ նստիմ և ասեմ քեզ, թէ
 ի՞նչ առնէ աստուած: Եւ հայեցաւ Խալի
 ֆայն՝ որ մարդ չէր երևէր ՚ի բողոքն, ելաւ
 նստաւ ՚ի յէջն. և փահլու լն ՚ի Խալիֆային
 աթոռն նստաւ, և ոչ խօսէր: Ասաց Խալի
 ֆայն, է՛ր չես խօսիր, ի՞նչ առնէ աստուած:
 Ասաց փահլու լն՝ ինչ խօսիմ, չէ՞ս գիտէր ինչ
 առնէ. դու որ Խալիֆայ ես ՚ի յէջս իմ նրս
 տոյց, ես որ փահլու լ եմ՝ ՚ի քո աթոռդ նրստ

ցոյց: Ահա զայս արարի թամուս յայսմիկ .
 և Խալիֆայն զարմացաւ , և ոչ կարէր խօսիլ .
 և ասաց Փահլուլն զբանս զայս :

Դու զանքըննին էր քըննես , երբ որ միտ
 քրդ իւրեան չըհասնի . զաստուած ո՞վ կարէ
 տեսնուլ , կամ իմանալ զնա մարդ կենդանի :
 Երբ չես քո կենացքդ տէր , կը մընաս դու
 յերկուց շընչի . այլ տէր հայրենեացս է նա ,
 որ երկինք և երկիր կը սանի :

Տիժարեցաւ Խալիֆայն և ասաց , փառք
 աստուծոյ կենդանւոյն և բարձրելոյն յաւիտեան .
 զի այս ցեղ իսկս զարմանալի սրտասխան
 առնէ . բայց թուի ինձ , թէ չէ դա իսկ ,
 այլ խեղճ է . և գնաց Փահլուլն : Եւ զկնի
 քանի մի աւուր հրամայեց Խալիֆայն կոչել
 զնա . և նա նստաւ յէջ մի , և եկաւ առ Խալիֆայն :
 Տիժարեցաւ Խալիֆայն և ասաց , փառք
 աստուծոյ կենդանւոյն և բարձրելոյն
 յաւիտեան . և ասաց՝ կամիմ հարցանել քեզ
 բան մի , և դու զըզորդն ասա՛ : Եւ նա ասաց՝
 հրամայեա՛ Խալիֆայ . ասաց Խալիֆայն՝ քանի՞
 աստղ կայ յերկինքն : Ասաց Փահլուլն՝ ես
 աղէկ գիտեմ , զամէնն համբեր եմ զի որչափ
 իշոյս վերայ մազ կայ՝ այնչափ ալ աստղ կայ

յերկինքն . թէ չես հաւատար՝ իրջիր դու
համրէ: Եւ իջաւ Խալիֆայն յաթոռոյն , և
սկսաւ համրել զիշոյն մազն: Ասաց Փահլուլն ,
յառաջ զագին համրէ . և սկսաւ Խալիֆայն
այնպէս առնել , և ոչ կարէր: Եւ սպա սկսաւ
Փահլուլն ասել զքանս զայս:

Դու որ չբոխտես այժմ , թէ գլխոյդ մազըն
քանի է . էր ինձ թուել հրամայես , թէ երկ-
նից ասողըն քանի է: Չինչ որ ասա գործել
լինի , ամէնին համար տալոց է . որչափ զըրկէ
գանձ ժողվէ , ասա թողու ամենիլ չկարէ:

Ամաչեց Խալիֆայն , և եթող զիշոյն ազին
ի համրելոյն , և ելաւ նստաւ յաթոռն: Եւ
ասաց փառք աստուծոյ՝ որ այսպէս գիտութի
պատուէ զսիրելիս իւր և սայ զիմաստութիւն
ու՛մ որ կամի . որու՛մ ոչ որ կարէ տալ պատաս-
խան ՚ի բանս և ՚ի հարցմունս իւր: Այսպիսի
վարութ կեցեալ Փահլուլն՝ և երանելի կենօք
փոխեցաւ յանվախճան թագաւորութիւնն . ՚ի
քրիստոս յիտուս ՚ի տէր մեր: Որու՛մ վայելէ
փառք իշխանութիւն և պատիւ , այժմ և միշտ
և յաւիտեանս , ամէն:



ԽՐԱՏՔ ՕԳՏԱԿԱՐՔ

ԱՐԱՐԵԱԼ ԲԱՆԱՍՏԵՂԺ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՈՐՈՅ

ԱՆՈՒՆՆ Ի ՆՈՒՇՐԻՎԱՆ

Սա ասե՛ն թագ մի ունե՛ր ոսկի և պաա-
 ու ահա՛ն ակնե՛րով, և շինած է՛ր քսան և երկու-
 անկիւնով, և յամէ՛ն անկիւն՝ այս խրատներս
 գրած է՛ր. և յորժամ՝ ելանէ՛ր ՚ի դուրս՝ կար-
 դայր առաջի զօրացն, և ասէ՛ր թէ՛ ՚ի միտ ա-
 ուէ՛ք. և ասա՛ դնէ՛ր ՚ի գլուխն զթագն զայն:

ԽՐԱՏ . Ա

Չանձնահաճ մարդն յինէ՛ն ՚ի զան պա-
 հեցէ՛ք: Արժանաւորաց յիս՝ գանձէ՛ն բաժին
 տրվէ՛ք: Բանագէտ մարդկանց դէմ՝ անպատեհ
 խօսք մի՛ խօսիք: Չանգըստներին՝ մի՛ որոնէ՛ք:
 Ի ժամանակս գործոց ձերոց՝ մի՛ բշտապիք:
 Չգործն ձեր՝ ժամէ՛ ՚ի ժամ մի՛ ձգէ՛ք:

ԽՐԱՏ . Բ

Ի բանին սկիզբն և ՚ի կատարածն հայեցէ՛ք:
 Յոր տուն մտանէ՛ք՝ յառաջ դէ՛ն խնայէ՛ք:

Չամէն բան կամ կտաւ՝ տասը տպրայ չափեցէք, և ապա կորեցէք: Չփորձածն՝ կրկին մի փորձէք: Անփորձ մարդկանց՝ զխորհուրդն ձեր մի յայանէք: Չխոստումն որ ՚ի ձեզ է՝ մինչև ՚ի ձեր անձն մի խնայէք: Սակաւ խոստացէք՝ և աւելի կատարեցէք:

ԽՐԱՏ • Գ

Խոնարհութիւն և հեզութիւն ուսարնէք: Յամենայն ժամ զճշմարտութիւն սիրեցէք: Չկարողութեան չափն գիտացէք: Չհամբերող մարդն ճանաչեցէք: Չայս կեանքս՝ մի որ գիտացէք: Չառողջութեան հարկիքն գիտացէք: Չձեր կեանքն անգիտութեամբ մի անցնէք: Ի յայլոց արամութիւն մի խնդայք: Ընդ կտարածն՝ ընդ գնացածն՝ ընդ թափածն՝ ընդ այրածն՝ մի արամիք:

ԽՐԱՏ • Դ

Ի մեծամեծաց յորոգայթն կոծեցարնէք: Մարդկանց՝ ամենայն իրաց համբերեցէք: Ի տեղի ուր համբերել պէտք է՝ մի ըշտապիք: Չհետ մարդոյ՝ ռիսակալ մի լինիք: Չչափ անձին ձերոյ ճանաչեցէք: Չձեր զոտն քան զձեր անկողինն աւելի մի երկնցնէք: Ի պա

տերազմէ զերես մի դարձրնէք: Չայլոց կուսն
 ՚ի ձեր յանձն մի առնոյք:

ԽՐԱՏ • Ե

Առիւ թէ հանդիպի ՚ի ձեր մէջն՝ միջակ
 արարէք, բայց շուտ հաշտեցարուք: Ի մէջ
 սրտից ձերոց նախանձ մի պահէք: Չամէն
 բան՝ համբերելով արարէք: Չանպէտան ՚ի
 բաց թողէք, և զպիտանացուն ընկալարուք:
 Չերևելի զգայարանքն ձեր՝ պատրաստ պա-
 հեցէք: Յանպատէհ բանից՝ ՚ի զնա կացէք:
 Ի մէջ մարդկանց՝ վաս անուն մի ստանայք:

ԽՐԱՏ • Զ

Ի գողունեաց ընչից մի շահիք: Ի յեզեր
 թագաւորի՝ աուն մի շինէք: Չձեր բնակու-
 թիւնն՝ մօտ ՚ի խանութ մի առնէք: Ի պիղծ
 գործոց և սեղեաց ՚ի բաց կացէք: Անխրաս
 և անկիրթ մարդկանց՝ ծառայութիւն մի առ-
 նէք: Անընկեր ՚ի ճանապարհ մի երթայք:
 Անարժանից՝ մի խոնարհիք: Չհետ չար կա-
 մաց՝ մի դատիք: Ի յօտար հող՝ ծառ մի
 արնկէք:

Ի յաղահատ տեղիք՝ սերմ մի՛ ցանէք: Չհետ
ամէն ազգ մարդոյ՝ մի օրինակ մի վարիք:
Չհետ անարժան մարդկանց՝ մի նըստիք:
Չհետ անհարկից՝ սէր մի՛ դնէք: Քսմոս մարդ-
կանց՝ մի հաւատայք, և զհետ նոցա՝ աղու-
հաց մի՛ ուտէք: Չհետ մարդոյ՝ խռովութիւն
և կռիւ մի՛ առնէք: Չհետ չտեսած մարդոյ՝
սիրելութիւն մի՛ առնէք:

Չհետ հպարտ մարդոյն և խելառին և ար-
բեցողին՝ մի խօսիք: Դուք զձեզ՝ մեծ մի՛ հա-
մարիք: Ի լեզուանի կնոջէ՝ պատրաստ կացէք:
Ո՛վ որ զխրատն սիրէ՝ զայն խրատեցէք: Չու-
տան ը և զըմպելն՝ մինակ մի՛ սիրէք: Չեզ-
հնազանդելոցն՝ անհնարին և անկարօղ բանս
մի՛ դնէք: Չձեզ սիրողն՝ մի՛ առէք: Ո՛վ որ
զհետ ձեր սէր ունի՝ զնա անտես մի՛ առնէք:
Յանպատէհ պատճառէ՝ զճառայն ձեր մի՛
ձեծէք: Այլոց ապրուստին՝ աչք մի՛ ձգէք:

Չձեր հացն՝ յայլոց սեղան մի՛ դնէք: Երբ
զձեր հացն ուտէք՝ զձեր զրոյցն արարէք:

Տղայոց և երիտասարդից զհետ՝ բան մի՛ խորհիք: Օտար կին կամ պառաւ՝ ՚ի մէջ տան մի նակ մի՛ թողուք: Ի չար կնոջ հանդերձից՝ պատրանստ կացէք: Չձեր հոգին՝ ձեր մարմնոյն ծառայ մի առնէք: Ի ձեր որդւոց և դստերաց մահն՝ մի արտոմիք: Յօտար բան՝ առանց փորձի մի՛ վստահանայք:

ԽՐԱՏ • Ժ

Չայգին ձեր՝ ՚ի պահ օտարի մի՛ տայք: Յայլոց ապրանք իբրև զտէրն իւր՝ մի՛ վստահանայք: Յօտար մարդոյ տուն՝ տանուտէրութիւն մի՛ առնէք: Չօտարն որ չէք ճանաչէր՝ ՚ի ձեր տունն վարձկան մի՛ դնէք: Այն մարդիքն որ զայս կեանքս խիստ կը սիրեն՝ դուք զնոսա մի՛ սիրէք: Ի մէջ առն և կնոջ՝ կամ ծառայի և սեռան՝ բանսարկութիւն մի՛ առնէք:

ԽՐԱՏ • ԺԱ

Առ թագաւորն՝ զգոյշ և պատրաստ կացէք . թագաւորն թէպէտ խոնարհի՝ դուք մի՛ համարձակիք: Ի շտանաւորաց և դիւաւորաց հնազանդ լերուք: Յոխակալ մարդկանց՝ ՚ի զմտ կացէք: Չամէն մարդոյ պատիւն իմացէք:

Ընդ բախտաւորն և ընդ մեծատունն՝ մի՛ նախանձիք : Ընդ խմաստունն՝ մի՛ հակառակիք և մի՛ այսպանէք զբանս նոցա , զի նոքա սէր են գրչի և խմաստութեան : Չգիտունն և զմաստունն պատուեցէք . թէպէտ դուք իմաստուն էք՝ այլ քան զձեզ աւելի համարեցէք : Չծերսն պատուեցէք և գաւազան լերո՛ւք նոցա :

ԽՐԱՏ . ԺԳ

Չմեծն՝ մեծ , և զփոքրն՝ փոքր սիրեցէք : Չխաբուսիկն՝ ՚ի միջոյ ձերմէ բարձէք : Չհետ ժլատի և ոչ ինչ մարդկանց՝ մի՛ դատիք : Չհօր և զմօր՝ և զազգի պատիւն պահեցէք : Ազգականաց և ընտանեաց ձերոց՝ ինամք տարէք : Ի բարեկամաց ձերոց՝ զճշմարիտն ընարեցէք : Ամենայն մարդոյ՝ մի՛ հաւատայք : Չոսկի և զարծաթ՝ քան զչափն աւելի մի՛ սիրէք :

ԽՐԱՏ . ԺԳ

Յամենայն աւուրս ձեր՝ խրատիւ և խմաստութեամբ կացէք : Յամենայն ժամ՝ արթուն և պատրաստ լերո՛ւք : Չչարն՝ ՚ի միջոյ ձերմէ բարձէք : Ատա մարդկանց սրափն՝ մի՛ օգնէք : Ի սիրելոյ և ՚ի զարմէ՝ զգութն ձեր

մի բառնայք: Չհետ պիղծ մեռելի՛ զձեր
մեռեալն մի՛ թաղէք: Ի մէջ մարդկանց՝ քան
զբարին այլ բան մի խօսիք: Ուսման և գիտու-
թեան միշտ հետևեցէ՛ք:

ԽԻՅՏ • ԺԴ

Ո՛վ որ քան զձեզ աղէկ է և գիտուն՝ զնա
աւելի պատուեցէ՛ք: Միշտ զհետ խմաստնոց
և գիանոց շրջեցարձէք: Չանցեալ ժամանակն՝
հեշտ մի՛ համարիք: Չինչ որ յաշխարհիս մէջն
չունիք՝ ՚ի մարդկանէ մի՛ խնդրէք՝ բաց ՚ի
գիտութենէ: Թէ կամիք զի անհոգ մնայք
աղէկ արուեստ ուսիք: Բան մի որ ՚ի պահ
առնուք՝ ՚ի տէրն հասուցէ՛ք: Փոխ որ առ-
նուք՝ վճարեցէ՛ք:

ԽԻՅՏ • ԺԵ

Խօսք որ ՚ի խելաց չէ՝ մի՛ խօսիք: Խօսք
որ ասելու չէ՝ մի՛ ասէք: Չլեզուն ձեր՝ ՚ի
չար խօսից զերժ պահեցէ՛ք: Անպատեհ խօ-
սից՝ ունկն մի՛ դնէք: Պիղծ խօսից՝ պատաս-
խան մի՛ տայք: Թագաւորաց՝ յոյս մի՛ դնէք:
Մինչ լսէք զբանս ՚ի մարդկանէ՝ առնոյն պա-
տասխան մի՛ տայք: Չայն բանն զոր դուք
լաւ չգիտէք՝ ամենևին մի՛ ասէք: Չինչ բան
որ ՚ի ձեր սիրտն չկայ՝ զայն լեզու աւ մի՛ խօսիք:

Ամենայն մարդոյ խօսից՝ մի՛ վստահանայք։
 Չբարի խօսքն՝ յամէն մարդոյ ընդունեցէք։
 Ոչ իրաւ և ոչ սուտ՝ բնաւ մի՛ երդնուիք։
 Չայն կեանքն՝ ընդ այս կենցաղոյս մի՛ փոխէք։
 Ամէն մարդոյ զայն կամեցարո՞ւք՝ զինչ որ ձեր
 անձին կը կամիք։ Որքոց բան՝ մի՛ խնայէք։
 Երկայն ճանապարհի՛ պաշար պատրաստեցէք։
 Այրեաց՝ հանապազ սղորմեցէք։ Յերիտա-
 սարդութե՛ր ժամանակն՝ զծերութիւնն մի՛տք
 բերէք։ Չծերութեան բանն՝ յերիտասարդու-
 թեան ժամանակն հոգացէք։

Ի ժխտութենէ և յազահութենէ փախի՛ք։
 Առատութեան արուեստ ուսի՛ք։ Սկիզբն ա-
 ռատուե՛ր՝ ՚ի ձեր արդար արդեանցն արարէ՛ք։
 Չմարդկութեան կերպն՝ ճանաչեցէք։ Չհեա-
 հարկեորաց՝ սէր դրո՛ւք։ Յանարգ և անդէտ
 մարդոյ՝ բան մի՛ խնդրէք։ Չհետ ամէն մար-
 դոյ՝ սէր և հարկեորութիւն ըստ ժամանակին
 արարէ՛ք։

Չմռան գործն՝ յամառն հոգացէ՛ք։ Չայս
 աւուր բանն՝ ՚ի վաղեան մի՛ ձգէք։ Չդեղն

և զարիւնն 'ի հարկաւորութեան ժամու գործ
ածեցէք: Չբանգէտ մարդն՝ 'ի վերայ բանի
դրէք: Չերիտասարդն և զերկչոան՝ 'ի վերայ
բանի մի՛ դնէք: Յոխակալ և յանողորմ մարդ-
կանց՝ հեռի կացէք: Ամենայն բանից՝ շուտ մի՛
հաւատայք: Չձեր ընտանիքն՝ միշտ սիրեցէք:

ԽՐԱՏ • ԺԹ

Չհետ ճմարիտ սիրելեաց՝ սիրելու թիւն
արարէք: Չազգականս ձեր՝ մի՛ վիրաւորէք:
Մի՛ թողուք զձերայինսն՝ և զօտարսն հոգայք:
Չձեր սիրելին՝ մի՛ մոռանայք: Չձեր թշնա-
մին՝ խիստ մի՛ արհամարհէք: Յիմաստուն
թշնամւոյ՝ յոյժ մի՛ երկնչիք: Յանգէտ սիրել-
եաց՝ հեռի մնացէք: Ի մէջ թշնամութեան
սիրոյ տեղի պահեցէք: Ի սիրելութեան ժա-
մու՝ զթշնամութիւն յիշեցէք: Տուլութեան
արուեստ՝ մի՛ ուսանիք: Չեր սիրելեաց՝ յաղ-
քատութեան ժամու օգնեցէք:

ԽՐԱՏ • Ի

Չհետ վատ մարդկանց՝ մի՛ վատթարանայք:
Ամէն մարդ՝ թող զիւր չափն վայելէ: Աշ-
խարհս՝ ձեզ խաղաղ թող չթուի: Չհոգ-
ւոյ բաժինն՝ 'ի մարմնաւորս մի՛ մոռանայք:
Տղայոց ձերոց՝ հնարաւորութեամբ արուեստ

ուսուցէք: Չձեր կերպարանն՝ ՚ի սիրելեաց և
 ՚ի թշնամեաց ծածո՛ւկ պահեցէք: Չձեր խոր-
 հուրդն՝ ամէն մարդոյ մի՛ յայանէք: Ռենայն
 բանից՝ ականջ մի՛ դնէք:

ԽՐԱՏ • ԻԱ

Չձեր խորհրդակիցն՝ ՚ի ժամանակի բար-
 կու թեան փորձեցէք: Չկին և զորդիս՝ ՚ի
 ժամանակի աղքատութե մի՛ ուրանայք: Ամէն
 իրաց զչամին սիրեցէք: Չհպարտութիւն՝ քան
 զմահն դառն խնացէք: Չանհոգութիւնն ՚ի
 ձեզ՝ անկենդանութիւն գիտացէք: Ընկեր
 զայն ճանաչեցէք՝ որ ցաւակից ձեզ լինի:

ԽՐԱՏ • ԻԲ

Ի ժամանակի անհոգութեան՝ քան ՚ի նե-
 ղութեան ժամանակն խիստ պատրաստ կացէք:
 Չամէն բան՝ ՚ի յառատութեան ժամն հո-
 գացէք: Ի յաժնութեան՝ զթանկութիւնն յի-
 շեցէք: Յառողջութեան ժամանակին՝ զհի-
 ւանդութիւնն ՚ի միտ ածէք: Չաղջիկն կամ
 զկինն՝ ՚ի ճանաչ տեղեաց առէք: Չմարդ մի-
 անգամ տեսանելով՝ մի՛ խաբուիք: Չաշխար-
 հիս փառքն և մեծութիւնն՝ ոչ ինչ համա-
 րեցէք: Միշտ և հանապազ զյաւխտենակաւե
 փառքն ՚ի միտք բերէք:



ԻՐԱՏՐ

ՊԻՏԱՆԷՔ ԵՒ ՕԳՏԱԿԱՐՐ , ԶՈՐ ԱՍՅԵԱԼԷ
ԻՒԿԱՐԱՅ ԻՄԱՍՏՆՈՅ

Եւ խիկարս գպիր էի Սե՛նեքերիմայ ար-
քային Ասարեստանեայց , առ ի ինձ վաթսուն
կինս , և շինեցի վաթսուն ապարանս . և եղէ
վաթսուն ամաց , ոչ եղև ինձ որդի : Յայնժամ
մտի առ կուռքն բազում ընծայիւք . և վա-
սեցի հաւր , և արկի խունկս անուշահոտս ՚ի
վերայ նորս . մատուցի զընծայս , և զոհեցի
զոհս վասն ծննդեան : Եւ աղաչեցի ասելով ,
նվ տեարք իմ և չասուածք իմ Բէլշիմ և
Շահիմ , հրամայեցէք և տուք ինձ արու զա-
ւակ . քանզի ահա խիկարս կենդանւոյն մե-
ռանի : Եւ զի՛նչ ասե՛ն մարդիք , թէ խիկար
իմաստուն էր և ճարասար , մեռաւ և ոչ գոյր
նորս որդի , որ թաղէր զնա , և ոչ դուստր
որ լայր զնա . զի՛նչ ասեմ , չունիմ ժառանգ-
չեա մահուան իմոյ : Եւ եթէ որդին իմ զօր
ամենայն տասն քանքարս ծախեսցէ , ոչ կարէ

բայառել զինչս իմ. այլ զի միայն արկցէ հող
 ձեռօք իւրովք 'ի վերայ իմ. և զի մի' մնացից
 անյիշատակ:

Յայնժամ ձայն եղև 'իչաստուածոցն իմոց'
 թէ Խիկար, ոչ հրամայեալ է լինիլ քեզ զա-
 ւակ. բայց թէ առցես զՆաթան քեռորդին
 քոյ, և սնուցես զնա որդի քեզ, և նա հա-
 տուցէ քեզ զանուն քո: Եւ ապա առի ըզ-
 Նաթան քեռորդին իմ առ իս, որ էր մի ա-
 մաց. և հագուցի նմա բեհեզս և ծիրանիս.
 և եդի մանեակ ոսկի 'ի պարանոց նորա որպէս
 որդի թագաւորի. գեղաշուք զարդարեցի
 զնա. և արբուցի նմա կաթն և մեղր և նրն-
 ջեցուցանէի զնա 'ի վերայ արծուոց և աղաւ-
 նեաց իմոց, մինչև եղև եօթն ամաց: Եւ
 ապա սկսայ ուսուցանել նմա զգպրութիւն
 և զիմաստութիւն և զհանձարագիտութիւն,
 և զպատասխանիս հրովարտակաց, և զգարձ-
 ուածս հակառակ խօսից. և 'ի տուէ և 'ի գի-
 շերի ոչ դադարէի ուսուցանելոյ. և յագե-
 ցուցի զնա ուսմամբ իբր հացիւ և ջրով:

Ապա ասաց արքայն առ իս՝ դպիր և իմաս-
 տուն Խիկար, գիտեմ զի ծերացեալ ես, և
 յետ վախճանի քոյ ո՞վ է, որ կատարէ ձար-
 տարութեամբ և իմաստութեամբ զգործս ար-

քունեաց մերոց • զի ես հանապազ տրտում
եմ վասն այդ բանիդ: Պատասխանի ետու նմա
և ասացի, անբայ յաւիտեան կաց • է՛ իմ որդի՛
որ առաւել հանձարեղ և իմաստուն է քան զիս:

Ասաց թագաւորն, անձ առ իս՝ զի տեսից
զնա • և ես կացուցի զնա առաջի թագաւորին: Ե
Յորժամ ետես թագաւորն՝ ուրախ եղև և
ասաց, այս օրս օրհնեալ եղիցի • քանզի Խի-
կար ՚ի կենդանութեան իւրում է՛ած և կա-
ցոյց զորդին իւր առաջի իմ, և ինքն ՚ի հան-
գստեան եղիցի: Եւ ես երկրպագի արքային
իմոյ, և առեալ տարայ զՆաթան յապարանս
իմ • և այսպէս ասէի ՚ի խրատելն իմում:

Խրատք Խիկարայ՝ զոր ետ որդւոյն իւրոյ Նաթանայ:

Ո՛րդեակ՝ եթէ լսես խօսք ՚ի դուռն թա-
գաւորաց և իշխանաց և մեծամեծաց, պահեա՛
և մեռո՛ զնա ՚ի սրտի քում • և մի՛ յայտնել
մարդոյ՝ մինչև այլքն ասեն քեզ:

Ո՛րդեակ՝ զմարդոյ կապած և կնքածն մի՛
արձակել, և զարձակելն մի՛ կապել:

Ո՛րդեակ՝ լա՛ւ է իմաստուն մարդոյն զհետ
քար կրելն՝ քան զանգէտին հետ ուտել և
լմպելն:

Ո՛րդեակ՝ եթէ առաքեսցեն զքեզ ՚ի տե-

դիւ ինչ վասն բանի, լաւ 'ի միտ ա՛ռ զբանն զոր
ասելոց ես և ասպա գնա՛. զի մի՛ գուցէ յետոյ
լինիցիս ծաղր առաջի այլոց:

Ո՛րդեակ՝ եթէ գնաս 'ի հրաւիրեալ տե՛ս
դիս յորում գտանի քան զքեզ մեծ և յար-
գի, մի՛ նստիր 'ի վերին կողմն. զի յետոյ սակաւ
առ սակաւ իջանես ամօթով 'ի ստորին կողմն:

Ո՛րդեակ՝ եթէ ընկերն քո հիւանդ է, մի՛
ասեր 'ի մտի քում, թէ տանձ կամ խնձոր
գտանեմ, և ասպա երթամ 'ի տես. այլ երթ
տախք՝ և տես աչօք. զի զհիւանդն դատարկ
տեսանել շատ լաւ է՝ քան զբազում միրգս
տանել:

Ո՛րդեակ՝ մի՛ հեղուր զարիւն մարդոյ, զի
մի՛ այլքն հեղցեն զարիւն քո:

Ո՛րդեակ՝ մի՛ շնար ընդ այլոց կանանց, զի
մի՛ այլք շնացեն ընդ կնոջ քոյ:

Ո՛րդեակ՝ լաւ է ծառային միամտութեամբ
տալ սրտասխանի տեսուն իւրում, քան զոր
խրատելով խօսի, և ածէ 'ի բարկութիւն:

Ո՛րդեակ՝ մի՛ տար ընկերի կոխել զոտս
քո, զի մի՛ համարձակեսցի և կոխեսցէ զպա-
րանոց քո:

Ո՛րդեակ՝ մի՛ լինիր քաղցր որ կլանեն ըզ-
քեզ, և մի՛ լինիր դառն որ թքանեն զքեզ:

Ո՛րդեակ՝ լաւ է կոյր աչօք՝ քան կոյր մը-
տօք . զի կոյրն՝ արագ տեսանէ զերթ և եկն
ճանապարհին , և կոյրն մտօք՝ հանապազ գնայ
կամակոր :

Ո՛րդեակ՝ լաւ է աղջիկ՝ որ ծնանի և
շուտ մեռանի , քան թէ ապրի և աղբին իւրոյ
լինի նախատինք :

Ո՛րդեակ՝ լաւ է ուլ մի ՚ի ձեր տանն զե-
նած , քան թէ եզ մի ՚ի սուենս այլոց :

Ո՛րդեակ՝ ՚ի յապարանս թագաւորաց մի՛
մտաներ , և ընդ կնոջ դատաւորի մի՛ խօսիր :

Ո՛րդեակ՝ աչք մարդոյ ազան է , ոչ շա-
տանայ գանձով՝ մինչ մտանէ ՚ի հող :

Ո՛րդեակ՝ մի՛ պատճառ լինիր հարսնացու-
ցանելոյ զդուստրն ուրուք ընդ առն օտարի .
զի թէ յետոյ այրն վատ լինի՝ անիծանեն ըզ-
քեզ , և թէ աղէկ լինի՝ ոչ յիշեն բնաւ զքեզ :

Ո՛րդեակ՝ յորժամ դատաստան երթաս , մի՛
շատախօս լինիր , և մի՛ սուտ խօսիր՝ զի մի՛
յետոյ մտանիցես ՚ի բանդ :

Ո՛րդեակ՝ յառաջ զխօսքն ՚ի մտի քու մ՛
խորհեա՛ , թէ սուտ ես՝ մեղայ ասա՛ զի մի՛
դատաւորն արկցէ ՚ի բանա և սուժեցէ զքեզ :

Ո՛րդեակ՝ եթէ զմարդն ՚ի կախել տանին՝
մի՛ յառաջ նորա ընթանայր , զի մի՛ մատնեցէ :

զքեզ և ասացէ՛ թէ սա ևս իմ ընկեր է:

Ո՛րդեակ՝ յորժամ երթաս ՚ի հարսանիս կամ ՚ի մեռելոյ տուն՝ յառաջ հաց կեր ՚ի տունդ, և ասլա գնա՛. զի թէ հարսանիս է՝ ՚ի շատ խնդու-թե՛նէն մոռանան զքեզ, և թէ մեռելոյ տուն է՝ ՚ի շատ տրամու-թե՛նէն մոռանան զքեզ, և դու մնաս քաղցրալ:

Ո՛րդեակ՝ կամուրջ մի՛ հեռի գնալ անցանել լա՛ւ է, քան մտանել ՚ի ջուր մօտիկ:

Ո՛րդեակ՝ նոր դատաստան մի՛ սահմաներ անիրաւու-թեամբ. թէպէտ և իշխան լինիս՝ ՚ի սահմանէ դուրս մի՛ ելաներ:

Ո՛րդեակ՝ մի՛ բանար զաչս քո և տեսաներ զկին գեղեցիկ, զի դեղեալ է զերեսն՝ և ծարուրեալ է զաչն. և թէ վատնես զամենայն ինչս քո ՚ի սէր նորա՝ ոչ ինչ առաւել դասնես՝ քան զկնոջ քոյ, բայց միայն զմեզքն և զսեբեսու-թիւնն:

Ո՛րդեակ՝ եթէ տեսանես զերիտասարդն թառցեալ յօդս՝ մի՛ հաւատար գործոց նորա. զի բան ծերոց հաստատ է, բայց երիտասարդին՝ ոչ:

Ո՛րդեակ՝ թէպէտ և որդին քո իմաստուն է՝ յառաջագոյն փորձեա՛ զնա, և ասլա տո՛ւր զինչս քո ՚ի ձեռն նորա:

Ո՛րդեակ՝ ո՛վ որ քան զքեզ պինդ երես
է, մի՛ հակառակիր ընդ նմա:

Ո՛րդեակ՝ եթէ բարձր է տան շէմն քո
առանել քան ինն կանգունս, ՚ի մտանելն քո
ընդ այն խոնարհեցո՛ զգլուխ քո:

Ո՛րդեակ՝ մի՛ առնուր կշռով մեծ՝ և ծա-
խեր փոքր, և ասեր ՚ի մտի քում թէ շահե-
ցայ. զի ոչ գիտես՝ թէ փոխանակ այնր շա-
հուն բարկանայ աստուած ՚ի վերայ քո, և զոր
ունիս՝ առնուր ՚ի ձեռաց քոց, և տայ այլոց:

Ո՛րդեակ՝ մի՛ երդնուր և մի՛ ասեր սուտ,
զի սուտ երդումն և սուտ ասելն՝ զմարդոյ
կենաց պակասութիւն բերէ:

Ո՛րդեակ՝ եթէ կամիս խնդրել բանս ինչ
յաստուծոյ՝ ՚ի կամաց նորա մի՛ հեռանար,
զի զքր ինչ խնդրես՝ տայ քեզ:

Ո՛րդեակ՝ զի՛նչ բան՝ չա՛ր թուի քեզ,
ընկերին քում մի՛ կամենար:

Ո՛րդեակ՝ թէ կամիս գտանել յամենե-
ցունց զբարիս, արա՛ դու այլոց զբարիս:

Ո՛րդեակ՝ յորժամ լինիս ՚ի մէջ մարդկան՝
մի՛ յայտներ զպարտքդ և զպակասութիւնդ
քո, զի ՚ի նոցանէ շահ ոչ լինի քեզ, և դու
արհամարհիս ՚ի մէջ նոցա:

Ո՛րդեակ՝ սիրեա՛ զկին քո, զի մարմին քո

է, և աշխատանօք սնուցանէ զորդիան քո, և կցորդ կենաց քո է:

Ո՛րդեակ՝ սիրեա՛ զեղբայր քո իբրև զանձն քո, զի ՚ի հասանիլ որդւոց քոց՝ խնդասցես:

Ո՛րդեակ՝ ուսո՛ զորդին քո ՚ի քաղց և ՚ի ծարաւ, զի ուսանիցին համբերել նեղութեան. և յորժամ հանդիպի ժամանակ սուրբ՝ կարասցեն ժուժկալել:

Ո՛րդեակ՝ մարդոյ գործք՝ որ ոչ է բարի՝ և չունի անուն բարի յաշխարհի, լաւ է մարդն այն մեռած՝ քան թէ կենդանի:

Ո՛րդեակ՝ մի ասեր չար բարեկամին քոյ, այլ ծիծաղեա՛ ընդ երես նորա, զի դու ուրախ լինիս ՚ի մէջ ընկերաց քոց:

Ո՛րդեակ՝ զամենայն բարութիւն կնոջ քոյ արա՛, բայց զխորհուրդ սրտի քոյ մի յայտներ. զի կինն բնութեամբ տկար է, և ոչ կարէ պահել զբան քո, այլ յայանէ դրացեաց քոց, և դու անկանիս ՚ի փորձութիս և ՚ի նեղութի:

Ո՛րդեակ՝ նախ խորհեա՛ զբանն ՚ի սրտի քում, և ընտրեա՛ զպիսանին, և ասրա խօսիլ, զի մի յետոյ ծաղը լիցիս յայլոց:

Ո՛րդեակ՝ եթէ տեսանես զկուռիլն երկու մարդոյ ընդ միմեանս, մի մտաներ ՚ի մէջ նոցա, զի մի ՚ի գուր մեռանիցիս:

Ո՛րդեակ՝ եթէ կամիս իմաստուն լինիլ
պահեան զլեզուդ քո ՚ի չար խօսից:

Ո՛րդեակ՝ միշտ խորհեան զաղքատն և ըզ-
անանկն, զի յաւուր չարէ փրկէ աստուած
զանձն քո:

Ո՛րդեակ՝ պատուեան զհայր քո և զմայր,
զի ՚ի հասանիլ որդւոց քոց՝ գտցես և դու զնոյն:

Ո՛րդեակ՝ մի՛ գողանար զինչս մարդկանց,
զի մի՛ գուցէ աստ մահու մեռանիցիս, և անդ
յանչէջ հուրն այրիցիս:

Ո՛րդեակ՝ ընդ թշնամւոյն կորստեան մի՛
խնդար, զի առաջի քո մահ կայ:

Ո՛րդեակ՝ յորժամ տեսանես զծերն, յոան
կաց և պատուեան զնա, զի և այլք զնոյն ա-
րասցեն քեզ:

Ո՛րդեակ՝ եթէ դադարի գեան ՚ի գնա-
ցիցն՝ կամ քաղցրանայ որպէս զմեզու՝ և կամ
սպիտակի ագռաւն որպէս զաղաւնի, նոյնպէս
թողու անզգամն զանզգամութիւն իւր:

Ո՛րդեակ՝ մի՛ յաճախեր ՚ի սուն բարեկա-
մին քոյ, զի մի՛ յազեալ ասիցեն զքեզ:

Ո՛րդեակ՝ օրինաց նոյննկնդ լիւր լիւր, զի
պատուիրանն նոյն ամուր պարիսպ է մարդոյ:

Ո՛րդեակ՝ կրթեան զլեզուդ քո՝ խօսիլ ըզ-
բարի ՚ի մէջ ամենեցուն:

Ո՛րդեակ՝ եթէ խրատ բարի սացես մար-
դոյ , գտանես դու զբարի . զի չարն՝ հանա-
պազ ՚ի չար մարդէն ծնանի :

Ո՛րդեակ՝ եթէ կամիս զգործս ինչ բարիս
գործել՝ յառաջ մի՛ պարծիր , զի մի՛ գուցէ յե-
տոյ չկարիցես գործել , և լինիցիս ծաղը այլոց :

Ո՛րդեակ՝ մի՛ ցանկար մարդոյ արեան , և
մի՛ սիրեր զկռիւ . այլ սիրեան զխօսքս կակու-
ղըս , որ շիջուցանէ զհրաբորբոք գազանաց-
եալ սիրաս մարդոյ :

Ո՛րդեակ՝ յորժամ ըմպես գինի , մի՛ շատա-
խօս լինիր . զի ՚ի շատ խօսից ծնանի կռիւ և
յետոյ խռովութիւն՝ գուցէ և սպանութիւն :

Ո՛րդեակ՝ խաղաղութիւնն մայր է ամե-
նայն առաքինութեան :

Ո՛րդեակ՝ մինչ կօշիկդ յոսա քո է՝ կոխեան
զիուշն , և արան ճանապարհ ընկերի քում՝
որ ընդ քեզ գնալոց է :

Ո՛րդեակ՝ ջանան և ստացիր անուն բարի ,
զի ըսւ է մարդոյն անուն բարի՝ քան թէ
զգեղ գովելի . զի գեղեցկութիւնն հիւան-
դութեամբ և մահուամբ ապականի , և ա-
նուն բարի մնայ յաւիտեան :

Ո՛րդեակ՝ եթէ հանդիպիս կնոջ անզգամի՝
հնազանդիւր նմա , և կամ փախիւր ՚ի նմանէ :

Ո՛րդեակ՝ ՚ի լեզու քու մմէ երկն չի՛ր՝ քան
յօտար թշնամուոյ . զի այլ ոք ոչ կարէ այնչափ
մէասեւ զքեզ՝ եթէ ոչ նա :

Ո՛րդեակ՝ լաւ է թշնամութիւնն առն իւ
մաստնոյ , քան թէ սիրելու թիւնն առն անմտի :

Ո՛րդեակ՝ զայր անմիտ և արբեցող ՚ի գործ
ինչ մի՛ առաքեր , զի բազում չարիս ածէ ՚ի
վերայ քո :

Ո՛րդեակ՝ անմիտ մարդոյ խրատ տալն այն
պէս է , ոնց թէ ոք փոշի ցանէ ՚ի գնացս գետոց :

Ո՛րդեակ՝ զչար և զանմիտ և զլեզուանի և
զամբարհաւած մարդն՝ ՚ի մէջ տան քո մի՛ ըն-
դունիր , զի ՚ի գործոց նորա ամօթով լինիս :

Ո՛րդեակ՝ եթէ լինիս տէր աշխարհի , ըզ-
մահն քո մի՛ մոռանար . և որչափ մեծութեան
հասանիս , այնքան ՚ի խոնարհութեան կալ
զանձն քո :

Ո՛րդեակ՝ անձ զգինի վասն ուրախութն ,
քայց անս՝ թէ մի գուցէ ըմպէ գինին զքեզ .
զի փառաւոր առնէ երբեմն զմարդն , և եր-
բեմն ամօթալից և ծաղր :

Ո՛րդեակ՝ լաւ է կռուիլ ընդ մարդոյ զին-
ուորի , քան թէ զհետ կնոջ անզգամի :

Ո՛րդեակ՝ մարդ չարաբարոյ և ամբարտա-
ւան՝ յորժամ տեսանէ զկուիւ ընկերի իւրոյ ,

ցնծայ և ուրախ լինի . և կարծէ 'ի մտի իւրում
 թէ փառս ինչ յաւելլու յանձին իւրում :

Ո՛րդեակ՝ յորժամ քաղցրանայ աչք այ 'ի
 վերայ քո՝ առաւել երկնչի՛ր 'ի պատուիրա-
 նացն նորա , որով յաչա թագաւորաց հաճոյ
 երևիս , և ամ մարդ սիրէ զքեզ . և յորժամ
 արհամարհիս յաստուծոյ՝ յայնժամ թագաւորք
 և իշխանք և ամենայն սիրելիք քո ասեն զքեզ :

Ո՛րդեակ՝ մի ասեր աղքատին , թէ դու
 ինձ չար ոչ կարես առնել , զի բազում չարիք
 և անարգանք յոչինչ մարդկանէ ելանեն :

Ո՛րդեակ՝ եթէ կին օտար սիրէ զքեզ , և
 ասէ՝ թէ դու լաւ ես քան զիմ այրն , մի հա-
 ւատար նմա . զի կին պոռնիկ՝ նման է շան որ
 խառնակի ընդ ամ շանց , և նման է գերեզմանի
 բռելոյ՝ որ 'ի ներքս լի է գարշահոտութի :
 Ո՛րդեակ՝ մի լրբալեզու լինիր 'ի մէջ ըն-
 կերացոյ , և կարծեր թէ սիրելի ես նոցա . զի
 յորժամ յանդիմանեն զքեզ , լինի բան քո
 ամօթալից :

Ո՛րդեակ՝ որ ամբարտաւան է աչօք և ա-
 դահ սրտիւ , այնպիսի մարդն թէպէտ ունի ինչս
 բազումս , այլ ունայն է և կենդանի մեռեալ :

Ո՛րդեակ՝ նախ փորձեա՛ զբարեկամս քո ,
 և ապա յայանեա՛ նմա զխորհուրդ մտաց քոց .

զի այն է ճշմարիտ և ստոյգ բարեկամն՝ որ ՚ի
 ժամանակի բարկութեան և կամ կռւոյ սի-
 րելոյն իւրոյ՝ ոչ երբէք յայտնէ զխորհուրդ
 մարդոյ, այլ առաւել քան ՚ի ժամանակս սի-
 րոյ՝ թաքուցանէ զայն ՚ի սրաի իւրում:

Ո՛րդեակ՝ ազահութիւնն մայր է ամենայն
 չարեաց և ճնուցիչ ամենայն մեղաց, բայց
 ողորմութիւնն ձեռնաու է ամենայն բարեաց:

Ո՛րդեակ՝ եթէ սիրես զխաղաղութիւն, ՚ի
 դատաստանէ պատրաստ կաց. զի որ հանապազ
 յօժարի ՚ի դատաստան, նա մայր է նմ մեղաց և
 չարեաց, յիմարեալ է և ոչ գիտէ զինչ առնիցէ:

Ո՛րդեակ՝ զչարախօսութիւն զումեքէ մի
 ասեր և մի ընր. զի կարի խոցէ զսիրա մար-
 դոյն, և ապականէ զփառս մարդկան, զի նա
 խառնիք մեծ է:

Ո՛րդեակ՝ եթէ կամիս մարդոյ զինչս սալ
 յառաջ մի պարծիր և մի խոստանար, զի մի
 գուցէ յետոյ ոչ կարիցես սալ, և լինիցիս
 ծաղր և այսն այլոց:

Ո՛րդեակ՝ ամբարտաւան մարդն հեռի է
 և օտար յրնտանեաց և ՚ի բարեկամաց իւրոց.
 այլ խոնարհն միշտ մերձ է՝ ոչ միայն ընտան-
 եաց և բարեկամաց իւրոց, այլ և հեռաւ որաց
 և անձանութից:

Ո՛րդեակ՝ լաւ է ստանալ ձի ծոյլ և պղերոգ
 և էշ ըստ վարուք, քան թէ ծառայ փախչող
 և ստասաց:

Ո՛րդեակ՝ մի երաշխաւոր լինիր բարեկա-
 մին քո, զի յետոյ բազում միշտս կրես մինչև
 մձարես զսարսս նորա:

Ո՛րդեակ՝ մարդ չարախորհուրդ և նա-
 խանձոտ՝ ոչ թէ միայն ատելեացն առնէ ըզ-
 չարութիւն, այլ բնութեամբ ամենեցունց
 հակառակ կայ:

Ո՛րդեակ՝ որպէս լերինք շտեմարանք սա-
 ռաց են, նոյնպէս և նենգաւորք՝ բնակարան
 չարեաց են:

Ո՛րդեակ՝ մի զհետ այլոց կանանց կատա-
 րեր զցանկութիւն քո. զի օտար կինն նման է
 ալի ջրոյ, զոր որքան ըմպես՝ այնքան առաւել
 ծարաւիս, և զանուն վատ ժառանգես:

Ո՛րդեակ՝ որպէս հուր միշտ ՚ի սապոյ բոր-
 բոքի, և որպէս արեգակն ՚ի ճառագայթից
 երևի և լուսաւորէ զարարածս, և կամ որպէս
 առիւծ՝ որ ուժեղութեամբն գողի, և որպէս
 բազայն սրնթաց առ ՚ի շաշերոյ թևոցն գո-
 մի. նոյնպէս և իմաստունն միշտ իմաստութիւն
 իւրով պայծառ երևի ՚ի մէջ ամենեցուն, և
 մանաւանդ ՚ի թագաւորաց և ՚ի մեծամեծաց

և յիշխանաց պատիւս ընդունիւ:

Որդեակ՝ առն խողամաի ոչ գոյ սիրելի երբէք. զի ասէ 'ի սրաի իւրում՝ թէ կեանքս ոչ անցանի, և ինչքս ոչ սրակասին. և ոչ գիտէ թէ յանկարծ աստուած տայ այնպիսւոյ մահ, և զինչս նորա այլոց, որք ոչ երբէք յիշեն զնա:

Որդեակ՝ այր անմիտ յորժամ արբենայ, յօժարի 'ի կռիւ. և կարծէ 'ի միտս իւր՝ թէ ոչ գոյ մեծ և հզօր քան զինքն. զի ոչ գիտէ թէ յորժամ հանդիպի ուրումն քաջի՝ յաղթի 'ի նմանէ, գուցէ և տայցէ սպանանել զինքն:

Որդեակ՝ որպէս հողն մայր է ամենայն անկոց, նոյնպէս և արբեցութիւնն մայր է ամենայն չարեաց:

Որդեակ՝ եթէ իշխան ես աշխարհի և մարդկան, պահեան զանձն քո 'ի զեղխութիւն. վասն զի 'ի քեզ են հոգք երկրաւորաց նմ:

Որդեակ՝ ատսի զգազան կատաղեալ՝ որ արձակեցաւ 'ի վերայ իմ, ոչ երկեայ 'ի նմանէ. և հանդիպեցայ թշնամւոյ իմոյ, ոչ յաղթեցայ 'ի նմանէ. բայց հանդիպեցայ կնոջ լիզւանւոյ, յաղթեցայ 'ի նմանէ:

Որդեակ՝ անկանի անօրէնն վասն չար գործոց իւրոց, և ոչ կարէ կանգնիլ վերասին. բայց թէ և անկանի արդարն, անդէն կանգ

նի վասն բարեաց իւրոց:

Ո՛րդեակ իմ Նաթան՝ զայս ամենայն զոր
ուսուցի քեզ, ՚ի միտ ան և կատարեան, որով
լինիս իմաստուն ՚ի մէջ ընկերաց քոց, և ՚ի
յաչս թագաւորաց երեւելի:

Ա՛յս է խրատն՝ զոր ուսուցի որդւոյն իւ
մոյ Նաթանայ. և ես խիկարս գիտելի թէ
զամենայն խրատս իմ պահէր ՚ի սրտի իւրում.
այլ նա որպէս զփոշի զոր հոսէ հողմ ՚ի վերայ
երեսաց երկրի, այնպէս արար զխրատս իմ:
Զ ՚ի յառաջ ետու նմա զսունս, զծառայքս,
զինչս և զապարանս և զիշխանութիւնս իմ, և
արարի ատենադպիր Սենէքերիմ արքային իմոյ:
Բայց նա մոռացեալ վաղվադակի զխրատս իմ,
և սկսաւ չարիս գործել և առնել անիրաւու
թիւնս. զծառայքս իմ ոչ խնայէր, և զինչս իմ
վառնէր, և զբազում խրատս իմ անատես արարէ:

Եւ ես խիկարս յորժամ ատեսի զչարութիւ
նաթանայ՝ գնացի առ թագաւորն իմ Սենէ-
քերիմ, և պատմեցի նմա մի ըստ միոջէ զչա-
բութիւնն նորա. և խնդրեցի թուղթ ՚ի թա-
գաւորէն, զի մի իշխեսցէ Նաթան մերձե՛նալ
ընչից իմոց: Եւ հրամայեաց թագաւորն՝ բե-
րին զՆաթան. և ետուր պատուէր նմա՝ ոչ

մերձենալ ընչից իմոց . և ես խիկարս ելեալ
գնացի 'ի սուենս իմ:

Եւ Նաթան սկսաւ մտօք չարիս գործել
վասն իմ 'ի դուռն թագաւորին . և խորհեալ
շինեաց կնիք մի ըստ նմանութեան կնքոյ իմոյ ,
և փորեաց զիմ անուենս , և կոխեաց 'ի թղթի
միում , գրեալ զգիր 'ի բերանոյ իմմէ առ
Փարաւօն արքայն Եղիպտացւոց՝ որ չարկամ
էր զՏեա իմ առ թագաւորին իմոյ Սենէքե-
րիմայ . և գրեալ էր այսպէս . « Խիկար յիմաս
տասիրէ ողջոյն ընդ քեզ՝ Փարաւօն արքայ .
յորժամ գիրս առ քեզ հասանի՝ փութով
ժողովէ զզօրքդ , և եկ 'ի դաշան Արծրունեաց՝
'ի քսան և եօթն օրն հրոսից ամսոյն , յո-
լում ըմբռնեսցես զՍենէքերիմ թագաւորն
առանց սպառերազմի » :

Եւ յորժամ գրեաց Նաթան այսպէս , խոր
հեցաւ և գրեաց թուղթ մի ևս նման սմա՝
'ի բերանոյ թագաւորին իմոյ առ իս , զոր
գրեալ էր այսպէս . « Ի Սենէքերիմ արքայէ
ողջոյն ընդ քեզ՝ սիրելի և իմաստուն իմ խի-
կար . յորժամ գիրս առ քեզ հասանի՝ փու-
թով ժողովէ զզօրքդ բազում , և եկ 'ի դաշան
Արծրունեաց՝ 'ի քսան և եօթն օրն հրոսից

ամսոյն , յորում պատերազմեսցեն զհետ զօրացն ֆարաւօնի . քանզի դեսպանք ֆարաւօնի եկեալ են առ իսա :

Եւ յորժամ գրեաց զգիրն՝ գաղտնաբար տարեալ ետուր հաւատարիմ մարդոյ , զոր բերեալ հասոյց ՚ի ձեռս իմ : Եւ ես խիկարս յորժամ առի զԹուղթն՝ բացի և կարդացի զգրեալն , վարկադակի ժողովեցի զօրք , և կատարեցի զհրամայեալն ՚ի Թագաւորէն իմմէ . անմեղութեամբ . և ոչ գիտացի զչարութիւնն Նաթանայ՝ որ առ իս :

Եւ զմիւս Թուղթն՝ զոր գրեալ էր ՚ի բերանոյ իմմէ առ ֆարաւօն արքայն , զայն կրնբեալ և տարեալ ձգեաց գաղտնաբար ՚ի դռնն գարպասի Թագաւորին . զոր գտեալ մի ոմն ՚ի ծառայից՝ տարեալ ետուր ՚ի ձեռն Սենէքերիմ արքային իմոյ : Եւ իբրև բացեալ կարդացին զԹուղթն առաջի Թագաւորին՝ զահի հարեալ լի եղև սրտմութեամբ , և ոչ գիտէր զինչ առնեին խիկարիս :

Յայնժամ Նաթան՝ որ դպիր էր Թագաւորին՝ եմուտ առ Թագաւորն և երկրպագեաց և ասէ՝ « Ողջ լեր արքայ և տէր իմ , զի հայր իմ խիկար ոչ գիտաց զերախտիքս քո , և կամի խախանել զԹագաւորութիւն քո . և

եթէ ոչ հաւատաս քանիս՝ կացցուք մինչև
 եղիցի կատարումն քսան և եօթն աւուրն հրո-
 տից ամսոյն . և ապա ելցուք և գնացուք ՚ի
 դաշան Արծրունեաց , և աեսցուք աչօք մերովք
 զերախտամուտացութի խիկարայ՝ որ առ քեզ ։

Յայնժամ Սենէքերիմ թագաւորն երկմա-
 եալ կայր տրամուծիք մինչև եղև օրն այն .
 յորում ես խիկարս առեալ ընդ իս զզօրս իմ՝
 եկեալ բնակեցայ ՚ի դաշան Արծրունեաց : Եւ
 ելեալ թագաւորն Սենէքերիմ գայր ՚ի դաշան
 Արծրունեաց փորձել զիս : Եւ ես յորժամ
 աեսի զզօրքն Սենէքերիմայ՝ ծաղը արարեալ
 խաղացի ՚ի մէջ դաշտին՝ դէմ յանդիման ըզ-
 հես զօրաց նոցա պատերազմիլ . քանզի կար-
 ծէի թէ զօրք փարաւօնի է :

Յայնժամ տեսեալ Սենէքերիմայ զզօրքն
 իմ , փախտաական եղև . և ես գնացի զօրօք
 իմովք փոքր ինչ զկնի նորա և ոչ գտի . դար-
 ձայ և եկի յօթևանս իմ , և ուրախացայ մտօք
 իմովք՝ թէ փախուցի զփարաւօն զօրօքն իւ-
 րովք : Եւ գնաց Սենէքերիմ փախտական ՚ի
 դարպասն իւր խելագարեալ լի տրամուծիք ,
 և ոչ գիտէր թէ զինչ արասցէ խիկարիս զոր
 ըմբռնեացէ :

Յայնժամ եմուտ Նաթան առ թագաւ

ւորն՝ ողջունեաց և ասէ, ահա տեսեր աչօքդ
 զերախտամուտացութիւն խիկարայ . այժմ մի
 տրամիր, զի ես ածից զհայրն իմ խիկար ա-
 ռաջի քո: Եւ ասաց Սենէքերիմ ցՆաթան,
 եթէ դու բերցես զնա և տացես ՚ի ձեռս
 իմ, զոր ինչ խնդրեսցես՝ տաց քեզ: Եւ եր-
 կրպագեալ Նաթան՝ ել արտաքս և գնաց . և
 գրեաց թուղթ մի ՚ի բերանոյ թագաւորին
 իմոյ, և ետուր հաւասարիմ մարդոյ միում
 ասելով թէ սարեալ տացես զայս ՚ի ձեռս
 խիկարայ, զոր էր գրեալ այսպէս: «Սենէքե-
 ըիմ արքայէ ողջոյն ընդ քեզ՝ սիրելի և իմաս-
 տուն իմ խիկար . քանզի յոյժ հաճոյ թուե-
 ցաւ թագաւորիս Սենէքերիմայ երախտիքն
 քո, և զի փախեան զօրք Փարաւօնի յերեսաց
 քոց . այժմ տուր հրաման զօրաց քոց գնալ
 խաղաղութեամբ ՚ի տեղիս իւրեանց . և դու
 ել և եկ, զի ուրախ եղէց ընդ քեզ»:

Եւ ես խիկարս յորժամ կարդացի՝ ուրախ
 եղէ յոյժ . և ետու հրաման զօրաց իմոց գնալ
 յօթեանս իւրեանց . և ես ելեալ գնացի ու-
 րախ լինել ընդ թագաւորին իմոյ: Եւ յորժամ
 հասի միամտութեամբ ՚ի դուռն թագաւորին,
 անսեալ զիս զինուորացն՝ ըմբռնեալ տարան

ածինն առաջի թագաւորինն:

Եւ յորժամ ետես թագաւորն զիս՝ լի եւ զլս արամու թեամբ, և հրամայեաց տալ զայն թուղթն ՚ի ձեռս իմ. զոր մինչդեռ բացեալ կարդացի՝ յայնժամ կապեցաւ լեզուս, և գընաց իմաստութիւնս, և ոչ գիտէի թէ զի՛նչ պատասխան տացից Սենէքերիմայ արքային իմոյ: Այլ ողորբանօք ասացի՝ արքայ և տէր իմ, մի՛ ՚ի զուր դատեր զիս, զի չունիմ տեղեկութիւնս յայս բանէս, այլ անպարտ եմ: Եւ ոչ եղունկն արաչանաց իմոց, և հրամայեաց սպանանել զիս:

Յայնժամ Նաթան քեռ որդին իմ կապեաց զձեռս յետս իոխանակ բարի խրատուցն իմոց զոր յառաջն ետու նմա: Եւ ես դարձեալ արաչեցի թագաւորին իմոյ՝ թէ տո՛ւր զիս ՚ի ձեռն Աբուսմաբայ զօրապետին, զի նա տարեալ զիս ՚ի տունս իմ՝ ՚ի վերայ սեմոց դրանց իմոց կատարեցէ զհրամանս քո. բայց զիս գլխատեալ՝ զգլուխն իմ հարիւր կանգուն հեռի թաղեցէ ՚ի մարմնոյս: Եւ հրամայեաց թագաւորն Աբուսմաբայ կատարել զհրամանս իւր ըստ խնդրանաց իմոց:

Եւ կալեալ զիս Աբուսմաբայ սանիլ ՚ի

գլխատու մն՝ ես խիկարս գաղանաբար աղղարարի առ Աբուստան կինն իմ, թէ պատրաստեա՛ն հազար աղջկունս , և արա՛ն կերակուրս ազգի ազգի . զի յորժամ եկեսցուք այդր՝ արա՛ն ընթրիս , և բե՛ր հազար կոյս աղջկունս , որք լայցեն զմահն իմ . և կինն իմ վազլաղակի կատարեաց զհրամանս իմ : Եւ յորժամ գնացաք հասաք ՚ի տունս իմ , խնդրեցի աղաչանօք յԱբուսամաքայ զօրապետէն և ասացի , սո՛ւր ինձ զհրամանս առնուլ ընթրիս առ սիրելիս և առ բարեկամսն իմ վոքր ինչ , քանզի այլ ոչ մնամ կենդանի :

Եւ ասաց Աբուսամաք՝ արա՛ն որպէս և կամիս . և արարի ընթրիս մեծ սիրելեաց իմոց , որք եկեալ էին անդ . և բերի կերակուրս զանազան , և զգինիս զանապակս , նաև զբազում աղջկունսն՝ որք լայցեն առաջինոցա զմահն իմ : Եւ նոքա ՚ի սաստիկ սրամուժե՛նէն արբեալ ՚ի գինւոյն՝ անկեալ նիրհեցին : Եւ ես խիկարս կապեալ երկաթօք , գնացեալ զարթուցի զԱբուսամաք զօրապետն և ողորանօք ասացի նմա , գիտե՛ս եղբայր՝ զի երբ բարկացաւ թագաւորն ՚ի վերայ քո՝ ես ՚ի ձեռս իմ , թէ տա՛ր սպան զԱբուսամաք . և ես առեալ տարայ զքեզ , և ոչ սպանի . այլ պահեցի գաղտ , և եկ-

եալ ասացի թագաւորին թէ սպանի զԱբուս-
մաքն: Եւ յորժամ անցաւ փոքր ժամանակ ՚ի
վերայ, գնաց բարկութիւն թագաւորին, և
զղջացաւ ՚ի սպանումն քո, և ասաց՝ աւանդ
քեզ Աբուսմաք, զի դու կենդանի լինելոց
էիր: Եւ ես երբ լուայ զայս ՚ի թագաւորէն՝
եկեալ հանի զքեզ, և սարայ առաջի թագա-
ւորին, և բազում պարգևս առի: Այժմ ա-
ղաչեմ զքեզ, արասցես փոխարէն նորա առ-
խա. զի գոյ ՚ի ներքոյ սեմոց դրանց իմոց հար-
մի մեծ, ձգեա՛ զիս անդ զաղտնաբար. և ես
ուենիմ ծառայ մի մահապարտ՝ որ է մարդաս-
պան, և ահա կապեալ կայ ՚ի բանան, և ունի
զնմանութիւնս իմ, զգեցո՛ նմա զհանդերձս
իմ, և զարթո՛ զժողովուրդն, և շուտով կտրեա՛
զգլուխն նորա, և սար թաղէ զգլուխն հար-
իւր կանգուն հեռի ՚ի մարմնոյն: Եւ եղև
ուենիւղիւր Աբուսմաք ինդրուածոց Խիկարիս,
և արար այնպէս. և գնաց առ թագաւորն՝
թէ սպանի զԽիկար. և յոյժ ուրախացաւ
թագաւորն ՚ի սպանումն իմ:

Եւ ապա գնաց Նաթան ինդրել ՚ի թա-
գաւորէն հովուել զստացուածս իմ. և թա-
գաւորն հրամայեաց տալ նմա զճամ ինչս: Եւ
գայր Նաթան ՚ի սուենն իմ հանապաղ. ուսէր

և ընդէր և աղտեղէր զճառայքս և զաղախ-
 նեայքս իմ . և կամէր չարիս գործել զհետ
 կնոջ իմոյ . և կինն իմ ոչ հնազանդէր կամաց
 նորա: Եւ ես զայսոսիկ լսէի ականջօք իմովք ,
 զձայնն գուսանաց , և զպագշոսիլն ընդ կնոջ
 իմոյ . բայց խնդրէի օր նմա , և ոչ գասնէի :
 Եւ յորժամ անցաւ ժամանակ ինչ՝ լսեց Փա-
 րաւօն արքայն Եգիպտացւոց , եթէ Սե՛նէ-
 քերիմ արքայն ես սպանանել զԽիկար՝ յոյժ
 ուրախացաւ , և առաքեաց գիր առ Սե՛նէքե-
 րիմ արքայ զոր գրեալ էր այսպէս : « Փարա-
 ւօն արքայէ ողջունիւ ծանիր Սե՛նէքերիմ
 թագաւոր . քանզի կամիմ շինել դարպաս մի
 ՚ի յօդս երկնից անսիւն և անգերան . առաք-
 եա՛ն ինձ ճարտարագործս , որ եկեալ շուտով
 կաաարեսցեն զհրամանս իմ . և թէ ոչ առա-
 քես՝ գամ բազում զօրօք , և աւեր ածեմ ՚ի
 վերայ երկրիդ , և առնում ՚ի քէն հարկո՞ :

Եւ յորժամ բերեալ ետուն զթուղթն ՚ի
 ձեռն Սե՛նէքերիմայ՝ բացեալ կարդաց զայն ,
 և իսկոյն զարհուրեցաւ բոլոր անձն նորա ՚ի
 բանից Փարաւօնի : Եւ կոչեալ զԼեծամեծս և
 զմաստունս և զդպիրս և ասէ՝ քանզի սպա-
 նեցաք զԽիկար , այլ ո՛վ կարէ սալ սխառա-

խանի փարաւօնի: Եւ ասացին մեծամեծքն՝
 անբայ յաւիտեան կաց. քանզի ահա գոյ որ-
 դէզիր խիկարայ Նաթան՝ որ առաւել հան-
 ճարեղ և իմաստուն է քան զխիկար, և նա
 կարէ տալ պատասխանի գրոյս:

Եւ հրամայեաց թագաւորն կոչել զՆա-
 թան. և իբրև եկն՝ ետուն զթուղթն ՚ի ձեռն
 և կարդաց: Ասէ թագաւորն՝ կարօղես տալ
 պատասխանի փարաւօնի. և ասէ Նաթան՝ այս
 անհնարին է ՚ի մարդկանէ: Յայնժամ տարա-
 կուսեալ Սենէքերիմ կոծէր զանձն իւր ասե-
 լով՝ աւանդ քեզ խիկար իմաստուն իմ, զի
 սպանեցաք զքեզ. այժմ ոչ կարեմք տալ պա-
 տասխանի, և կրեմք վիշտ բազում ՚ի փարա-
 ւօնէ: Եւ եթէ որ բերցէ զքեզ կենդանի
 առաջի իմ խիկար, սաց նմա ըստ կշռոյ ան-
 ձին քում ոսկի:

Եւ լուեալ Աբուսմաք՝ երկիրեպագ թա-
 գաւորին և ասաց՝ ողջ լեր արքայ իմ. զի
 թէպէտ այժմ կոծես զանձն քո ՚ի վերայ ըս-
 պանման խիկարայ, այլ յետոյ եթէ որ բերցէ
 զխիկար կենդանի առաջի քո՝ փոխանակ նորա
 սպանանեմ զնա: Եւ ասէ թագաւորն՝ ոչ
 սպանանեմ զնա, այլ տամ պարգևս բազումս
 նմա: Եւ երկրպագեալ Աբուսմաք թագա-

ւորին՝ եկեալ վաղվաղակի եհան զիս ՚ի հո-
 բէն . և տարեալ կացոյց առաջի Սե՛նէքերիմայ :
 Եւ յորժամ ետես թագաւորն զիս կենդանի՝
 յարեաւ յաթուոյն . և անկաւ զպարանոցաւս
 իմով . և համբռնեաց զիս և ասաց , ո՛վ խի-
 կար՝ մեռեալ էիր և կենդանացար : Եւ յոյժ
 ուրախ եղև թագաւորն . և ետ պարզ և ս մե-
 ծառն ծա Աբուսմաքայ զօրասլեանն . և հրա-
 մայեաց պատուել զիս յաւուրս քառասուն .
 և յետ լուման քառասուն աւուրց՝ հրամայ-
 եաց թագաւորն բերել զիս առաջի իւրն . և
 ետ կարդալ ինձ զթուղթն Փարաւօնի : Եւ
 յորժամ կարդացի ես խիկարս՝ ասացի առ
 թագաւորն՝ մի՛ տրամիր և մի՛ կոծեր զանձն
 քո , զի ես երթամ և տամ պատասխանիս Փա-
 լաւօնի , և առնում հարկս ՚ի նմանէ և գամ :
 Եւ իբրև լուաւ թագաւորն իմ , յոյժ ուրախ
 եղև ՚ի բանից իմոց :

Եւ ապա ես խիկարս՝ առաքեցի պատուեր
 առ Աբեստան կին իմ , թէ ըմբռնեան երկու
 ձագս արծուոյ , և սուր մանկել պարան մի եր-
 կայն . և բեր զերկուս սանդեայ սղայս , և
 երկու կին որ պահեն զսղայսն : Եւ ուսն սր-
 դայոցն գոչել , թէ կաւ՝ ծեփ՝ աղիւս բերէք :

Եւ զոր նամ կապեա՛ն զերկու սողայնն ՚ի վերայ
արծուոյ ձագուցն , և թռն ՚ի յօդն պարա-
նաւն , և իջն ՚ի վայր՝ մինչև կատարեալ ուսա-
նիցին զելանելն և զիջանելն և զբարբառիլն :

Եւ կինն իմ իմաստուն էր , և փութով կա-
տարեաց զհրամայեալն իմ : Եւ ես առի հրա-
մանն ՚ի թագաւորէն իմմէ , և ելեալ գնացի ՚ի
տունս իմ . և առի զերկու սողայնն և զձագս
արծուոյ , և եդի ՚ի մէջ արկեղ միոյ և ելեալ
գնացի առ Փարաւօն արքայն : Եւ յորժամ
հասի յԵգիպտոս՝ իջեմանեցայ ՚ի տան միում ,
և թողի անդ զարկղն , յոր իջեմանեալ էի . և ես
գնացի առաջի Փարաւօնի և երկրպագի նմա :

Եւ ասաց զիս Փարաւօն , ի՞նչ մարդ ես
դու , կամ ուսա՞ն գաս . և ես ասացի , արքայ
յաւիտեանն կաց . ահա ծառայ քո է , զոր ա-
ռաքեաց Սենեքերիմ արքայն կատարել ըզ-
հրամանս քո . և բերեալ եմ ընդ իմ ճարտա-
րագործս , որ շինեսցեն դարպաս յօդս : Եւ ա-
սաց Փարաւօն , զի՞նչ է անուն քո . և ես ա-
սացի՝ Ապակոյ է իմ անունն : Եւ հարցեալ
զիս Փարաւօն՝ թէ զի՞նչ պէտք են ճարտա-
րագործացդ ՚ի պէտս դարպասին . և ես ասացի
ցնա՛ տուր բերել կաւ՝ ծեփ՝ աղիւս :

Եւ հրամայեաց թագաւորն զոր բերին Վաղվաղակի . և ես Խիկարս գնացի կապեցի զերկու աղայսն ՚ի վերայ երկու արծուոյ ձագուցն , և թռուցի դէպ ՚ի յօդս : Եւ աղայքն աղաղակէին գոչելով , կաւ՝ ծեփ՝ աղիւս բերէք , որով շինեմք զդարպասն : Եւ ոչ ոք կարէր հանել ինչ ՚ի վեր . և ես ասացի՝ հանեցէք ՚ի վեր , զի մի դատարկ մնացեն : Եւ ակեսեալ զայս զօրքն Փարաւօնի՝ փախեան և անկան ՚ի դարպասն . և պատմեցին Փարաւօնի զսքանչելիան ակենայն :

Եւ ելեալ Փարաւօն ետես զաղաղակ արդայոցն ՚ի յօդն , զարմացաւ և ասաց ՚ի մախլուամ՝ թէ սա շատ լաւ է իմաստութեամբքան զԽիկար . և ոչ գիտէր թէ ես էի Խիկարն , որ մախ առ թագաւորն և երկրպագէ նմա : Եւ ասաց զիս Փարաւօն , երդմնեցուցանեմ զքեզ , զի ասա ինձ զսոոյգն՝ ո՛վ ես դու , և ասացի ցնա , ես եմ Խիկարն : Եւ ասաց Փարաւօն՝ ո՛վ թշուառական , կենդանեացար . և դարձեալ ասաց , ո՛վ իմաստուն Խիկար մեկնեալ ինձ զայս՝ թէ զինչ է սիւնն այն ՚ի վերայ սեան , և մայրք երկոտասան ՚ի վերայ մայրից , և անուանք երեսուն ՚ի վերայ անուանց , և սուրհանդակք երկու՝ մինն սեաւ

և միւսն սպիտակէ :

Յայնժամ և ես ետու պատասխան նմա և
ասացի, թէ սիւնն այն՝ տարին է . մայրքն եր-
կոսասան՝ ամիսք տարւոյն են . անուանքն ե-
րեսուն՝ աւուրք ամսոյն են . սուրհանդակքն
երկու՝ սիւն և գիշերն է : Եւ դարձեալ ա-
սաց Փարաւօն, սիւ խիկար մանեա՛ ինձ պարան
յաւազոյ : Եւ ես գնացի ծակեցի զկողմն որ-
մոյ միոյ դէպ յարևելա . և ՚ի ծագել արևուն ,
անկաւ շողն ՚ի ներս . և ես առի աւազ և
փոշի երկու ամիս , և ետու դէմ արեգական ,
որ ասնէր ոլոր ոլոր ՚ի ծակէն ՚ի ներս . և ես
գոչէի՝ կծեցէք զպարան շուտով : Եւ զահի
հարեալ Փարաւօն սպուշ մնաց . և կոչեալ
զիս առ ինքն՝ ետ ինձ պարգևս բազումս՝ և
հարկս թագաւորին իմոյ , և շնորհակալ եղև
՚ի նմանէ :

Եւ ես խիկարս ելեալ եկի առ Սենեքե-
րիմ թագաւորն իմ , և անկեալ համբուրեցի
զոտս նորս . և պատեցի մի լաս միոջէ զպա-
տասխանիսն Փարաւօնի . այլ և զառաջին գրոյն
զանմեղու թիւնն իմ : Եւ յորժամ լուաւ զայս
ամենայն , յայնժամ յոյժ ուրախ եղև Սենե-
քերիմ ասելով , խիկար իմաստուն իմ՝ այժմ
ցնծու թեամբ ուրախ եմ ՚ի կենդանու թիւն

քո . և զոր ինչ խնդրես յինէն՝ տաց քեզ :

Եւ ես Խիկարս շնորհակալ եղէ յարքայէս խմել և սասցի , ոչ է պիտոյ ինձ գանձս կամ պատիւս՝ բայց միայն զայս ինչ խնդրեմ ՚ի քէն , զի զՆաթան քեռ որդին իմ որ է որդէգիր ինձ և աշակերտ , հրամանաւ քո տացես ինձ . զի ուսուցից նմա զպահասորդան խրատուց իմոց՝ զոր յառաջագոյն ետու նմա : Եւ հրամայեաց թագաւորն տալ զՆաթան ՚ի ձեռս իմ , և սասց՝ զոր ինչ կամիս արան դմա : Եւ ես կալայ զՆաթան , և տարայ ՚ի սուննս իմ . և սկսայ ասել ցնա այսպէս : « Ո՛րդ եակ իմ՝ Նաթան՝ զառաջին խրատան զոր ետու քեզ քաղցրութեամբ՝ ոչ պահեցեր ՚ի մտի քում , այլ կորուսեր . արդ՝ այժմ ուսուցանեմ քեզ դառնութեամբ . » :

Եւ կապեցի զնա երկաթի կապանօք , և եղի ՚ի պարանոց նորա հինգ հարիւր լիար երկաթ , և յանձնեցի զնա բելիար ծառային իմոյ . և հրամայեցի առնուլ թուղթ և գրիչ ՚ի ձեռին իւրում , զի ՚ի մտանէն և յերանէն իմ զոր ինչ առնիցեմ Նաթանայ՝ գրեցէ : Եւ ետու պատուէր նմա , զի զհաց և զջուր սասցէ նմա այնքան՝ որ ոչ մեռանի և ոչ զուարթանայ :

Նախ և յառաջ զարկի բիր ՚ի թիկունս նորա և ասացի :

Ո՛րդեակ իմ Նաթան՝ ունկն մարդոյ եթէ ոչ լուիցէ , զթիկունսն ծեծելով լեցուցանեն :

Ո՛րդեակ իմ Նաթան՝ յաթոռ փառաց նստուցի զքեզ , այլ դու յաթոռոյ իմոյ ընկեցեր զիս և կործանեցեր :

Խօսեցաւ ընդիս Նաթան և ասաց , զիայդ ուրացար զքեռ որդին քո : Եւ ես ասացի , ո՛րպէս ոչ ուրացայց . քանզի եղեր ինձ որդեակ՝ որպէս կարիճ՝ն այն որ եհար զասեղն , որ ասղան ծայրն չար էր քան զիւրն . և դարձեալ եհար զոսից ուղտուն , որ հարեալ զթաթն կարճին՝ սատակեաց զնա :

Ո՛րդեակ՝ զի եղեր ինձ որպէս վայրենացեալ եղն , որ էարկ զտորգն , և անկաւ վարացն , և միտաւորեցաւ իւր ոտքն :

Ո՛րդեակ՝ զի եղեր ինձ որպէս այժն այն՝ որ ուտեր զտորոնն , և ասէր՝ ես ՚ի կենդանութեան իմում ուտեմ զքեզ , թո՛ղ յիտայ հանեն զքո արմասն , և ներկին զմորթին իմ :

Ո՛րդեակ՝ զի եղեր ինձ որպէս այրն այն՝ որ ձգեաց նետ դէպ ՚ի յերկինս թէպէտ ոչ կարաց հասուցանել , այլ զանօրէնութիւնն շահեցաւ , և դարձաւ նետն ՚ի գլուխն իւր .

Նոյնպէս և դու կամեցար սպանանել զիս, այլ
անմեղու թիւնս իմ ապրեցոյց զիս:

Ա՛րդեակ՝ զի թէ ազի խողին ու թի կան
դուն երկայն լինի, ՚ի տեղի ձիոյն ոչ կարէ լինիլ:

Ա՛րդեակ՝ զի եղեր ինձ որպէս արջն այն՝
որ հանդիպեցաւ իշոյ միոյ, և ասաց ողջոյն
ընդ քեզ. և ասաց էջն՝ այդ ողջոյնդ ՚ի
միզն տեսուն լմոյ եղևցի, որ արձակեաց զիս
՚ի մարէն, և ես եկի և հանդիպեցայ քեզ, և
անսի զքո չար երեսդ:

Ա՛րդեակ՝ զի եղեր ինձ որպէս որոգայթն
այն՝ որ թաղեալ կայր ՚ի յաղըն, և եկեալ
ճ՛նձղուկ մի ասէ, զի՛նչ կայցես աստ. ասէ
ակնասն՝ աղօթս առնեմ առ աստուած. ասէ
ճ՛նձղուկն՝ զի՛նչ է այդ ՚ի բերանդ. ասէ ակ-
նասն՝ քաղցելոց հաց. և վազեաց ճ՛նձղուկն
առնուլ զհացն ՚ի յակնաստէն, և ակնասն ան-
կաւ ՚ի միզն նորա. և ասէ ճ՛նձղուկն՝ թէ այդ
է քաղցելոց հացն. ապա և աստուած այսպէս
լէ աղօթից քոց:

Ա՛րդեակ՝ զի եղեր ինձ որպէս շունն այն՝
որ դողայր ՚ի ցրտոյն, և եմուս ՚ի հնոց բըր-
ախն. և յորժամ տաքացաւ՝ սկսաւ հաջել
ընդ երես բրախն:

Ա՛րդեակ՝ զի եղեր ինձ որպէս շունն այն

ազահ , որ ունէր հաց մի 'ի բերանն՝ երթայր
 յեզեր գետոյն , և տեսեալ շուն մի այլ 'ի
 մէջ ջրոյն և հաց մի 'ի բերանն նորա , ձգեալ
 զիւր հացն 'ի բերանոյն , և անկաւ 'ի ջուրն
 զի առցէ յայնմանէ հացն . և իբրև եհաս 'ի
 մէջ գետոյն՝ ոչ գշունն եզիս և ոչ զհացն ,
 այլ խեղդեցաւ՝ և զըկեցաւ յիւր հացէն .
 նոյնպէս և դու զհացն իմ խելլ կամեցար՝
 և զըկեցար դու 'ի քո հացէն :

Եւ դարձեալ Նաթան աղաչանօք ասաց
 առ իս՝ մեղայ քեզ հայր , այլ չգործեմ զոր
 ինչ գործեցի . մի չարաչար տանջեր զիս :

Եւ ես ասացի՝ ահա տամ քեզ օրինակ մի .
 զի որպէս ծառն այն՝ որ բուսեալ էր յեզր գե-
 տոյ միոյ , և մարդ մի ծառայէր նմա . և յոր-
 ժամ հասանէր պտուղն՝ թափէր 'ի գետն և
 կորուսանէր , և գայր տէրն՝ ոչ գտանէր ըզ-
 պտուղն . և աշխատեցաւ այրն այն երկու և
 երեք տարի , այլ 'ի հասանիլ պողոյն թափէր
 'ի ջուրն , և ոչ շահէր 'ի նմանէ . և ապա կրու-
 բեաց զծառն , և ձգեաց 'ի ջուրն ասելով
 այսքան աշխատեցայ , զի՛նչ շահեցայ մինչև
 ցայժմ որ այսուհետև ևս շահեցայց : Նոյն-
 պէս և դու եղեր ինձ . զի յառաջագոյն այս-

չափ խրատ ետու քեզ՝ և ոչ լուար . այժմ՝ ևս
չունիա լսել . վասն որոյ արժանի ես այդմ չար-
չարանացդ՝ մինչև մեռանիցիա : Եւ ապա ըս-
տանի զնա , և բարձաւ չարն ՚ի միջոյ , և եղև
խաղաղութիւն :

Արդ՝ զի՛նչ մարդ՝ որ փոխանակ բարւոյն
չար հատուցանէ , իբրև զՆաթան չարաչար
մահուամբ կորնչի . յորմէ փրկեսցէ զմեզ քը-
րիստոս աստուած մեր , և նմա փառք յա-
ւիտեանս , ամէն :



Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ւ Ի Ն

ԱՂԶԿԱՆ ԵՒ ՄԱՆԿԱՆ , ԵՒ ՀԱՐՑՄՈՒՆԻՔ
ՆՈՑԱ ԸՆԴ ՄԻՄԵԱՆՍ

Եր մի էր մեծատուն և իշխան ՚ի քա-
ղաքի միում , և ունէր բազում գանձս , ոսկի
և մարգարիտ անգին , և պատուական ակունս .
և ոչ գոյր ՚ի մէջ քաղաքին այնմիկ քան զնա
աւելի մեծատուն : Եւ ինքն ծերացեալ էր և
զաւակ ոչ ունէր . և հանապաղ աղաչէր վասն
զաւակի առ աստուած՝ որ ետ նմա որդի ան-

նման և գեղեցիկ: Երբ մեծացաւ սղայն՝ ետ
զնա հայրն յուսումն իմաստութեան . որ ու
սաւ զամենայն իմաստասիրական բանս , և էր
պատերազմօղ անյաղթ . բայց յետոյ անկեալ
ի գեղխութեան՝ սպառեաց զգանձս հօրն և
մօրն , որք մնացին դատարկ:

Ասաց որդին ընդ հօրն և մօրն , կամի՞ք
հեռանալ յայս երկրէս , և երթալ յօտար
երկիր՝ յորում ոչ ճանաչեն զմեզ . և անդ
զամօթն ՚ի բաց թողեալ մուրանամք և ապ-
րիմք . և ոչ մեք տրամիմք , և ոչ մեր չարկամն
ուրախանայ ՚ի վերայ մեր: Ասացին ծնօղքն ,
դու գիտես որդեակ:

Էառ մանուկն զհայրն և զմայրն , և գնաց
ի Հռօմ քաղաք , յորում կայր թագաւոր մի
բարի և իմաստուն: Եւ թագաւորն այն յորս
էր ելեալ . և երբ եկն յորսոյն՝ եմուտ մա-
նուկն առ թագաւորն , եղ ծուներ և կանդե-
ցաւ: Եւ սկսաւ թագաւորն խօսիլ ընդ ման-
կանն և ասաց , զի՛նչ խնդրես յինէն , զոր աս-
ցից բեզ: Ասաց մանուկն , թագաւոր՝ յա-
ւիտեան կաց . ես երկու ծառայ ունիմ այր և
կին՝ զոր կամիմ վաճառել , բայց խնդրեմ զի
առցես զնոսս . ասաց թագաւորն՝ բէր , և
ես առից:

Գնաց մանուկն առ հայրն և մայրն , և ա-
սաց ցնոսա թէ ինչ պատեհ է ինձ՝ այնպէս
առնեմ , այսինքն՝ դուք զատ ապրիք , և ես
զատ . ասացին ծնողքն , դու գիտես սրդ-
եակ : Ասաց մանուկն , կամիմ վաճառել զձեզ
այս թագաւորիս , որ հասուցանէ ձեզ բարի ,
և ինձ ևս բարի լինի . բայց ջանամ շուտով
ազատել զձեզ , արդ զի՞նչ հրամայէք ս՛վ ծը-
նողք իմ . և նորա ասացին՝ դու գիտես սրդ-
եակ : Եւ էառ մանուկն զհայրն և զմայրն ,
և գնաց առ թագաւորն : Ասաց թագաւորն
ցեմանուկն թէ քանի՞ վաճառես . ասաց մա-
նուկն՝ սո՛ւր ինձ վասն այս կին ծառայիս գին՝
լաւ ձի և դէ՛ն իւր սարօքն : Եւ վասն այր մար
դոյն Ե՛րն՝ սո՛ւր ինձ հանդերձ և զգետսս
սքատուական :

Հրամայեաց թագաւորն՝ զինչ որ մանու-
կրն խնդրեաց վասն իւր ծառայիցն գին , լը-
րապէս ետուն նմա և թուր մի ոսկի գօւլով .
և էառ մանուկն զամենայն , զոր պարգևեաց
նմա թագաւորն : Ապա ասաց թագաւորն
մանկանն , զայլ ի՞նչ կամիս խնդրել յինէ՛ն՝
խնդրեա՛ զոր տաց քեզ . ասաց մանուկն , հար-
իւր Ֆլօրի ևս սո՛ւր ինձ վասն ծախուց ճանա-
պարհի . հրամայեաց թագաւորն և ետուն

Նմա: Դարձեալ ասաց թագաւորն , զայլ ի՞նչ
 խնդրես յինէն . ասաց մանուկն , հրաման
 սուր ինձ , որ խօսիմ ընդ քո ծառայիցն՝ զորս
 յինէն գնեցեր , և առնում զօրհնութիւնս
 ՚ի նոցանէ :

Յայնժամ ծանեաւ թագաւորն՝ թէ նորս
 ծնողքն են ծառայքն այնոքիկ , եւ հրաման
 մանկանն . և նա գնաց և անկաւ յոսս ծնո-
 ղացն և ասաց՝ մի՛ հոգայք , եթէ աստուած
 կամե՛նայ՝ զձեզ շուտով ազատեմ . և ծնողքն
 օրհնեցին զզաւակն իւրեանց : Եւ մանուկն
 յիշեաց զաստուած , և մեկնեցաւ ՚ի ծնողացն
 լալով . և գնաց զերիս աիւս և զերիս գիշեր
 ՚ի մեծ դաշտ մի : Եւ ՚ի գնալն հանդիպեցաւ
 ընտիր մանկան միոյ , բարեւեցին զմիմեանս ,
 և ընկերացան ՚ի ճանապարհին : Եւ երբ ըն-
 կերացան՝ միւս մանուկն ծանեաւ զխորհուրդ
 մանկանն , որ զհայրն և զմայրն վաճառեալ էր :
 Եւ ասաց նմա , գիտացիր եղբայր՝ զի իմ թա-
 գաւորն զիս խիստ սիրէ , վասն որոյ թուղթ
 աւետեաց ես ինձ զոր սանիմ առ կղզեաց
 թագաւորն , և առնում ՚ի նմանէ պարգևս
 մեծամեծս . այլ տե՛սնեմ զքեզ՝ զի դու խո-
 հեմ մանուկ ես , և լաւ ձիաւոր քան զիս ,
 առ զթուղթն և դու տար զայն թագաւորին ,

զի քեզ շատ բարիս պարգևէ: Եւ զինչ ասա-
ուած ինձ արժանի արարեալ է՝ քեզ լիցի 6
բայց ես աստ սպասեմ, մինչև դու գաս առիս:

Էստ մանուկն զայն թուղթն և եղ ՚ի
մէջ ՚ի սեկէ գործեալ քսակին, և գնաց ՚ի
ճանապարհն իւր ՚ի մեծ դաշտ մի: Եւ յան-
կարծակի յիշեաց զհայրն և զմայրն և ելաց,
և ՚ի շատ հառաչանացն ննջեաց ՚ի վերայ ձի-
ոյն. և ձին ՚ի ճանապարհէն ելեալ ՚ի դուրս
կորոյս ՚ի քնոյն զճանապարհն: Եւ յանկար-
ծակի զարթեալ ՚ի քնոյն, և էր ծարաւեալ
ինքն և ձին, և ջուր ոչ գոյր. այլ մտորեալ
ջրէին: Եւ եգիտ ջրհոր մի հին ժամանակաց,
և ՚ի ծարաւոյն կամէր ՚ի ջրհորն անկանիլ. ապա
եհան ՚ի սեկէ գործեալ քսակն՝ յորում եղ-
եալ էր զթուղթն, կապեաց ՚ինա պարան,
և եհան նովաւ ջուր ՚ի ջրհորոյ, և ըմպեաց
ինքն և արբոյց ևս ձիոյն իւրոյ. և ասպ սկսաւ
ինքնին կարդալ զթուղթն զայն, որ գրեալ
էր այսպէս:

“Այս անուն կղզեաց թագաւորի ողջոյն
սիրոյ. գիտացիր եղբայր, զի այդ թղթաբերդ
անհաւատ մարդ է, և մեզ նենգաւոր. դա՛
մեծ էր առ մեզ, և ամենայն գանձուց
սպառօղ. մերձեցաւ առ դուստր իմ, և մնաս

գործեաց ընդ նմա , և ես կամեցայ զինքն
կորուսանել . այլ պատրաստեցի քեզ , զի մի
ոք խայտառակու թիւնն մեր իմացէ աստ .
վասն որոյ առաքեցի առ քեզ՝ կորուսանել
զսա ՚ի սէր եղբայրութեան մերոյ ։

Երբ ծանեաւ մանուկն զայս՝ պատառեաց
զթուղթն և գոհացաւ զաստուծոյ , և օրհ-
նեաց զիւր ծնողքն , որ զինքն ուսումնագէտ
արարին , զի գիտութեամբն իւրով ապրեցաւ
՚ի մահուանէ . և աղաչեաց զաստուած՝ ցոյց
տալ ինքեան զճանապարհն . զի մոլորեալ
շուրջ գայր զտիւ և զդիշեր , և հարցանէր
զանուն թագաւորին , և զայն քաղաքն՝ յոր
գնալոց էր . և առաջնորդեաց աստուած նմա
զճանապարհն , և եմուտ ՚ի քաղաքն յայն . Եւ
էր այն քաղաքին թագաւորն մեծ , և քաղաքն
բարեի , յորում իջեւանեցաւ մանուկն ՚ի
սան պառաւի միոյ . և յետ հանգչելոյ սա-
կաւիկ ինչ՝ սկսաւ հարցանել ցաւառաւն զոր-
պիտութենէ քաղաքին և թագաւորին : Եւ
պառաւն ասաց թէ այս քաղաքիս թագաւորն
գուսար մի ունի խիստ աննման և գեղեցիկ
և իմաստուն՝ որ ոչ գոյր իւր նման . բայց ՚ի
մանկութենէն մինչև ցայժմ զիննսուն և ինն
որդի թագաւորի ետ սպանանել :

Ասաց մանուկն , վասն ի՞նչ պատճառի ես
 սպանանելէ Ասաց պառաւն , որդեակ՝ դուստ-
 րն այն ասէ թէ ո՞վ զիս յաղթէ խնասու-
 թեամբ , ես զնա աւնեմ ինձ այր . և թէ ես
 յաղթեմ զնա՝ սամ սպանանել զինքն : Եւ
 այդ պատճառաւ յաղթէ զթագաւորաց որ-
 դիսն և սպանանէ . և զգլուխն նոցա ՚ի վե-
 րայ բարձրաւանդակի իւրոյ ցցեալ կանգնե-
 ցուցանէ , զի բարձրաւանդակն իւր զբոլոր քա-
 ղաքն տեսանէ . և ՚ի նմա ունի աթոռ ոսկի՝ ա-
 կամբ և մարդարտով շինեալ , անդ նստի և
 հայի առ մարդիկ ՚ի անդւոջէն ՚ի վայր , զի
 մարդ բնաւ զինքն չկարէ տեսանել . և ունի
 պառաւ մի թարգման՝ նա խօսի զհետ մար-
 դոյ , որ առ ինքն մտանեն :

Եւ ՚ի լսել մանկանն զբանս զայստօիկ ՚ի
 պառաւոյն զգիշերն ողջոյն ոչ ննջեաց ՚ի
 քուն . և երբ լուսացաւ՝ գնաց ՚ի բաղանիք ,
 և զգեցաւ զիւր ոսկեկար հանդերձն , և ա-
 նուշահոտեցաւ մշկով և բուրկէնիւ : Եւ
 գնաց ՚ի թագաւորի դասեր դուռն , և խրնդ-
 րեաց հրաման մօտ առ թագուհին մտանել :
 Եւ մարդիքն որ ՚ի դուռն էին՝ խրատ ետուն
 մանկանն , թէ պատրաստ կաց , զի շատ թա-
 գաւորի որդի ես սպանանել :

Եւ երբ եմուս մանուկն 'ի ներս՝ բարե-
 եաց զաղջիկն . և նա հրամայեաց սպասաւո-
 րացն իւրոց , եդին զոսկերէն ամու յորոյ
 վերայ նստաւ մանուկն : Եւ գիտաց աղջիկն
 թէ վասն պատասխանի սալոյ հարցմանն իւրոյ
 եկեալ է մանուկն այն , վասն որոյ ազդ արար
 հօրն և մօրն իւր և կարդացողաց և իշխանաց
 քաղաքին , որք եկեալ ժողովեցան 'ի միասին
 անդ : Եւ ասաց աղջիկն իւր պառաւ թարգ-
 մանին՝ թէ աստ մանկանդ այդմիկ՝ կամի՞ ըմ-
 պել զբաժակ մահու 'ի կթղայէն յայնմանէ
 յորմէ ետու ըմպել ընկերացն իւրոց : Եւ աս-
 աց մանուկն ցթարգմանն այն՝ թէ եղիցին
 կամք սեառն օրհնեալ , զի որպէս կամի՞ այն-
 պէս առնէ տէր :

Յայնժամ ասաց աղջիկն առաջի հօրն և
 մօրն և կարդացողաց և իշխանաց քաղաքին ,
 եթէ մանուկս այս սացէ պատասխանի հարց-
 մանս իմոյ , առցէ զիս 'ի կնութիւն իւր . ապա
 թէ ոչ՝ ես սացից սպանանել զնա , վասն որոյ
 և դուք ամենեքին եղերուք վկայ բանիցս
 այսոցիկ : Եւ մանուկն ևս հաճեալ հաւանե-
 ցաւ խօսից աղջկանն , և կացոյց զնոսս վկայս :

Ասէ աղջիկն . ո՛վ է քո հայրն :

Ասէ մանուկն . հողմն և հուրն :

Ասէ աղջիկն . ո՛վ է քո մայրն :

Ասէ մանուկն . հողն և ջուրն :

Ասէ աղջիկն . յորձամ կենդանակերպի ծընեալ ես :

Ասէ մանուկն . ՚ի խոյ կենդանակերպի :

Ասէ աղջիկն . ո՛վ է քո դայեակն :

Ասէ մանուկն . այն է իմ դայեակն՝ որ զիս տեսանէ , և ես զնա ոչ տեսանեմ . նա զիմ ձայնն լսէ , և ես զնորա ձայնն ոչ լսեմ :

Եւ ասաց աղջիկն՝ Թէ հարց պատասխանիքս զոր արարաք , են խաղալիկ սղայոց . ապա Թողցուք զայնպիսիս , և նորոգ սկսեսցուք առնել հարց պատասխանիս :

Ասէ աղջիկն . որո՛յ արիւնն էր այն՝ որ անմեղ սպանու թեամբ հեղաւ ՚ի վերայ երկրի :

Ասէ մանուկն . Աբելի արիւնն էր այն՝ զոր եղբայրն իւր Վայէն սպանի :

Ասէ աղջիկն . ո՛յք էին որք ոչ ծնան ՚ի մօրէ , բայց որք մնացին ՚ի վերայ երկրի , և յետոյ մեռան :

Ի ետ.

Ասէ մանուկն . Ադամ և Եւայ էին , և խոյն այն կախեալ 'ի Սաբեկայ ծառոյն , զոր առեալ Աբրահամ փոխանակ որդւոյ իւրոյ Իսահակայ արար ողջակէզ :

Ասէ աղջիկն . ո՛յք էին որք ծնան 'ի հօրէ և 'ի մօրէ , և ոչ մեռան :

Ասէ մանուկն . Ենովք և Եղլա էին , որք մարմնով վերացան յերկինս , և կան անդ կենդանի մինչև յաւուրս Նեռին :

Ասէ աղջիկն . այն ի՛նչ ծառ էր՝ որ ունէր ճիւղ և տերև , և յետոյ 'ի միս և յարիւն փոխեցաւ :

Ասէ մանուկն . այդ Մովսէս մարգարէի դաւազանն էր , որ մինչ ծառ էր՝ ունէր ճիւղ և տերև . և երբ օձ դարձաւ , միս և արիւն եղև :

Ասէ աղջիկն . ո՛վ էր այն՝ զոր առաքեաց աստուած որպէս դեօպան առ Ադամ , որ ոչ հրեշտակ էր և ոչ մարդ :

Ասէ մանուկն . երբ Այնն սպան զեղբայրն իւր զԱբէլ , Ադամ հայրն իւր ոչ գիտէր թէ զինչ արասցէ զմարմինն մեռելոյն . վասն որոյ առաքեաց աստուած զերկու ադուաս իբր դեօպան՝ որ եկեալ առ Ադամ մինն ըզմիւսն սպան և թաղեաց 'ի հող . ապա և

Ազամ ուսեալ 'ի նմանէ՝ փորեաց զգեալինն
 և թաղեաց զմարմինն որդւոյ իւրոյ Աբելի:

Ասէ աղջիկն . ո՛վ էր այն՝ որ մեռաւ և
 մարմինն իւր ոչ թաղեցաւ 'ի հող , և հողին
 ոչ գնաց առ աստուած:

Ասէ մանուկն . այդ Ղովտայ կինն էր , որ
 յերանելն յերկրէն Սողոմացւոց ընդդէմ հը-
 բամանին աստուծոյ դարձաւ և հայեցաւ յետս
 և եղև արձան աղի . վասն որոյ ոչ մարմին նո-
 րա 'ի հող եմուտ , և ոչ հողին առ աստ-
 ուած գնաց:

Ասէ աղջիկն . ո՛վ էր այն՝ զի երբ տարան
 զնա լինել կերակուր գազանաց , գազանքն
 թողեալ զնա՝ զտանօղն կերին:

Ասէ մանուկն . այդ Գանիէլ մարգարէն
 էր , զոր տարան կերակուր առ իւծուց , այլ
 գազանքն թողեալ զնա՝ զտանօղն կերին:

Ասէ աղջիկն . ո՛վ էր այն՝ որ իբր 'ի գե-
 րեզմանի թաղեցաւ , և ինքն ողջ մնաց:

Ասէ մանուկն . այդ Յովնան մարգարէն
 էր՝ զոր ձուկն եկուլ , բայց ինքն 'ի փոր ձը-
 կան ողջ մնաց , և եղև շարժուն և գնայուն:

Ասէ աղջիկն . ո՛վ էր այն՝ որ մինչ կենդա-
 նի էր , յարդ և գարի ուտէր և ջուր ըմ-
 պէր . և երբ մեռաւ , միա և արխն մարդոց

կերաւ և ըմպեցէ

Ասէ մանուկն . այդ այն իշոյ ծնօսն էր ,
զոր մանուկն Սամիսօն էառ . ՚ի ձեռին իւր և
նովաւ սպան զհազար մարդէ ք

Ասէ աղջիկն . որոյ մարմինն էր այն՝ զոր
եղին ՚ի հող , հողն ասաց թէ ես կոյս եմէ

Ասէ մանուկն . այդ Աբելի մարմինն էր ,
որ եղև սկիզբն մտանելոյ ՚ի հող . զի մինչև
ցայն չև էր թաղեալ ՚ի վերայ երկրի մարմին
մարդոյ :

Ասէ աղջիկն . ո՞վ էր այն՝ որ ոչ հրեշտակ
է և ոչ մարդ և ոչ կենդանի , բայց ՚ի տասն
և հինգ ամ թագաւորէ , և ՚ի տասն և վեց ամին
թագաւորութեն իւրոյ հիւանդանայ , և յե-
րեսուն ամին մեռանի , և դարձեալ ողջանայ :

Ասէ մանուկն . այդ լուսինն է՝ որ մինչ
օրն ամսոյ լինի տասն և հինգ՝ լրումն առնու ,
և ՚ի տասն և վեց օրէն սկսանի սակաւ առ սա-
կաւ նուազիլ մինչև ՚ի քսան և ինն օրն , և ՚ի
լրանալ երեսուն աւուր ամսոյն՝ ոչ երևի պայ-
ծառ լոյս նորա որպէս զառաջինն՝ իբր թէ
մեռանի , և ասպա անդէն սկսանի կենդանանալ :

Ասէ աղջիկն . այն ի՛նչ ծառ է՝ որ ունի եր-
կատասան ճիւղս , և իւրաքանչիւր ճիւղք՝ երե-
սուն տերևս , և պտուղն իւր սեաւ և սպիտակ է :

Ասէ մանուկն . այդ ծառն ցուցանէ զտա-
րին , և երկոտասան ճիւղքն՝ զերկոտասան ա-
միսս տարւոյն , և երեսուն տերեւքն՝ զերեսուն
օրն ամսոյն , և պտուղն իւր սեաւ և սպիտակ՝
զգիշերն և զտիւն :

Ասէ աղջիկն . այն ի՛նչ երկու իրք են հա-
կառակք միմեանց՝ և զկնի միմեանց ընթա-
նան , և ոչ կարէ մինն զմիւսն ըմբռնել :

Ասէ մանուկն . այդ տիւն և գիշերն է՝ որ
միշտ ներհակք են միմեանց . զի մինն զմիւսն
ի բաց վարէ յինքենէ՝ կամ ծագմամբ արևու-
լուսաւորելով զոլորսս ամենայն տիեզերաց , և
կամ խաւարաւ ծածկելով զերեսս երկրի :

Ասէ աղջիկն . այն ի՛նչ թռչուն է՝ որ ուտէ
զդալարիս զյարդ զցորեան և զգարի , և սպառէ :

Ասէ մանուկն . այդ մորեխն է՝ որ է փոքր
կենդանի ինչ թեւաւոր , և թռչի և ոստաստէ
և ճարակեալ ծախէ զդալարիս , և թռուցեալ
ծածկէ զերեսս երկնից բազում մղոնիւք :

Եւ ապա տեսեալ աղջիկն զհամարձակու-
թիւն մանկանն՝ զոր աներկիւղ տայր պատաս-
խանի հարցմանն իւրոյ , ասաց ցնա՝ արի՛ ե՛լ և
գնա՛ աստի՛ որ մանուկ դու , զի թէպէտ այսօր
սզատեցար ՚ի ձեռաց իմոց՝ այլ ՚ի վաղիւն

տեսցնւք թէ զիհարդ կարիցես ազատիլ: Եւ մանուկն ասաց նմա՝ թէ նոյն աստուածն որ փրկեաց զիս այսօր 'ի ձեռաց քոց, կարող է ևս 'ի վաղիւն փրկել, և զայս ասացեալ գնաց խնդարով առ իջեւանն իւր մօտ առ սառաւն, որ լայր և կոծէր զանձն դառն արասաւօք, զի կարծէր թէ մանուկն մեռեալ է, ապա երբ ետես զնա ողջ՝ խիստ ուրախացաւ, և ասաց ցմանուկն՝ բարի՛ եկիր դու որդեակ, ահա՛ այսօր նոր ծնար յարգանդէ մօր քո: Եւ ամենեքին ևս որք տեսին ողջ զմանուկն՝ զարմացան յոյժ. զի մինչև ցայն ոչ որ էր 'ի մարդկանէ ասրեալ 'ի ձեռաց թագուհւոյն:

Եւ 'ի լուսանալ առաւօտուն զնաց մանուկն 'ի դռուն թագուհւոյն, և բարեւեաց զնա. և նա հրամայեաց սպասաւորացն իւրոց, եդին զնոյն զոսկեղէն աթոռն յորոյ վերայ նստաւ մանուկն: Եւ ասաց աղջիկն, բարի՛ եկիր դու մանուկ՝ ունիս այսօր ևս կարողութիւն տալ սպտասխանի հարցմանս իմոյ: Եւ նա ասաց՝ թէ մեծ է զօրութիւնն և կարողութիւնն այ, զի անհնարինքն 'ի մարդկանէ՝ հնարաւորք են առ աստուած, վասնորոյ հրամայեալ ո՛վ թագուհի զի՛նչ և կամիս հարց:

Ասէ աղջիկն . ս՛վ էր էգն այն՝ որ ծնաւ
յորձէն:

Ասէ մանուկն . այդ Եւայ էր՝ որ ծնաւ
հրամանաւն աստուծոյ՝ ՚ի կողիցն Ադամայ:

Ասէ աղջիկն . ս՛վ էր այն որ սպան զմարդ՝
գնաց հոգի իւր յարքայութիւն , և մեռանու
ղին՝ ՚ի դժոխքն:

Ասէ մանուկն . այդ Ղամէք է՝ որ սպան
զԱյէն , գնաց հոգի իւր յարքայութիւն , և
կայէնին՝ ՚ի դժոխքն . զի անմեղ սպանութիւն
սպանեալ էր զեզրայրն իւր զԱբէլ:

Ասէ աղջիկն . ս՛վ էր այն՝ զոր արկին ՚ի գուբ
կերակուր գազանաց , և նորա ոչ կերին զնա:

Ասէ մանուկն . այդ Յովսէփ գեղեցիկն էր՝
զոր եզրարքն իւր սարեալ ընկեցին ՚ի գուբ
լինել կերակուր գազանաց , բայց գազանքն
ոչ կերին զնա , և ինքն ողջ մնաց:

Ասէ աղջիկն . ս՛վ էր այն՝ որ զմերկութիւն
հօրն յայանեաց եղբարց իւրոց , և յետոյ ինքն
ընկալաւ ՚ի հօրէն իւրմէ զանէծս:

Ասէ մանուկն . այդ Քամ էր որ ետես զՆոյ
զհայր իւր արբեալ ՚ի գինւոյ զի մերկ ննջեր
՚ի սան՝ և ոչ ծածկեաց զմերկութիւնն , այլ

յայտնեաց եղբարցն իւրոց . վասն որոյ ընկալաւ ինքն զանէծս 'ի հօրէն, և եղբարքն իւր՝ զօրհնութիւնս . զի նորա զերեսս իւրեանց յեսս ունելով ծածկեցին զմերկութիւն հօրն իւրեանց:

Ասէ աղջիկն . ո՛վ էր մանուկն այն՝ զոր մայրն իւր եղեալ 'ի մէջ տապանակի ընկեց 'ի գեան, և նա ողջ մնաց:

Ասէ մանուկն . այդ Մովսէս մարգարէն էր՝ զոր մինչ մանուկ էր իբր չորից ամսոց՝ մայրն իւր վասն ահին Փարաւօնի եղ 'ի մէջ սրտուեայ տապանակի ծեփեալ կրպրածիւթով՝ ընկեց զնա 'ի գեան, զոր տեսեալ դուստրն Փարաւօնի հանեալ 'ի գետոյն՝ եբաց զտապանակն, և էառ զմանուկն 'ի միջոյ նորա յորում լայր:

Ասէ աղջիկն . ո՛վ էր այն որ փոքր էր մարմնով, և մանուկ հասակաւ, և քան զինքն զօրեղն և մեծն՝ միով քարամբ սպան:

Ասէ մանուկն . այդ Գաւիթ մարգարէն էր, զի երբ փոքր էր 'ի մէջ եղբարց իւրոց՝ ել ընդդէմ Գողիադու առն զօրաւորի և հսկայի, և միով սպրաքարիւ եհար զձակատ նորա, և ընթացեալ 'ի վերայ նորա էառ զսուսեր նորին, և եհատ զգլուխն:

Ասէ աղջիկն . այն ի՛նչ ստորին տեղի է՝ որ ՚ի ստեղծմանէ աշխարհի ոչ տեսեալ է ըզլոյս արևու :

Ասէ մանուկն . այդ ծովու յատակն է՝ յորում ժողով բազմութեան ջուրց կուտակեալ՝ ոչ երբէք տեսանէ զճառագայթս արևու :

Ասէ աղջիկն . այն ի՛նչ երկու իրք են՝ որք քանի ապրին՝ այնքան մեծանան մինչ զի ոչ գտանի աւելի մեծ քան զնոսա :

Ասէ մանուկն . մինն ձուկն է՝ և միւսն օձն , զի ձուկն որքան սնանի ՚ի ջուրս՝ այնքան մեծանայ , և ոչ գտանի աւելի մեծ քան զնա . նոյնպէս և օձն՝ մինչ սկսանի սողալ ՚ի վերայ երկրի , այնքան առաւել աճի և մեծանայ և ոչ գտանի քան զնա աւելի մեծ :

Ասէ աղջիկն . այն ի՛նչ երկու սիրելիք են՝ որք ատեն զմիմեանս :

Ասէ մանուկն . այդ հոգին և մարմին մարդոյ է , զի մինչ միաւորեալ են ընդ միմեանս՝ սիրեն զիրեարս . բայց երբ բաժանին ՚ի միմեանց , ատեն զիրեարս :

Ասէ աղջիկն . այն ի՛նչ երկու իրք են՝ որք առնեն երբեմն զմարդն աղքատ , և դարձեալ հարուստ և փարթամ :

Ասէ մանուկն . ապրշմի ճճին է և խելքն

մարդոյ . զի ճճին այն երբեմն տայ սակաւ զապրշում որով աեարքն իւրեան լինին աղքատ , բայց երբեմն տայ առաս քան զոր ակն ոչ ունին , և լինին անդէն հարուստ . նոյնպէս և խելքն մարդոյ երբեմն սխալեալ յառետուրս՝ աայ ՚նաս բազում , և առնէ զմարդն աղքատ , այլ անդրադարձ խորհրդով ուղղեալ՝ առնէ հարուստ և փարթամ :

Ասէ աղջիկն . այն ի՛նչ տուն է՝ որոյ մէջն լի է ոսկւով՝ և դուռն նորա շրջապատեալ է արծաթով , բայց երբ մի կողմն որմոյ իւրոյ արասաւորի և քակի , ոչ կարեն շինել զնա թէ և ճարտարք ամենայն աշխարհի՝ ՚ի մի եկեացնէ :

Ասէ մանուկն . այդ ձուն է յորոյ մէջն եղեալ դեղնուցն՝ նման է ոսկւոյ , և ՚ի վերայ նորա շրջապատեալ կեղևն՝ նման է արծաթոյ . սակայն երբ խորասկի ինքն , ոչ ոք ՚ի մարդկանէ կարէ շինել զայն :

Եւ ապա հայեցեալ աղջիկն ՚ի համարձակ և յաներկիւղ սրատասխանիս մանկանն՝ աասցցնա արի՛ւն և գնա՛ աստի մանուկ դու , և թէպէս այսօր ազատեցար ՚ի ձեռաց իմոց , բայց ՚ի վաղիւն սամ քեզ ըմպել զբաժակ մահու որպէս ետու ըմպել ընկերաց քոց . և

այսպէս կամէր ահ արկանել նմա: Եւ մա-
նուկն որպէս յառաջագոյն ասաց աղջկանն ,
գնոյն այժմ երկրորդեաց , և ել անտի և գնաց
խնդարով ՚ի տեղի իւր:

Եւ ընդ առաւօսն յորժամ արեգակն յեր-
կիր ծաւալեաց զլոյս իւր , գնաց մանուկն ՚ի
դուռն թագուհւոյն , և ետ բարև նմա և
ասաց թէ գիշերս այս բարեաւ լուսացաւ
քեզ: Եւ հրամայեաց աղջիկն և եղին զոսկե-
ղէն ակտուն նստաւ մանուկն: Եւ ասաց աղ-
ջիկն , ակտոսամ և ցաւիմ ՚ի վերայ գեղեցիկ
մանկութեան քո , զի այսօր եթէ ոչ կարիցես
տալ պատասխանի հարցմանս իմոյ՝ վաղվաղակի
տամ ածել զսուր ՚ի պարանոց քո: Եւ մա-
նուկն յաւէտ քան զառաջինն համարձակ և
աներկիւղ ասաց ցնա՝ հրամայեա՛ն սիլ թա-
գուհի զինչ և կամիս հարց:

ՀԱՐՅՄՈՒՆՔ . Գ

Ասէ աղջիկն . սյք էին՝ որք անմնաս անցին
գնացին ընդ մէջ ծովու իբր ընդ ցամաք ,
բայց զկնի նոցա եկողքն ընկղմեցան ՚ի խորս
ծովու և ոչ մնաց ողջ ՚ի նոցանէ և ոչ մի:

Ասէ մանուկն . Իսրայէլացիք էին՝ զոր առ-
եալ ընդ իւր մարդարէն Մովսէս ձգեաց ըզ

գաւազան իւր 'ի վերայ կարմիր ծովուն , և
սլատառեալ զջուրն՝ անցոյց ընդ ցամաք . այլ
զկնի նոցա մահն Եգիպտացիքն , և ծածկեաց
զնոսա ջուր ծովուն և ընկղմեցան ամենեքին
որպէս կապար 'ի ջուրս սաստիկս :

Ասէ աղ ջիկն . ո՛յք էին՝ զորս արկին 'ի մէջ
հրոյն բորբոքելոյ , և ոչ մերձեցաւ 'ի նոսա
հուրն , և մնացին ողջ :

Ասէ մանուկն . երեք մանկուկքն էին՝ այս-
ինքն Սեդրաք՝ Միսաք և Նաբեդնագով , որք
ոչ երկրորդին պատկերին ոսկւոյ . վասն որոյ
եա Նաբուգոդոնոսոր կապել զձեռս և զոտս
նոցա և արկանել 'ի հնոց հրոյն բորբոքելոյ ,
յորում գնային նոքա և օրհնէին և փառաւոր
առնէին զան՝ որ ապրեցոյց զնս 'ի հնոցէ անախ :

Ասէ աղ ջիկն . ո՛վ էր այն՝ զոր աստուած 'ի
ձեռն սատանայի փորձեաց յոյժ , և նա տանէք
համբերութեամբ այնպիսի անըմբերելի ար-
կածիցն սատանայի զոր ածէր 'ի վերայ նորա ,
և ոչ երբէք մեղաւ ընդդէմ կամացն նոյ :

Ասէ մանուկն . այդ Յոբ երանելին էր՝ առ-
որ թոյլ տալովն աստուծոյ եկն սատանայ , և
քանիցս անգամ փորձեաց զնա պէս պէս մա-
հաբեր մնասիւք . զըկեաց զնա յընչից և 'ի
ստացուածոց , յորդւոց և 'ի դատերաց , և մերկ

կողոպուտ նստոյց զնա չարաչար վիրօք յաղ-
բիւսս արտաքոյ քաղաքին , և ոչ կարաց սալ
մեղանչել ընդ դէմ օրինացն աստուծոյ . զի
երանելին այն զայս ասէր՝ թէ զամենայն ինչ
զոր ունէի ես՝ տէր ետ ինձ , և այժմ ևս տէր
էառ ՚ի ձեռաց իմոց , վասն որոյ եղիցին կամք
տեսուն օրհնեալ :

Ասէ աղջիկն . սիւ էր այն՝ որ ոչ հրեշտակ
էր և ոչ մարդ , և ետ խրատ մարդոյ :

Ասէ մանուկն . այդ Բաղաամու էշն էր ,
զի մինչ երթայր Բաղաամ անխիճանել զԽորայ-
էլ՝ տեսեալ իշոյն զհրեշտակ աստուծոյ՝ դար-
ձաւ ընդ դէմ Բաղաամու , և նա եհար զնա
գաւազանաւն իւրով . յայնժամ երաց ասա-
ուած զբերան իշոյն , որ սկսաւ խրատ սալ և
ասել ցԲաղաամ՝ դարձիր յեսս , և մի եր-
թար անխիճանել զԽորայէլ :

Ասէ աղջիկն . ո՛յք էին՝ որք ոչ հրեշտակ
էին և ոչ մարդ , և առաքեցան նման մար-
դոյ՝ բերել յաշխարհէ զլուր աւետեաց :

Ասէ մանուկն . ագռաւն և աղաւնին էր՝
զորս Նոյ ՚ի տապանէ իւրմէ արձակեաց ՚ի
ցամաք՝ տեսանել թէ իցէ ցածուցեալ ջուրն
ջրհեղեղին յերեսաց երկրէ . բայց աղաւնին
միայն ունելով շիղ ձիթեանոյ ՚ի բերան իւր՝

դարձաւ առ Նոյ տալով զաւետիս նուազելոյ
ջրոյն յերեսաց երկրէ։

Ասէ աղջիկն . ո՛վ էր այն՝ որ էր մեծ և
անդրանիկ , բայց միով ոսպնեայ թանիւ վա-
ճառեաց զանդրանկու թիւնն իւր կրասեր եղ-
բօր իւրում։

Ասէ մանուկն . այդ Իսահակայ որդին
Եսաւն էր՝ որ մինչ եկն ՚ի դաշտէ քաղցեալ ,
ասաց ցՅակոբ կրասեր եղբայր իւր որ եփ-
եալ էր զթան , թէ տո՛ւր ինձ ճաշակել յայն-
մանէ . և նա ասաց ցնա՝ եթէ ոչ վաճառես
ցես ինձ զանդրանկու թիւնս քո , ոչ կարես
ճաշակել ՚ի նմանէ . և Եսաւ ոչ երբէք համ-
բերելով վաճառեաց միով ոսպնեայ թանիւ
զանդրանկութիւն իւր Յակոբայ եղբօր իւրոյ։

Ասէ աղջիկն . ո՛յք էին՝ որք երբ մաին
յԵգիպտոս՝ եօթանասուն և հինգ ոգիք էին ,
բայց երբ անտի չուեցին՝ վեց հարիւր հազար
ոգիք եղեն։

Ասէ մանուկն . Յակոբ նահապեան և նմ
որդիքն և դասերք իւր և որդիք որդւոց իւ-
րոց հանդերձ ընտանեօքն իւրեանց՝ երբ ել-
եալ յերկրէն Քանանացւոց մաին յԵգիպ-
տոս , էին ոգիք եօթանասուն և հինգ . այլ
երբ անտի չուեցին յանապատ ՚ի Սոկքովթ ,

Եղեն վեց հարիւր հազար այր:

Ասէ աղջիկն . զանբոյսն 'ի վերայ անձնին
բարձին , և անդադարին երդուլքն անցուցին:

Ասէ մանուկն . անբոյսն՝ աղն է , անձինն՝
ջորին է , անդադարն՝ ջուրն է , երդիլքն՝ կա-
մուրջն է . քանզի զաղն երբ բառնան 'ի վերայ
ջորւոյ եթէ իցէ յանցս ճանապարհի գետ
ջրոյ , անցուցանեն զջորին ընդ կամուրջս ջուրց
'ի ցամաք:

Ասէ աղջիկն . այն ի՛նչ երեք իրք են յորոց
մինն խուփ չունի , երկրորդն՝ սիւն , երրորդն՝
կաթն:

Ասէ մանուկն . այդ երեքին բանքդ են այ-
սոքիկ . առաջինն՝ ծովն է որ ոչ ունի 'ի վերայ
իւր խուփս , այսինքն՝ ծածկոցս . երկրորդն՝
երկինքն է որ առանց սեան հաստատեալ
կայ . երրորդն՝ հաւն է որ չունի զկաթն: Բայց
ընդ սոսին դոյ մի ևս , և է այն մարդոյ ձե-
ռաց մէջն՝ յորում ամենևին ոչ բուսանի մազ:

Եւ աղջիկն յայտոցիկ պատասխանեացս ման
կանն երկեաւ , և ասաց ցնա՝ Թէ դու մի ա-
ւելի ասացեր . զի ես երիս բանս հարցի քեզ ,
և դու զչորս ետուր պատասխանի . արդ՝ արի՛
ե՛լ և գնա՛ զի այսօր ևս ազատեցար 'ի ձեռաց

խնոց , բայց ՚ի վաղիւն տամ զպատիժ մահու
կենաց քոց որպէս ետու ընկերացդ : Եւ մա-
նուկն ասաց ցնա՝ թէ ես յարարիչն երկնի և
երկրի միայն ասպաւինեալ եմ և ոչ ՚ի մարդ-
յուսացեալ , զի որպէս կամի տէր՝ նոյնպէս
առնէ . և զայս ասացեալ ել անտի և գնաց
խնդալով յիւր իջեւանքն :

Եւ ընդ լուսանալ առաւօտուն եկն մա-
նուկն ՚ի դուռն թագուհւոյն և բարեւոց
զաղջիկն , և նա հրամայեաց և եդին զոսկե-
ղէն աթոռն և նստաւ մանուկն : Եւ ասաց
աղջկանն՝ հրամայեա՛ն ո՛վ թագուհի զայլ ինչ
կամիս հարց : Եւ նա ասաց ցնա՝ ո՛վ մանուկ
դու՛ այժմ կարգն հարցման քո է . վասն որոյ
հարց զինչ և կամիս , և ես տացից քեզ պա-
տասխանի :

Ասէ մանուկն . ո՛վ էր այն որ հարուստ էր՝
աղքատացաւ , և յիւր աղքատութեանն զգե-
ցաւ զհայրն իւր որպէս զհանդերձ , և հեծաւ
՚ի վերայ մօրն որպէս ՚ի վերայ ձիոյ , և գնաց
գտանել զինչսն և զապրանքն իւր զոր կո-
լուսեալ էր , եհաս ՚ի վերայ իւր մահն . և
նա էառ զմահն ՚ի վերայ ձիոյն , և նովաւ
էարբ զջուր և արբոյց ևս իւր ձիոյն . բայց

ինքն և ձին ևս երկոքին ՚ի միասին որչ մնացին:

Եւ աղ ջիկն ոչ կարաց տալ պատասխանի այսովիկ հարցման մանկանն, ասաց ցնա՝ այսօր գնա՛ աստի, և ՚ի վաղիւն տամ պատասխանի. զի այդ դժուար զրոյց է զոր ասացեր: Եւ մանուկն ելեալ անտի գնաց խնդու-թեամբ ՚ի տեղի իւր:

Ապա ասաց աղ ջիկն իւր պառաւ Թարգմանին՝ Թէ՛ ան ընդ քեզ երկուս կամ երիս ՚ի հաւասարիմ ծառայիցս, և գնա՛ ՚ի շուկայն և ան զսպիտակ հացս և զգէր սագ մի և զքանի ինչ պարարտ հաւս: Չսագն լից բըրնձով խառնեալ շաքարօք, և զհաւսն խորովեա՛. և ան ընդ սոսին զերկու մաքուր ամանս և սուր ընուլ ՚ի նոսա զանուշ և զանապաղ գինի, և պատրաստեա՛ զայսոսիկ ՚ի ծածուկ: Եւ առեալ ընդ իւր Թարգմանն այն զծառայան՝ գնացին և զհրամանն Թագուհւոյն կատարեցին:

Եւ երբ ամենեքին ՚ի խոր քունն եղեն, զգեցաւ աղ ջիկն զիւր պատուական ոսկեկար հանդերձն, և անուշահոտեցաւ մշկով և բուրկենիւ և վարդեջրով: Եւ առեալ ընդ իւր զերկու ևս գեղեցիկ աղջկունս՝ հրամայեաց

ծառայիցն այնոցիկ և բարձին զոր ինչ հրա-
մայեալն էր նոցա, և եկին առ իջեվան ման-
կանն, և բաղխեցին զդուռն:

Եւ մանուկն ասաց՝ ո՞վ էք որք բաղխէք
զդուռն. և նորա ասացին՝ թէ մեք աղջկունք
եմք՝ ՚ի դարպասէ թագաւորի, և որպէս լու-
սինն՝ արեգական սիրոյ տէր է, նոյնպէս և
մեք քո սիրոյ տէրն եմք. վասն որոյ կամիմք
տեսանել միանգամ զքեզ: Եւ ասաց մանուկն՝
զնացէք ՚ի բաց յինէն, գիտէ տէր զի նա ոչ
երբէք մտեալ է ընդ այս, և ես ոչ գիտեմ և
ոչ ճանաչեմ զնա: Եւ նորա յաւէտ աղաչա-
նօք պնդեալ զերեսս իւրեանց՝ ասացին ցնա
թէ ոչ երթամք աստի մինչև ոչ տեսանիցեմք
զքեզ և զերեսս քո: Եւ մանուկն ոչ ինչ
կարացեալ համբերել ողորմագին աղերսանաց
նոցա՝ թոյլ ետ մտանել ՚ի ներս:

Յայնժամ աղջիկն հանեալ ՚ի գլխոյն զվար-
չամակս եբաց զերեսս իւր, զոր մինչ ետես
մանուկն՝ վառեցաւ ՚ի սիրոյ նորա: Եւ աղ-
ջիկն նստաւ և նստոյց ընդ իւր զմանուկն, և
ասաց ցնա՝ ունի՞ս կերակուր ինչ ուտելոյ և
գինի ինչ ըմպելոյ, բեր զնոսա զի կերիցուք
և արբցուք և ուրախ լիցուք. բայց զձայնս
իւր փոխեալ էր զոր ոչ կարաց ճանաչել մա-

Նուկնէ Եւ նա ասաց՝ գիտէ տէր՝ ոչ ունիմ
 ՚ի ժամուս յայտիկ պատրաստեալ, զի ոչ գի-
 տէի զգալուսան ձեր առ իս:

Եւ ասաց աղջիկն ծառայիցն իւրոց՝ բե-
 րէք զոր ինչ ունիք դուք. և նորա բերին զոր
 ինչ զհետ իւրեանց առեալէին, և պատրաս-
 տեցին սեղան, յորում նստան երկոքին և
 սկսան ուտել և ըմպել և ուրախ լինել. բայց
 աղջիկն աւելի արբոյց մանկանն զանապակ
 գինիս, և առնէր ընդ նմա քաղցր և մեղմ
 խօսակցութիւնս. և խտորեալ զնա՝ առաւել
 բորբոքեցուցանէր զհուր ցանկութեան նորա
 առ ինքն, մինչ զի այլ ոչ ևս կարացեալ համ-
 բերել՝ ասաց աղջկանն հրամայեա՛ զի ննջես-
 ցուք ՚ի միասին:

Յայնժամ ասաց աղջիկն ցմանուկն՝ եթէ
 սիրես զիս՝ պատմեա՛ ինձ զբանն զայն զոր
 յերեկն ասացեր դստերն թագաւորի: Եւ նա
 ասաց՝ թէ չունիմ այժմ կարողութիւն մեկ-
 նելոյ քեզ զայն, մանաւանդ երկնչիմ իսկ՝ զի
 յասելն իմում զայն մահու մեռանիմ. վասն
 որոյ զայլ ինչ բանս հարց զորոյ տացից պա-
 տասխանի: Եւ աղջիկն երդուաւ յաստուած՝
 թէ մինչ ոչ լսեմ ՚ի քէն զբանն զայն, ոչ կա-
 տարեմ զկամս քո, և սկսաւ խաղալ զհետ

Նորաւ Եւ մանուկն առաւել քան զհօւր
վառեալ բորբոքեալ ՚ի սիրոյ աղջկանն և արբե-
ալ ՚ի գինւոյ յաղթեցաւ , և սկսաւ ասել
զպատասխանին հարցմանն իւրոյ , և սպա սասց
արի՛ զի ննջեսցուք ՚ի միասին :

Յայնժամ աղջիկն եհան զհանդերձան ընդ-
նսին և զչարեշապիկն , զոր եղ ՚ի ներքոյ սնա-
րից գլխոյն , և սկսաւ խաղալ զհետ նորա . և
մանուկն թմրեալ ՚ի սիրոյ և ՚ի գինւոյ անտի՛
՚ի քուն եղև , և ոչ ինչ կարաց առնել նմա :
Եւ աղջիկն խնդալով ՚ի միտն իւր՝ սահեցաւ
յանկողնոյն , և առեալ ընդ իւր զծառայսն
զնաց սւրախութեամբ ՚ի տեղի իւր . բայց
յառաւել խնդութենէն մտացեալ էր անդ
զչարեշապիկն : Քանզի ասէր ՚ի մտի իւրում՝
Թէ ես յաղթեցի նմա՝ ուսեալ ՚ի նմանէ
զբանն զայն , և նա ոչ ինչ կարաց առնել ինձ .
վասն որոյ և ընդ լուսանալ առաւօտուն աս-
ցից սպանանել զնա :

Եւ երբ մանուկն ուշաբերեալ ՚ի քնոյն և
սթափեալ ՚ի գինւոյ զարթեաւ , իմացաւ թէ
աղջիկն այն դուստր թագաւորին էր որ հը-
նարիւք եկեալ առ ինքն՝ պէս պէս խաբէու-
թեամբ ուսաւ զբանն զայն , սրտմեցաւ յոյժ :
Բայց ՚ի տեսանելն իւրում զչարեշապիկն նորա

զոր մոռացեալ էր անդ՝ անդէն ուրախութիւն
ուրախ եղև, և էառ պահեաց զայն յինքեան: Եւ
ընդ առաւօտն ել գնաց ՚ի դուռն թա-
գուհւոյն, և բարեեաց զնա և նստաւ ՚ի
վերայ աթոռոյն այնմիկ:

Եւ աղջիկն ազդ արար հօրն և մօրն և
կարդացողաց և իշխանաց քաղաքին որք միա-
բան եկեալ ժողովեցան անդ: Եւ մանուկն
յոան կացեալ խոնարհեցոյց զծունր առաջի
թագաւորին, և նստաւ դարձեալ ՚ի վերայ
աթոռոյ իւրոյ: Եւ սկսաւ աղջիկն սալ կար-
գաւ պատասխանի՝ երեկեան հարցման ման-
կանն, քանզի ուսեալ էր ՚ի նմանէ ՚ի գիշերին
յայնմիկ խաբէութիւն: Եւ ամենեքին այնոքիկ
որք լսեցինն զայն, զարմացան ընդ գիտութի-
ւոյն, զի բանն այն յոյժ դժուար էր:

Յայնժամ ասաց մանուկն ցթագաւորն ա-
ռաջի ամենեցուն ՚նմ տիեզերակալ արքայ՝
դուսարն քո յաւուրս երիս եհարց ինձ ըզ-
բանս, և ես ետու զպատասխանիս. բայց
այժմ ևս հարցից ցնա ես զմի բանս, եթէ
գիտասցէ՝ նա ինձ յաղթեալ է և ես ոչ նմա: Կսաց
թագաւորն՝ այդմ բանիդ և մեք ամե-
նեքին վկայ լինիմք, զի մի այլ ևս աւելի զոոցս
վցի ՚ի մէջ երկոցունցդ:

Ասաց մանուկն առ աղջիկն՝ թէ ինչ
 թռչուն էր այն որ ունէր ընդ իւր զայլ տե-
 սակ թռչունս, և իւր փետուրն գեղեցիկ էր
 որպէս զոսկի. և կալայ ես զնա և զենի և ըզ-
 փետուրն պահեցի առ իս, և զմիսն նորա խո-
 րովեալ մինչ եդի առաջի իմ ուտել՝ նա յան-
 կարծակի թռեաւ և փախեաւ յինէն. բայց
 եթէ ոչ հաւատայք բանից իմոց, զփետուրն
 զայն բերեմ առաջի ամենեցունցդ զոր տե-
 սանիցէք:

Եւ երբ աղջիկն լուաւ զբանս զայս՝ եր-
 կեաւ յոյժ, զի գիտաց թէ ազդ առնելոց է
 առաջի ամենեցուն զզնայն իւր առ նա ՚ի
 գիշերին յայնմիկ. վասն որոյ աճապարեալ ա-
 սաց ցնա՝ այդ կարի իմն դժուար հարցմունք
 է, և ոչ կարեմ գիտել զպատասխանիս դորա.
 արդ այժմ յաղթեցեր ինձ, խնդրեա՛ դու
 յինէն զինչ և կամիս: Եւ մանուկն ասաց
 թէ քան զքեզ աւելի բանս ոչ խնդրեմ ՚ի քէն:

Յայնժամ ամենեքին վկայեցին և հաւա-
 նեցան խնդրանաց մանկանն, և պսակեցին
 զաղջիկն ընդ նմա, և արարին զեօթն օր հար-
 սանիս: Եւ ետ թագաւորն զկէսն թագա-
 ւորութեան և ընչից և գանձուց իւրոց, և
 նա տիրեաց նոցա: Եւ ասպա առաքեաց մա-

Նուկն զմարդիկ բազում գանձիւք առ այն
 Թագաւորն՝ որում վաճառեալ էր զհայրն և
 զմայրն իւր . և գնացեալ նորա բերին զճնողսն
 իւր առ ինքն : Արք տեսեալ զմիսեանս ուրա-
 խացան և գոհացան զասուծոյ որ արժանի
 արար վերստին տեսանել զիրեարսն : Եւ զաս-
 պնջական սրտաւն զայն տարեալ ընդ իւր ՚ի
 գարպան՝ կացոյց մեծ ՚ի վերայ նաժշտացն :

Եւ Թագաւորն կարգեաց զնա տէր և իշ-
 խան ՚ի վերայ բոլոր գանձուց և քաղաքաց
 իւրոց , որ զինի մահուն իւրոյ իշխեսցէ ՚ի
 վերայ նոցա , և նստցի փոխանակ նորա յա-
 թոռ Թագաւորութեան իւրոյ : Բայց մա-
 նուկն այն զօր ամենայն միոյն իմասանոյն աս-
 սուծոյ յերկիր խոնարհեալ կանխէր յաղօթս
 ՚ի բոլոր սրտէ , և գոհութիւն և փառս մա-
 սուցանէր անբաւ խնամոցն մարդասիրին՝ որ
 փրկեաց զանձն իւր ՚ի մահուանէ , և արժանի
 արար զինքն այնպիսի փառաց և իշխանու-
 թեան :





Վ Ա Ր Ք

Ե Ի

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա Լ Է Բ Ս Ւ Ա Ն Ո Ս Ի Զ Գ Ն Ա Ի Ո Ր Ի Ն

Լ յի մի էր ՚ի քաղաքին Կոստանդնուպօլսոյ՝ մեծատուն յոյժ և իշխան մեծ, և հրամանատու բազում դաւառի. և էր անուն նորա Եփիմիանոս, և կնոջն՝ Աննայ. և էր Եփիմիանոս յոյժ սիրելի յաչս թագաւորին իւրոյ: Սորա էին հասեալ մերձ ՚ի ծերութիւն, և ոչ ունէին զաւակ ՚ի վերայ երկրի, որ ժառանգէր զինչս նոցա և էին կարի արքատում և անմխիթար վասն ժառանգութեան. սիւ և գիշեր հանապազ աղաչէին զասուած վասն զաւակի:

Եւ յաւուր միում կինն Աննայ՝ բազում աղախնեօք և ծառայիւք գնաց ՚ի մեծ յեկեղեցին ՚ի սուրբն Սոփիա, և կայր յաղօթս առ տէր. և բարեխօսութեամբ սուրբ անձամբն

և ամենայն սրբոցն՝ հայցէր ՚ի քրիստոսէ ժառանգ բարիւ։ Եւ յետ աղօթիցն բազում ողորմութիւնս առնէր աղքատաց և կարօտելոց, և քահանայիցն ամենեցուն, և ելեալ գնայր ՚ի տուն իւր։

Եւ ՚ի գնայն ՚ի ճանապարհին հանդիպեցաւ աղքատ մի խեղճ և ողորմելի և ասաց, տիկին՝ տուր ինձ ողորմութիւն վասն միակ որդւոյդ արեուն։ Եւ տիկինն հիացեալ ՚ի միտս իւր՝ ասաց թէ վայ ինձ՝ զի ես անժառանգ եմ, և դա՛ ինձ երանի տայ վասն որդւոյ. արտասուեաց և ելաց, և հանեալ ետուր նմա ողորմութիւն, և էանց գնաց ՚ի տուն իւր։

Եւ ՚ի գիշերին յայնմիկ ետես ՚ի տեսլեանն ծեր մի և աւետեաց զԱննայ և ասաց, կին դու՛ ահա՛ կատարեցաւ խնդրուած քո առաջի աստուծոյ։ Բայց զայդ արծաթապատ դարպասն՝ որ ոսկւով և արծաթով է զարդարեալ տացես զայն ողորմութիւն աղքատաց և կարօտելոց։ Եւ ընդ առաւօտն ելեալ կոչեաց զերիցունա և զքահանայս, և արար մատաղս մեծ և ընդունեւ լութիւնս։

Եւ սրասմեաց զտեսիլն իւր՝ առն իւրում Եփիմիանոսի. խկ նա ոչ կամէր տալ, ապա

դժուարաւ ետ . քանզի սիրէր զդարպասն զայն
որ յոսկւոյ էր շինեալ, և յայտոյս և յայնկոյս
մարգարտով շարեալ և զարդարեալ: Եւ չորս
բազայ ՚ի դուս արծաթոյ՝ էր թռուցեալ
նման արծուոյ, և մի ևս զթևս իւր տարածեալ
՚ի վայելչութիւն անկողնոյ իւրոյ:

Եւ առեալ զայս կինն նորա, կոչեաց զուս
կերիչս և արար զնա դրամս և դահեկանս . և
քարոզ կարդաց և ասաց ժողովել զնմ քահա-
նայն, և զամենայն աղքատս և զխեղս և ըզ-
կաղս և զկոյրս, և պահել զնոսս ՚ի Հրոտից
ամիսն բոլոր մինչև յերս ամսոյն: Եւ առեալ
ընդ իւր չորս հարիւր քառասուն և հինգ քա-
հանայս, և իջեալ ՚ի վանան հսկեցին զգիշերն
մինչև ցառաւօսն . և պատարագ մատուցին
վասն որդէճնութեան նորա . և նա ետ նոցա
եօթն եօթն դահեկանս:

Եւ յետ երեք ամսոց զխտաց կինն զյղու-
թիւն իւր, և ետ առեալս առ այրն իւր . և
յետ ինն ամսոց ծնաւ կինն ՚ի ծերութեան
իւրում արու զաւակ: Եւ յարուցեալ այրն՝
արծակեաց զհրաւիրակս, կոչել զքահանայս
և զեպիսկոպոսունս և զիշխանս . և արար մեծ
ընդունելութիւն, և մկրտեաց զմանուկն, և
եղին զանուն նորա Ալէքսիանոս:

Եւ իբրև զարգացաւ մանուկն՝ եւս զնա
 հայրն յուսումն գրոց: Եւ էր պատանին ա-
 ուստամիս և առատաձեռն քան զհայրն իւր,
 և էր գեղեցիկ յոյժ, և ձայն նորա՝ էր քաղցր
 իբրև գքնարի: Եւ իբրև եղև պատանին տանն
 և ութն ամաց՝ եղևն հայրն արջառս և ոչխարս
 բազումս վասն նորա: Եւ էր հսկայածև և
 ընթերցող աստուածային սուրբ գրոց, հին և
 նոր կաակարանացն: Եւ եհաս լուր նորա յա-
 պարանս թագաւորին, և յաւուր միում ասէ
 թագաւորն ցեփիմիանոս, նձ եւս պառզ
 որովայնի քում, որոյ լուր նորա եհաս առ իս.
 և է՛ իմ դուսար զոր դու ձանաչես, արդ՝
 սուր զնա ինձ ՚ի փեսայութիւն: Ոսկի և
 արծաթ իմ նմա եղիցի, և յեւ մահուան իմոյ՝
 ժառանգեսցէ զաթոռն իմ:

Եւ ել Եփիմիանոս յերեսաց թագաւորին,
 և գնայր թմբկօք և սարուք ՚ի տուն իւրէ
 իբրև լուա Սէքսիանոս զգալուսս հօրն
 իւրոյ, յարեաւ ընդ առաջ՝ և երկիր եպաղ-
 նմա և ասաց, հայր իմ պատուական՝ զի է-
 քեզ: Պատասխանի եւս հայրն նորա և ասէ,
 ինդամ և ուրախ եմ վասն քո, զի թագաւորն
 խոտացաւ փեսայացուցանել զքեզ: Պատաս-
 խանի եւս Սէքսիանոս և ասէ, գրեալ է ՚ի

սուրբ աւետարանն, թէ որ դառնայ ընդ դէմ
 ճնողացն իւրոց՝ սրամուծք իջանէ՝ ՚ի դժոխսս
 Բայց դու ստիպեցեր զիս ընդ դէմ դառնալ,
 զի յոյժ խղեցին բանքքո՞ զսիրտ իմ:

Եւ իբրև լուաւ Եփիմիանոս՝ դարձաւ
 արաւմ, և անկաւ առաջի Թագաւորին և
 ասէ, մնայ է ինձ այսօր՝ զի որդին իմ արհա-
 մարհեաց զհրամանն Թագաւորիդ և զբանս իմ:
 Ասէ Թագաւորն ցԵփիմիանոս, մի՛ հողար
 դայդ. զի թերևս ես դարձուցից զնա յայն-
 պիտի խորհրդոյն:

Եւ հրամայեաց Թագաւորն կոչել զԱլէք-
 սիանոս. և գնացեալ գտին զԱլէքսիանոս, որ
 ընթեռնոյր զՍաղմոսարանն՝ զոր ունէր ՚ի
 ձեռին իւրում. և ասացին ցնա՝ կոչէ զքեզ
 Թագաւորն: Եւ յարուցեալ գնաց Ալէքսիա-
 նոս զհետ նոցա յապարանս Թագաւորին:
 Ասէ Թագաւորն ցԱլէքսիանոս, որդեակ՝ զա-
 մուսնուծիւնն պիղծ համարիս: Վատասխանի
 ետ Ալէքսիանոս և ասէ, ոչ թէ զամուսնու-
 ծիւնն պիղծ համարիմ, այլ գրեալ է ՚ի սուրբ
 աւետարանին, թէ որ ոչ թողու զհայր՝ կամ
 զմայր՝ կամ զկին՝ կամ զորդիս՝ կամ զազգա-
 կանս՝ և ոչ առնու զխաչն իւր և գայ զկնի իմ,
 չէ ինձ արժանի. ոսկի և արծաթ՝ կերակուր

է ժանկոյ , և հանդերձ փափուկ՝ ցեցոյ , իսկ
բարեպաշտու թիւն մնայ յաւիտեանս :

Յայնժամ կոչեաց թագաւորն զերկոտասան
իշխանս տանուաւերս՝ որք էին խրատատու թա-
գաւորու թեան իւրոյ , և ասէ ցնոսա՝ զինչ
արարից , քանզի ոչ կարացի դարձուցանել
զԱլէքսիանոս յայնպիսի խորհրդոյն : Պատաս-
խանի ետուն իշխանքն և ասեն , ոչ թէ բանիւ-
նորա վարի թագաւորու թիւնս մեր , այլ հը-
րամայեա՛ արկանել ՚ի սենեակս : Եւ թագա-
ւորն հրամայեաց արձակել զԱլէքսիանոս , և
առաքեաց հրաւիրակս ընդ ամենայն իշխա-
նու թիւնս իւր , ժողովել զամենեւեան գալ
՚ի հարսանիս :

Եւ իբրև դնացին քահանայքն կոչել զԱլէք-
սիանոս , զի պսակեցեն ընդ դստեր թագա-
ւորին , ասաց Ալէքսիանոս ընդ դէմ քահա-
նայիցն՝ մի՛ դնէք ինձ պսակ թառամելի , զի
զանթառամն շահեցայցս : Պատասխանի ետուն
քահանայքն և ասեն , որդեակ՝ թէպէտ ՚ի
թագաւորէն ոչ երկնչիս , այլ ՚ի մէնջ պատ-
կառեա՛ . և նա՛ լուռ եղև . և սարեալ պսա-
կեցին ընդ դստեր թագաւորին . և արարին
տասներկու օր հարսանիս : Եւ սպա առեալ
թագաւորն զձեռանէ մանկան և աղջկան՝

էարկ զնոսա ՚ի սենեակ և փակեաց ՚ի վերայ
նոցա զեօթն դուռն:

Եւ յարուցեալ զմանուկն շիջոց զկան-
թեղան և զմոմեղէնան, և ասէ ցաղջիկն քոյր՝
պարտ է ինձ և քեզ յաղօթս կալ և սպա
ննջել ՚ի միասին: Եւ ելեալ կացին յաղօթս
և ննջեցին սրբութեամբ: Եւ յետ սասներ-
կու աւուր անցանելոյ՝ ասէ աղջիկն ցԱլէք-
սիանոս, ընդէր ոչ յայանեցեր զքեզ հօր և
մօր քոյ, զի բազում դեղատու բժիշկք կան
՚ի քաղաքիս: Ասէ ցնա Ալէքսիանոս, սահման
է՝ զի այր մարդ համարձակ է քան զկինն .
պարտ է ինձ երեք անգամ խօսիլ, և քեզ ոչ
սալ պատասխանի:

Եւ յարուցեալ եկաց յաղօթս և ասաց այս-
պէս, աստուած Աբրահամու Իսահակայ և
Յակոբայ՝ որ փրկեցեր զերիս մանկուհնն ՚ի
հրոյն բորբոքելոյ, փրկեա՛ և զիս յայս կնոջէս .
զի մարմին կնոջ որպէս հուր է, և ես որպէս
խոտ առաջի հրոյ կամ ՚ի յայրումն, և լռեալ
ննջեցին: Եւ յարուցեալ առաւօտուն Ալէք-
սիանոս ասէ ցաղջիկն՝ արի՛ կացցուք յաղօթս:
Ասէ աղջիկն ցԱլէքսիանոս, ընդէր ոչ խօսիս
ընդ իս և ոչ բանիւ մխիթարես զիս:

Յայնժամ Ալէքսիանոս ետ զմատանին ոսկի

'ի նա և ասէ, քոյր՝ առ զսա և սրահեան՝ 'ի
 քեզ յիշելիք՝ մինչ ես երթայց 'ի դուռն ե-
 կեղեցւոյն յաղօթս, և ասպա գամ կատարեմ
 զկամս քո: Եւ բացեալ զդուռնան, ելեալ
 գնաց մինչև յանկերանոցն. և տեսեալ զաղ-
 քատիկ մի՝ որ ունէր նա մագեղէն մի զան-
 ձամբն իւրով, ետ նմա զծիրանին՝ և էառ
 զմագեղէն նորա և ազաւ ինքն: Եւ էր գին
 ծիրանւոյն երեք հարիւր դահեկան. և աղ-
 քատիկն թաքոյց զայն: Եւ առեալ Ալէքսիա-
 նոս այլ կարկատուն կտաւ մի, էարկ զգլխովն
 և ծածկեաց զերեսն իւր:

Իբրև էանց սրահ մի զիշերոյն՝ խնացաւ
 կինն զխորհուրդս նորա, ճիչ և աղաղակ բարձ-
 եալ լայր: Եւ յարուցեալ դռնապանն ետես
 զդուռնան բացեալ. և վառեցին ջահս և ըն-
 թացան 'ի յորոնել: Եւ 'ի յորոնելն առ ոտն
 կոխէին զնա, և նա ասէր՝ մի՛ նեղէք զիս՝
 թէպէտ աղքատ եմ, այլ նոյ արարած եմ:

Եւ էջ առ եզր ծովուն՝ եգիտ նաւ մի որ
 երթայր յԵրուսաղէմ, և ասէ ցնաւավարն,
 սրբեակ՝ սա՛յր զիս յԵրուսաղէմ, և ես աղօթս
 առնեմ վասն քո: Ասէ նաւավարն, աղքա-
 տիկ ընդէր ծածկես զերեսդ քո և ոչ բանաս:
 Եւ նա ասէ, զի խստակրօն վարդապետի աշա-

կերտ եմ . և նա սրատու իրեալ է ինձ՝ թէ մի
 հայիր ՚ի մարդ և ոչ յաշխարհ , և մի բանար
 զերեսդ : Եւ մտեալ ՚ի նաւ հասին յերապո-
 լիս , և անտի ՚ի Ախարոս , և անտի յերուսաղէմ ,
 և յերուսաղէմէ ՚ի լեառն Սինա՝ յոր տէր
 խօսեցաւ ընդ Մովսէսի :

Եւ արար անդ զնշան խաչին ՚ի վերայ նորա
 և ասէ , սա եղիցի ինձ գերեզման և սուռն
 յարկի . և եկաց անդ Ալէքսիանոս ամս երե-
 սուռն և չորս . և էր կերակուր նորա ՚ի ծայրից
 ծառոց և ՚ի խոտոց , և ըմպելի նորա ջուր
 անձրեաց :

Եւ ասրա սասանայ ընկէց ՚ի սիրտ նորա
 զկարօտութիւն և զգութ ճնողացն , և այնու
 ներդէր զնա : Եւ յարուցեալ էջ առ եզր ծո-
 վուն , և եգիտ նաւ մի՝ որ երթայր յերու-
 սաղէմ . և ասէ ցնաւալարն՝ սա՛ր զիս յերու-
 սաղէմ , և ես վասն քո աղօթս առնեմ . և
 առեալ զնա նաւեցին : Եւ իմացեալ զիւացն
 յարուցին հողմ և մրրիկ ՚ի վերայ ծովուն , և
 սկտաւ ալէկոծիլ նաւն , և ոչ կարացին յաղթել :

Յայնժամ եկին եօթն դէք չարագոյն քան
 զառաջինն , և ասեն ցմիսեանա՝ մեք դորա
 համբերութիւնն գիտեմք , զի սորա զօրու-
 թիւնն առաւել է քան զՅորայն , այլ զայս

առնեմք դմա չարութիւն , զի յարուցանեմք
հողմն սասաիկ 'ի վերայ ծովուն , և տանիմք
զդա՛ 'ի դուռն տան հօր իւրոյ . զի տեսանե-
լով զաղէսս ճնողացն իւրոց՝ տայցէ ծանօ-
թութիւն : Եւ հանին հողմն սասաիկ 'ի վերայ
ծովուն , և տարեալ ընկեցին զնաւն 'ի դուռն
տան հօր իւրոյ :

Իբրև գիտաց Ալէքսիանոս , թէ սատանայի
էր գործն՝ ասէ , երթամ 'ի դուռն տան հօր
խնոյ , և անդ կոխեցից զգլուխ սատանայի : Եւ
իբրև ել առ եզր ծովուն՝ ետես զԵփիմիա-
նոս զհայրն իւր նստեալ 'ի վերայ ջորւոյ , զի
երթայր 'ի բաղանիս : Եւ ընթացեալ ընդ ա-
ռաջ երկիրեպագ նմա և ասէ , յօտար երկրէ
եկեալ եմ վասն անուան քոյ . արդ որ ինչ 'ի
փշրանաց սեղանոյ քոյ անկանի , բաւական է
ինձ կերակուր . և որ յասպակոյն քո կաթի ,
բաւական է ինձ ըմպելի :

Ասէ Եփիմիանոս ցեղըխայոս ծառայ իւր ,
որդեակ՝ սար զդա յանկեւանոցն մեր : Իբրև
տարաւ զնա յանկեւանոցն՝ ճիչ և աղաղակ
բարձին աղքատքն ամենայն և ասեն , թէ դա՛
աստ գայ՝ մեք ամենեքեան ելանեմք : Ասէ
Եղըխայոս , աղքատիկ՝ վասն քո զամենայն աղ-
քատն ոչ կարեմ հանել աստի . ասէ Ալէքսի-

անոս, աղաչեմ գրեզ՝ տար զիս մինչև յերրորդ
դուռն: Եւ Եղբիայոս տարեալ զնա ասէ
ցդռնապանն, [Թոյլ տուր տմա բնակիլ յայսմ
տեղւոջս. և եկաց անդ աւուրս երեսուն:

Ապա յես երեսուն աւուրն ասէ դռնա-
պանն, աղքատիկ՝ արի և գնա՛ աստի. և այս-
պէս երկու և երեք անգամ վարեաց զնա ա-
սելով՝ ել և գնա՛ աստի. քանզի տիկինն մեր
սովորուածին ունի գալ ընդ այս, և երթայ ՚ի
ծովերն լալ զորդին իւր Ալէքսիանոս զտէրն
մեր: Եւ նա ասէր՝ [Թէ ես մտտ մեռանիմ,
և ոչ գնամ յայլ տեղի:

Եւ յես սակաւ ինչ աւուրց գայր տիկի-
նն, և առաջի նորա ծառայք. և ծառայիցն
լրբեալք՝ առեալ զհերաց նորա քարշէին զնա
ի վերայ երեսաց իւրոց: Եւ նա ձայնէր և ա-
սէր, տիկին բարի մի՛ տար զիս այդպէս առ-
նել. [Թէպէտ և աղքատ եմ, այլ աստուծոյ ա-
րարած եմ: Եւ նա սաստէր աղջկանցն և ա-
սէր, [Թոյլ տուք դմա բնակիլ յայդմ տեղւո-
ջրդ պանդխտուածեամբ: Եւ ընդ աղքատիկն
նայելով ասէր տիկինն, աչքն սորա նմանի ա-
չացն Ալէքսիանոսին իմոյ:

Եւ ելեալ եկաց և սկսաւ լալ ընդ դէմ
ծովուն և ասէր, ջուրք՝ որ ՚ի ծովդ էք, մի՛

Թէ կլայք զորդին իմ զԱլէքսիանոս , ցուցէք
ինձ զնա զի նա էր իմ յեմին և առաջին միսի-
Թարանքն : Ա՛ւետարեր հողմիկ՝ մի Թէ ունիք
լուր և կամ զհոտն իմ Ալէքսիանոսին . զի սուրբ
էր նա ինձ յաստուծոյ , և ինդրուած ՚ի սրբ-
բասէր քահանայից :

Եւ զայս ամենայն լսէր Ալէքսիանոս և
գալարէր աղիք նորա՝ և խորովէր լեարդն , և ոչ
տայր ծանօթութիւն յահէ ամենակալին նոյ ,
որ ասէ ՚ի սուրբ աւետարանն՝ Թէ որ ոչ թու-
ղու զհայր՝ կամ զմայր՝ կամ զկին՝ կամ զա-
գարակս վասն անուան իմոյ , չէ՛ ինձ արժանի :
Եւ եկաց ՚ի դուռն սան հօր իւրոյ տասն եր-
կու տարի :

Եւ սպա հայեցաւ աստուած ՚ի ասուա-
պանս նորա , և առաքեաց զհրեշտակապետն
Գաբրիէլ՝ առնուլ զհոգի նորա : Իբրև եկն
Գաբրիէլ , եւ նմա ողջոյն և ասէ՝ Էկ Ա՛լէք-
սիանոս մարդդ աստուծոյ՝ և հանգի՛ր յու-
րախուժիւնս երկնից՝ ՚ի վերինն Երուսաղէմ ,
՚ի բնակութիւնս հրեշտակաց . զորմէ պատմէ
Պօղոս՝ Թէ զոր ակն ոչ ետես՝ և ունկն ոչ
լուաւ՝ և ՚ի սիրտ մարդոյ ոչ անկաւ , զայն
պատրաստեաց աստուած սիրելեաց իւրոց : Եւ
նա ասաց հրեշտակին՝ ներել սակաւիկ մի ,

մինչև գրեացէ զվարս անձին իւրոյ: Եւ յա-
րուցեալ էառ քարակէզ և մուր ՚ի բաղանեաց,
և նստեալ գրեաց այսպէս:

“Ես եմ Ալէքսիանոս որդին ձեր. հայր
իմ Եփիմիանոս, և մայր իմ Աննայ, և կին իմ
Մարգարիտ: Ողջոյն թագաւորիդ և քահա-
նայից քաղաքիդ միաբան ամենեցուն: Մի լայր
հայր իմ ծերացեալ, այլ մխիթարեան աստու-
ծով. յիշեան զի դու զայս կեանքս խնդրէիր,
և ես զերկնային. ետու զերկաթն, և առի զու-
կին փոխարէն ՚ի տեառնէ:”

“Մի լայր մայր իմ և մի արամիր, մխի-
թարէ զքեզ քրիստոս. յիշեան զի դու զայլիդ
և աղջկունքն առաջի քո և հասեալ նոցա ՚ի
վերայ իմ, քարշէին զհերացս ՚ի վերայ երեսաց
իմոց. և ես լայի ոչ զայն որ զիս քարշէին, այլ
զայն՝ զի լայիդ դու և աղիւղորմ կսկծանօք
հառաչէիր, և իմ զնոսս հայեցեալ՝ գալարէր
աղիքս, և ոչ իշխէի սալ ծանօթութիւն յա-
հէն աստուծոյ:”

“Մի լայր և դու կին իմ Մարգարիտ. զի
ահաւասիկ պատրաստեցի ինձ և քեզ ճանա-
պարհ, որ սանի ՚ի կեանսն յաւտոննից:”

Եւ ծալեալ զթուղթն եդ ՚ի մէջ ձեռին
իւրում և խփեաց, և նոյն ժամայն աւանդեաց

զհոգին իւր 'ի փառս աստուծոյ: Եւ իջին
տասն երկու հրեշտակք 'ի ձե մարմնաւորաց
և յայսնեցին քաղաքին և ասացին, արի՛ք գնա-
ցէք 'ի դուռն Եփիսմիանոսի՝ և գտէք զմարդն
աստուծոյ վախճանեալ:

Եւ 'ի մէջ գիշերին գղղեցաւ քաղաքն
ամենայն. և վառեցին ջահս և մոմեղէնս, և
գնացին գտին որպէս հրեշտակքն ասացին:
Եւ արկին 'ի վերայ նորս դիպակս պատուա-
կանս. և տեսին զի Թուղթ ինչ գոյր 'ի ձեռնն
նորս, և կամեցան բազումք առնուլ զնա, և
ոչ կարացին հանել 'ի ձեռաց երանելոյն:

Եւ մատուցեալ յառաջ քահանայ մի իւ
մաստուն և ասէ, ոչ է պարս առնուլ ումեք
զԹուղթն, այլ միայն նա որ այսչափ ժամա-
նակս կերակրեալ է զդաս: Եւ ուղարկեցին
խնդիր Եփիսմիանոսի. և իբրև եկն՝ երկիր ետրոգ-
նմա և ասէ, մեղայ քեզ սուրբ աղքատիկ. զի
ոչ գիտէի Թէ այսպէս սուրբ էիր. և մեկնեալ
զձեռն, և առեալ զԹուղթն եբաց և սկսաւ
լինԹեռնուլ, և էր գրեալ այսպէս:

«Ես եմ Ալէքսիանոս որդին ձեր. հայր
իմ Եփիսմիանոս, և մայր իմ Աննայ, և կին իմ
Մարգարիտ»: Եւ իսկոյն ձգեաց զԹուղթն
'ի ձեռաց իւրոց, և անկաւ 'ի վերայ մեռեալ

մարմնոյն , և յինքն ամփոփեալ գոչէր և լայր .
 և ոչ կարէին հանել ՚ի դրկաց նորա զերբա
 աւուրս :

Եւ եկեալ մայր նորա և կինն՝ ոչ կարացին
 մտանել առ նա վասն ամբոխին : Յայնժամ բե-
 րին գանձս բազումս և ցանեցին շուրջ զամ-
 բոխուն . և քակեցաւ ամբոխն զինի գանձին ,
 և ապա կարացին մտանել առ Ալէքսիանոս
 մարդն աստուծոյ :


Եւ անկեալ մայրն ՚ի վերայ նորա , և հան-
 եալ զասինսն եդ ՚ի վերայ երեսաց մանկանն
 և ասէ , սրդեակ իմ , թէ կենդանի ես՝ խօս-
 եա՛ ընդ տառապեալ մօր քոյ . և դնէր զերեսն
 ՚ի վերայ սրտին՝ և հեղոյր զարտասուսն , և
 ձայն բարձեալ լայր դառնապէս՝ և ողբայց
 աղիողորմ յոյժ :

Եւ եկեալ կին նորա՝ ընկէց զմատանին և
 ասէ , արդ՝ այս է սուրբ գալուստդ սիրելի
 իմ Ալէքսիանոս , մինչև յերբ պահեմ զյիշե-
 լիքս քո : Եւ ո՞ կարէ պատմել գրով զկոծումն
 և զողբումն նոցա՝ հանդերձ բոլոր քաղաքան
 առ հասարակ :

Եւ յետ բազում լալոյն՝ տալեալ Թաղե-
 ցին զերանելի նահատակն քրիստոսի զսուրբն
 Ալէքսիանոս , և շինեցին եկեղեցի ՚ի վերայ

Նորա: Եւ կացեալք հայր և մայր նորա կեն-
 գանի զամս ութն զկնի փոխման սրբոյն՝ ծա-
 աայելով և սպասաւորելով սուրբ գերեզմանի
 նորա, յես այնորիկ հանգեան խաղաղութի
 ՚ի քրիստոս: Իսկ սուրբն Ալէքսիանոս՝ փոխե-
 ցաւ ՚ի քրիստոս ՚ի Հրոսից ամսոյ քսան և
 ութն՝ ՚ի փառս աստուծոյ հօր, ամէն:

Բարեխօսութեամբ կամաւոր աղքատացե-
 լոյն վասն քո, և օտարացելոյն ՚ի մարդկային
 ծանօթութենէ, քրիստոս աստուած՝ տո՛ւր և
 մեզ ասել զվայելութիւն կենցաղոյս, և սի-
 րել զքեզ ՚ի բոլոր սրտէ և յամենայն զօրու-
 թենէ, և մերձենալ ՚ի սուրբդ սրբոց և ընդ
 ամենեցուն փափագելիդ, ամէն:





ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՏԵՐ ՅՈՒՍԿԱՆ , ԵՒ ՈՐԴԻՈՅ ԿՈՐԻՆ

ՍՏԵՓԱՆՆՈՍԻՆ

Ի թուականութեան հայոց՝ վեց հարիւր
 վաթսուէն ամին , յերկիրն ընշտունեաց՝ ՚ի
 գաւառն Տաբայ՝ ՚ի Գօղայ քաղաքն , որ ասի
 Արսամես մերձ ՚ի Շամիրամակերտ մեծ Գղե-
 կին Վանայ , էր քահանայ ոմն մեծազգի և
 մեծատուն , զարգացեալ ամենայն առաքի-
 նութեամբ , անուն նորա Ստեփաննոս Եւ-
 էր յոյժ պարկեշտ և ամօթխած , աղքատա-
 սէր և ողորմած , հիւրընկալ և մարդասէր , ա-
 ռատաճեռն և ամենաբաշխ , քաղցեւոց կերակ-
 րիչ , և մերկացեւոց զգեցուցիչ , և յայլ ամե-
 նայն բարեգործութիւնս ժիր և արի . նաև ՚ի
 պաշտօնս աստուծոյ և ժամակարգութիւնս
 սրբոյ եկեղեցւոյ՝ անձանձիր աղօթասէր Եւ-
 զի կին նորա ամուլէր՝ և ոչ ծնանէր . վասն
 որոյ միշտ հայցէր յաստուծոյ մնալ նմա սրտուղ-
 օրհնութեան՝ և ժառանգ սեփհականս

Իսկ որ զկամս երկիւղածաց իւրոց առնէ
 ակէր, լուաւ աղօթից նորա, և ետ նոցա արու-
 զաւակ. զոր յաւուր մկրտութեանն անուան-
 նեցին Յուսիկ: Եւ եօթն ամաց լեալ աղայն՝
 հայրն սկսաւ գրել ՚ի տախտակի, և ուսուցա-
 նել մանկանն զգիրս աստուածային. զի էր
 յոյժ հանդարտ՝ շնորհալի և առատամիտ, եր-
 կարողի և քաղցրածայն, յոյժ հեզ և խոնարհ,
 քաղցր և սիրուն յաչս ամենեցուն:

Եւ յորժամ եղև մանուկն Յուսիկ տասն
 երեք ամաց՝ ծնողքն ետուն զնա առ մեծ
 վարդապետն և խտտակրօն ճգնաւորն Անանիա՝
 ՚ի մեծահաջակ աթոռն Վարագայ՝ որ էր քե-
 ոսն իւր. զի ՚ի նմանէ կասարեալ ուսցի զհին
 և զնոր կտակարանս անձային սուրբ գրոց: Եւ
 կացեալ անդ առ վարդապետն զամս չորս,
 եղև յոյժ հմուտ և տեղեակ ամենայն աստ-
 ւածաշունչ տառից, և սրատելիքանացն նոյ.
 և ՚ի չափ հասակի լեալ մանուկն Յուսիկ՝ ծը-
 նողքն նորա կամեցան մուծանել զնա ՚ի կարդ-
 աշխարհի:

Եւ հայրն նորա Ստեփաննոս քահանայն՝
 գնաց ՚ի Վարագ՝ էառ հրաման ՚ի վարդա-
 պետէն: Եւ նա հրամայեաց մանկանն Յուս-
 կայ զնալ ընդ հօրն ՚ի տունն, և հեազանդիլ

հրամանաց ճեղղացն՝ և առնել զհարսանիսն է
 Եւ նա ոչ կամէր, զի ուխտ եղեալ էր ընդ այ
 սրբութեամբ պահել զկուսութիւն իւր մինչև
 ՚ի մահ. բայց յայնժամ ոչ իշխեաց ընդդիմա
 նալ հրամանաց վարդապետին. այլ արասա
 աւօք համբուրեաց զաջն, և ելեալ ՚ի Վարա
 դայ գնաց ընդ հօրն իւրում ՚ի սուռն, և արա
 բին զհարսանիսն:

Եւ յորժամ առանձնացաւ յառազաստիս
 միայն ընդ հարսին, յիշեաց զուխտն իւր որ
 ընդ այ, այլև զողջախոհն Յովսէփ՝ և զերա
 նելին Ալէքսիանոս՝ յորինակ եղեալ իւրն է
 Եւ քաղցրութեամբ աօէր ցաղջիկն, գխտա
 ցիր՝ քնյր իմ ըստ հոգւոյ՝ զի գրեալ է ՚ի գիրս
 կանոնաց ՚ի սուրբ առաքելոցն, եթէ որ դիցէ
 ուխտ առաջի աստուծոյ վասն կուսութեան
 և սրբութեան անձին իւրոյ և ոչ պահիցէ
 մինչև ՚ի մահ՝ այլ ամուսնացի, նա՛ ուխտա
 զանց լինի քրիստոսի, և ասելի ամենայն սրբոցն
 աստուծոյ. վասն որոյ ճշմարտութեամբ այժմ
 ասեմ քեզ զխորհուրդն իմ, զի ես ուխտ եղ
 եալ եմ ընդ աստուծոյ սրբութեամբ և անա
 րատութեամբ պահել զկուսութիւն իմ մինչև
 ՚ի մահ: Զի թէ ամուսնութեամբ ապակա
 նեցից զկուսութիւնդ, քո՛ լինիմ ուխտագանաց:

Ասէ աղջիկն , եթէ ամուսնութիւնն աւարականութիւն է , ապա զխարդ ՚ի մէջ սուրբ եկեղեցւոյ՝ հրամանաւ աստուծոյ , և ձեռամբ քահանայից , խաչիւ և աւետարանաւ դնեն պսակ ՚ի գլուխ փեսային և հարսին՝ և լինին մարմին մի ըստ բանի տեառն :

Ասէ մանուկն Յուսիկ՝ ծանիր քոյր , զի պսակն զոր քահանայքն դնեն ՚ի վերայ գլխոց մերոց՝ այն մարմնաւոր է և ապականացու , և ընդ մեռանիլ մարմնոյն անցանին ընդ նմա ամ փառք և մեծութիւնք և վայելչութիւնք աշխարհիս : Իսկ այն կենաց պսակն և փառքն և ուրախութիւնք սրբոցն , անանցանելի և յաւիտենական են :

Եւ խելոյն լոյս աստուածային շնորհացն ծագեալ ՚ի սիրտ աղջկանն՝ ասէ ցՅուսիկ , արդ դիցուք ուխտ առաջի աստուծոյ ծածուկ ՚ի մարդկանէ , զի ՚ի միասին կացցուք աստ ՚ի տան հօր քում , և պահեցցուք անարատ սրբութեամբ զկուսութիւնս մեր որպէս զհոգևոր եղբայր՝ ըստ հաճոյից կամացն աստուծոյ :

Եւ զայս լուեալ սրտանւոյն՝ ասէ , տէր աստուած մեր պահեցէ զմեզ յուխտին մերում զոր ուխտեցաք՝ և փրկեցէ զմեզ յամենայն որոգայթից հոգւոյ և մարմնոյ : Եւ

ապա 'ի ծուճկս անկեալ արտասուօք և բա-
զում սրաղասանօք յանձնեցին նոյ զինքեանս :
Եւ զինի աղօթիցն առանձնացեալ զաս 'ի
միմեանց ննջեցին . և յորժամ հարին զգիշե-
րային ժամն , յայնժամ յարուցեալ մանուկն
Յուսիկ՝ հոգևոր սիրով մխիթարեաց զաղջի-
կն , և յորդորեաց ջերմ սիրով և երկիրդիւ-
կալ յաղօթս առ աստուած . և ինքն ելեալ 'ի
սանէն ուրախութեամբ գնաց յեկեղեցին 'ի
ժամ աղօթիցն : Եւ այնպէս ահիւ և երկիր-
դիւն աստուծոյ կացին և մնացին 'ի միասին ա-
նարաս սրբութեամբ՝ զամս տասն երեք ան-
գիտելի 'ի մարդկանէ , բայց միայն ծածկագի-
տին աստուծոյ յայանի էր :

Եւ ապա քահանայն Ստեփաննոս խորհե-
ցաւ ձեռնադրել զորդին իւր քահանայ . վասն
որոյ կոչեաց զԱնանիա վարդապետն , և հան-
դէս մեծ արարեալ բազմութեամբ եպիսկո-
պոսաց՝ վարդապետաց՝ քահանայից , որք ամե-
նեքեան կամեցան , և ձեռնադրեցին զՅուսիկ
քահանայ , և արարին ուրախութիւն մեծ զա-
ւուրս եօթն :

Եւ յետ երկուց ամաց 'ի թուին վեց հար-
իւր եօթանասուն և հինգ՝ սուրբ քահանայն
Ստեփաննոս փոխեցաւ առ քրիստոս :

Եւ սուրբ քահանայն տէր Յուսիկ՝ օր ըստ օրէ կրթէր զանձն իւր սրահօք և աղօթիւք, մաքուր սրբութեամբ, և ամենայն առաքինութիւնս:

Եւ յետ ժամանակաց ինչ՝ եղև գալ զօրացն թաթարաց յարևելս ՚ի գերեւել զաշխարհս Հայոց, և գերեալ զբազումս ՚ի գաւառէն Տաբայ և յԸնշտունեաց՝ և դարձան ՚ի տեղիս իւրեանց բազում աւարաւ: Եւ ընդ բազմաց գերեւելոցն՝ գերեցաւ և անուանեալ կինն Յուսիկ քահանային ՚ի գիւղաքաղաքէն Արսամետոյ, և տարեալ ՚ի Շահաստան քաղաքն թալլելոց վաճառեցին զնա կնոջ միում այլազգի իշխաննի, որոյ անունն էր Բիրբի, և կինն այն՝ էր հաւատոյն քրիստոնեայ:

Եւ իբրև գիտաց իրիցկինն թէ քրիստոնեայ է, աղաչեաց զնա և ասաց՝ թէ ես իրիցկին եմ պարկեշտութեամբ կացեալ, և անտերձ ՚ի խառնակութենէ անօրինաց: Զի այն թաթարն՝ որ զիս գերեաց՝ յառաջին օրն հիւանդացաւ, և աստուած իմ պահեաց զիս անփորձ ՚ի մեղաց. վասն որոյ աղաչեմ զքեզ տիկին, ոչ տալ զիս ՚ի գործ մեղաց. զի գիտեմ կերպաս նկարել, և այնու քեզ առաւել վաստակ առնեմ, և ես ՚ի մեղաց զառ մնամ. զի կին քահանայի եմ սրբութեամբ կեցեալ և գարշիմ ՚ի

խառնակութիւնսն անօրինաց: Չայս իբրև լուա
տիկինն, արար ըստ կամաց նորա:

Եւ երէցն Յուսիկ եւ ՚ի խնդիր ամուսնոյն
իւրոյ և գնացեալ եգիտ անդ ՚ի Շահաստան
քաղաքն Թավրէզ. և եկաց առաջի տիկնոջն
՚ի կերպ մուրացողն՝ հարցեալ զնա տիկինն և
ասէ՝ ի՞նչ մարդ ես. և նա ասէ, երէց եմ և
գերոյ տէր. և տիկինն այն եցոյց նմա զիւր
ամուսինն: Եւ ՚ի խօսինն երկուսն ընդ կնոջ
իւրոյ, տեսանէր տիկինն, զի շունչ քահանային
բոցածաւալ իբրև զլոյս ելանէր, և դարձեալ
մտանէր ՚ի բերանն իւր՝ ՚ի նշան անմեղութեան
նոցա:

Եւ տիկինն հարցեալ և գիտաց՝ թէ դե-
ռևս սողայ ոչ է եղեալ նոցա. յայնժամ ազդ-
մամբ խնամոցն աստուծոյ՝ ասաց զերէցն, թէ
՚ի քէն խնդիր մի ունիմ, դու զայն ինձ աուր՝
և ես զկինդ քո տաց քեզ ձրի:

Ասէ երէցն, զի նչ է խնդիր քո տիկին. և
նա ասաց, քեզ որդի սալոց է աստուած՝ և
այն քահանայ լինելոց է. և զայս միայն հայ-
ցեմ ՚ի քէն՝ ա՛ռբ առնել որդւոյ քո որ ծնա-
նելոցն է ՚ի քէն՝ զառաջին պատարագն վասն
հոգւոյ իմոյ՝ ՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն
բազում մեղաց իմոց:

Ասէ երէցն , եղիցի ըստ բանի քում . և զինդրուածս սրտի քո՝ տէր կատարեսցէ :

Ասէ տիկինն , ահա կին քո անխորձ ՚ի չարեաց , և անսերձ ՚ի յանօրինաց , և այլ ևս հինգ հարիւր դեկան ձեզ ՚ի պէսս շինութեան , երթայք ողջութեամբ և խաղաղութեամբ :

Եւ առեալ երէցն տէր Յուսիկ զկինն իւր և եկեալ ՚ի գիւղն իւրեանց Արտամեստ արարին շինութիւն իբրև զամս երկու : Եւ յաւարտ շինութեանցն ամենայնի՝ ասէ երէցն ցամուսինն իւր , դու ինքնին գիտես՝ զի ամ շինութիւնս մեր զոր արարայք , և ամենայն կահք և կարասիք մեր զոր այժմ ունիմք , այս ամենայն ՚ի պարգևաց ընչից ատկնոյն է զոր շնորհեաց մեզ : Բայց նա հաւատով խնդրեաց , թէ որդին որ ծնանիցի ՚ի մէնջ , զառաջին պատարագն ՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն մեղաց նորա արասցէ : Եւ զի մեք ուխտեցայք առաջի աստուծոյ , զի սրբութեամբ պահեսցուք զկուսութիւնս մեր մինչև ՚ի մահս մեր . և ուստի՞ ծնանիցիս դու որդի որ լինիցի քահանայ , և զինդրուածս ատկնոջն այնորիկ կատարեսցէ :

Ասէ իրիցկինն , տէր՝ հանապաղ ընդ իս ասես թէ , առանց հրամանին աստուծոյ տերև .

մի ՚ի ծառոց ոչ անկանի ապա որ ինչ հրաման տեսաւն են՝ օրհնեալ եղիցի յաւիտեան: Ասե քահանայն Յուսիկ, ես երթայց ՚ի սուրբ եկեղեցին՝ և անդ ՚ի սուէ և ՚ի գիշերի աղօթիւք և պաշամամբ և պատարագօք աղաչեցից զտէր աստուած. և դու ՚ի սան քում ՚ի սենեկի աղօթեա՛ միշտ ջերմ արտասուօք, թերևս մարդասէրն աստուած յայանեսցէ մեզ զհաճոյս կամաց իւրոց:

Եւ ՚ի վերայ այսր ուխտի անցին աւուրք իբրև երեսուն. և յազդմանէն աստուծոյ ՚ի սուրբ Երուսաղէմայ վարդապետ մի Ստեփաննոս անուն՝ առաքինի և ճգնազգեաց՝ զգաստ և պարկեշտ յամենայն ճանապարհս աստուածային՝ յոյժ ծերացեալ ալեօք՝ եկն ՚ի քաղաքն Արտամետ, և կացեալ անդ զաւուրս ինչ:

Եւ ՚ի կիրակի գիշերի զկնի առանձնական աղօթիցն սեսանէր սեսիլ երագոյ, զի էր տէր Յուսիկ քահանայն զարդարեալ տպիտակ և պայծառ քահանայական զգեստիւ, և խաչ և դաւազանն ոսկիազօծ՝ ականակուռ ընդելուզեալ մարդարոօք՝ ծաղկեալ շուշանօք յաջոյ ձեռին նորս, և յահեակ ձեռին՝ սուրբ աւետարան: Եւ ՚ի գլուխ դաւազանին ետես բուսեալ կանաչասաղարթ տերևով զեղեցիկ

վարդ մի՛ բողոքազարդ ծիրանածաւալ և կար-
մրավայլ որպէս զհուր ՚ի վառ , և զարհուր-
եալ ՚ի տեսլենէն զարթեաւ :

Եւ զկնի արձակման առաւօտեան ժամուն՝
վարդապետն այն կոչեաց առանձին առ ինքն
զտէր Յուսիկ քահանայն , և տարեալ յաւան-
դատունն , և երդմամբ եհարց զնա վասն վա-
րուց և առաքինութեան նորա : Իսկ նա յա-
ռաջ ոչ կամեցաւ յայտնել նմա բան ինչ՝ մինչ
զի ընդ բանիւ արար զնա վարդապետն . և
ասլա քահանայն Յուսիկ սկսաւ պատմել նմա
խոստովանաբար զամենայն մի ըստ միոյն :

Եւ վարդապետն Մտեփաննոս հիացեալ
ասէ , օրհնեալ է աստուած որ տայ զօրութի
և համբերութիւն սիրողաց իւրոց : Եւ ասլա
յետ հոգևորական մխթարութեանն՝ ասէ վար-
դապետն ցտէր Յուսիկ , գիտես որդեակ՝ զի
՚ի սկզբանէ զնախնիքն մեր արու և էգ ստեղծ-
եաց աստուած , զի ամուսնութեամբ աճեացին
և լցցեն զերկիր . որպէս և առաքեալն Պօղոս
ասէ , պատուական է ամուսնութի , վասն որոյ
պատուիրանադրութեամբ տեառն ես տամ
ձեզ վերտփին հրաման ամուսնութեան ձերոյ :

Ասլա յետ աւուրց ինչ յղացաւ կինն տէր
Յուսիկ , և ետ ան նոցա զաւակ արու , զա-

դաւնին սամբիժ զսուրբն Ստեփաննոս, որ կրթե
 եալ վարժեցաւ ՚ի կրօնս աստուածպաշտուէ :
 Եւ իբրև ջրթափեալ եհաս ՚ի գիտութիւն
 բարւոյ և չարի, սկսաւ հետևիլ բարեաց, և
 խորշիլ ՚ի չարեաց՝ պարկեշտ վարուք և ուղիղ
 գնացիւք, կրթէր զանձն իւր ՚ի սրահս և յա-
 ղօթս սրբութեամբ, հեռանալով ՚ի լկաի և
 յանմիտ բարուց կանանց : Ի տիս աղայութե-
 և ՚ի հասակն մանկութեան զկատարելոցն ունէր
 զինքեան զգիտութիւնս . խոհեմ և իմաստուն,
 ժուժկալ և համբերող, ուսումնասէր և ողոր-
 մած, հլու և հպատակ հրամանաց ճնողացն,
 հեզ և հանդարտ առ ամենեւեան :

Եւ եղև յաւուր միում գնալ նմա ՚ի ջա-
 ղացն՝ տանիլ ցորեան ՚ի տանէ իւրեանց ՚ի
 գիւղն Անգղ՝ առ ՚ի աղալ յաղորիսն : Եւ զի
 էր յաւուրսն յայնոսիկ սղութիւն հացի . և
 աղքատքն յոյժ տառապէին, և ետես զի բա-
 զում աղքատք հաւաքեալ էին ՚ի դուռն ջա-
 ղացին : Եւ ինքն բարեսնունդ պատանին Ստե-
 փաննոս՝ բաժանեաց զամենայն ցորեանն աղ-
 քատաց կո՛ւց կո՛ւց, և մնաց խորդն դասարկ :
 Ապա անտես ՚ի մարդկանէ ելից զայն մանր
 աւաղով, և գեցմակ մոխրով, և ասաց ոմանց
 օգնել ինքեան՝ և բառնալ ՚ի վերայ գրաս-

տուն իւրոյ, զոր երեր յԱրտամէտ . և վար-
եալ զէջն ՚ի բակն իւրեանց, ինքն փախուց-
եալ գաղտաբար անկաւ ՚ի ճանապարհ, և
գնաց ՚ի Բերկրի:

Իսկ երէցն Յուսիկ առեալ զբեռն յիշոյն՝
տարաւ ՚ի տունն . և մայրն բացեալ զբեռն
եհան ալիւր, և արար խմոր . և հասուցեալ
զհացն ասաց իրիցուն, ել ՚ի դուրս և տես
զաղայն և ասա՛ նմա զի եկեսցէ և կերիցէ
զհաց քանզի քաղցեալ է . և կարծէին թէ ընդ-
տղայն գեղջն ՚ի խաղի է, և կամ թէ աշ-
խասեալ ՚ի ճանապարհին ննջեալ է ՚ի տեղի
ինչ: Եւ ելեալ Յուսիկն շրջեցաւ ընդ գիւղն
բոլոր և ոչ եգիտ . և մայրն յոյժ տագնապէր
մտօքն՝ թէ զինչ եղև տղայն: Եւ մինչ երե-
կոյ եղև՝ առաւել հոգային ճնողքն, թէ սւր-
իցէ . և զգիշերն ողջոյն անքուն կացեալ հո-
գային զտղայն . և առաւել ևս մայրն ըստ մայ-
րական գթոյն աղէկիզեալ լայր դառնապէս,
որպէս և է սովորութիւն մօր հոգալ զտղայս:

Եւ ՚ի վաղիւն գնացին ասա և անդ ՚ի գիւղ
և ՚ի քաղաք . գնաց հայրն ՚ի Յոստան, և մայրն՝
՚ի Վան, հարցին և ոչ գտին . և դարձան ՚ի
տունս իւրեանց՝ և լային անմխիթար սրամու-
թեամբ զցայգ և զցերեկ: Եւ սպա յիս տասն

աւուր հանդիպեալ ոմն ՚ի ծանօթից նոցա ,
 ետես զնոսա ՚ի լաց արուր դիմօք . և հարց-
 եալ գիտաց զպատճառն , և ասաց թէ զՍտե-
 փաննոսն ես տեսի յայս ինչ օր ՚ի գիւղն Առ-
 չանի , և ասացի թէ վասն ինչ սրատճառի եկե-
 եալ ես աստ . և նա ասաց թէ հայրն իմ
 յուղարկեաց զիս երթալ ՚ի Բերկրի ՚ի պէտս
 այս ինչ իրաց : Եւ նորա ուրախացեալ օրհ-
 նեցին զայրն և զճանապարհն նորին :

Եւ յարուցեալ հայրն տէր Յուսիկ գնաց
 ՚ի Բերկրի , և ել ՚ի վանա Արգելան , և ետես
 զտղայն . և խնդու թեամբ լցեալ ասաց՝ սրդե-
 եակ զինչ գործեցեր ընդ մեզ , զի մայրն քո
 և ես տառապեալ լալոտ աչօք՝ և որոնեալ
 խնդրեցաք զքեզ ՚ի Վան և Յոստան և ՚ի գիւ-
 ղն ամենայն : Եւ ասպա ասաց թէ մայրն քո
 հաց հասոյց . և ես ելեալ շրջեցայ ընդ գիւղն
 ամենայն , և ոչ գտի զքեզ :

Եւ ասաց Ստեփաննոս՝ թէ ուստի՞ արար
 մայրն իմ զհացն : Ատէ երեցն , յալիւրէն զոր
 դու բերիր ՚ի Չաղացէն : Ատէ Ստեփաննոս՝
 թէ այն ալիւրն էրբ բերի : Եւ հայրն ասէր ,
 սրդեակ՝ ցորեան տարար ՚ի Չաղացն՝ և ալիւր
 բերիր , զիարդ ոչ գիտես : Եւ ասպա հաւատար
 մացաւ բանն ՚ի սիրտն Ստեփաննոսի , և ասէ

ցհայրն՝ տէր յորժամ հասի ես ՚ի ջաղացն ,
 տեսի անդ բազում աղքատք՝ որք հայցելին
 յինէն ողորմութիւն . և ես ետու նոցա կ՛ուց
 կ՛ուց զցորեանն ամենայն , և մնացին խորդքն
 դատարի : Ապա հնարս իմացայ , և լցի զնոսա
 մանր աւազով և գերմակ մոխրով , և բարձ
 եալ ՚ի վերայ իշոյն բերեալ ՚ի գլուղն՝ վարեցի
 զգրասան բեռամբ ՚ի բակն մեր , և ես փախ
 եայ և եկի աստ զի վախեցայ ՚ի քէն և ՚ի մօրէն
 իմմէ , թէ ծեծէք զիս , և կամ տրանջէք զինէն :

Յայնժամ երէցն Յուսիկ անկաւ յերկիր՝
 և արսատուօք գոհանայր զաստուծոյ . և ապա
 ուրախութեամբ լցեալ ասաց , օրհնեալ է անձ
 որդեակ որ ՚ի ձեռն քո արար զայդ սքանչե
 լիս : Եւ արդ՝ արի՛ որդեակ զի երթիցուք ՚ի
 առնա մեր առ մայրն քո , զի և նա յոյժ տաղ
 նապի վանն քո , և ՚ի տեսանելն զքեզ՝ ուրա
 խացի ՚ի վերայ քո : Ատէ Ստեփաննոս՝ մի
 արսացէ աստուած զի ես ՚ի յայտմ վանացս ե
 լանեմ . աստ կեցայց որքան եմ կենդանի , և
 աստ մեռայց և թաղեցայց :

Եւ ՚ի շատ ողորելն և ՚ի ստիպելն հայրն
 զորդին՝ թէ եկ երթիցուք ՚ի առնա մեր ,
 եկին ժողովեցան միաբանքն ուխտին և ասեն
 ցնա՛ որդի երթ զնա ընդ հօրն քում , և տես

զմայրն քո, և յեա աւուրց ինչ դարձեալ եկ
ասա ՚ի վանս առ մեզ: Եւ նա ոչ լուա
նոցա, և ոչ հաւանեցաւ զնալ ընդ հօրն իւ
րում: Եւ իբրև ոչ կարացին հաւանեցուցա
նել զտղայն, սպա ասեն միաբանքն ուխտին
ցհայր մանկանն, տէր Յուսիկ՝ արի՛ դու և
զնա՛ ՚ի սուն քո՝ և առեալ զմայր տղայիդ
բեր աստ, զի և նա տեսցէ զտղայն իւր:

Եւ այնպէս մնաց Ստեփաննոս ՚ի նոյն վանքն
Արդեւան. և վարժեալ աստուածային գրոց
գիտութեամբ՝ եղև արեղայ: Եւ հայրն ա
սացեալ էր նմա զգերիլն մօրն և զազասիլն,
և զննդիրն տիկնոջն: Եւ նա յառաջին սյա
տարագին սկսաւ յիշել զտիկինն Բիրի, յայն
ժամ տեսիլ ահեղ և զարմանալի երևեցաւ
նմա. քանզի տիշութիւն կալաւ զնա, և տե
սանէր զինքն յեզր արեան ծովու միոյ, և կինն
այն Բիրի ՚ի մէջ արեան ծովու: Եւ որքան
ինքն զաղօթս սրբոյ պատարագին ասէր, կինն
այն ՚ի դուրս գայր յարեան ծովէն. և ելեալ
արտաքս՝ եղաւ ՚ի ցամայն անաղա և մաքուր.
և երկու պատարագի չափ յամեցաւ, և սպա
աւարտեաց զպատարագն: Եւ ՚ի հարցանել
ծերօցն զպատճառ յամենալոյն՝ ստաց նա բզ
տեսիլն զոր ետես, և որք լուանն՝ ուրախաց.

եալ փառս ետուն աստուծոյ:

Եւ ՚ի վաղիւն հարկիւ աղաչեցին զնա ստէպ՝
 և հայցէին ՚ի նմանէ պատարագ մատուցա-
 նել, և նա ոչ էառ յանձն. և նոյն միով պա-
 տարագաւն եկաց զամենայն ժամանակս կե-
 նաց իւրոց, ասելով թէ արեան ծովուն ոչ
 եմ կարող ընդ դէմ կալ: Եւ կացեալ ՚ի նոյն
 վանս Սրդեւան, և անդ վարժեալ եղև վար-
 դասիս ճշմարտութեանն:

Եւ զկնի մնալոյն անդ ՚ի բազում աւուրս
 բարի և առաքինասէր վարուք ՚ի հաճոյս կա-
 մացն աստուծոյ, ելեալ անտի վանս վրդովմանց
 ժամանակաց յասպատակմանէ Հենից այլազ-
 գաց՝ զնաց ՚ի սուրբ լեառն որ կոչի Խաչ
 գլուխ: Ուր սուրբ առաքեալն Հայոց Թա-
 դէոս՝ և յես նորա սուրբն Գրիգոր լուսա-
 ւորիչն մեր Խաչ էին գրոշմեալ մատամբքն
 իւրեանց ՚ի գլուխ լերինն ՚ի վերայ կարծր
 միմին՝ յանապատն սրբոյն Իսահակայ Պարթևի
 Հայոց հայրապետին, և բազում ճգնաւորք և
 խտակրօն միանձունք բնակէին անդ: Որոց էր
 առաջնորդ սուրբ վարդասպետն Գրիգոր վկայա-
 սէրն՝ հրեղէն լեզուն, որ էր այր կորովամիտ
 և բանիբուն, վարժեալ ՚ի գիրս աստուածային
 հին և նոր կտակարանացն:

Եւ գնացեալ 'ի յանապատն սրբոյն Իսա-
 հակայ՝ սուրբ վարդապետն Ստեփաննոս, ան-
 տանելի և խստակրօն ճգնութեամբ կատարէր
 անդ զաստուածահաճոյ վարս իւր: Եւ քանզի
 ոչ թաքչի քաղաք որ 'ի վերայ լերինն կայցէ .
 և ոչ լուցանեն ճրագ և դենն ընդ գրուա-
 նաւ, այլ 'ի վերայ աշտանակի. զի ամենեքեան
 որ 'ի տան աշխարհիս իցեն, զլոյսն տեսցեն:
 Վասն որոյ ելանէր համբաւ ճգնութեան վա-
 րուց նորա ընդ ամենայն շրջակայ գաւառն և
 յամենայն հեռաւոր տեղիս. և գային առ նա
 բազում դիւահարք և աստաժէտք, և պէս
 պէս ցաւագարք, և աղօթիւք սուրբ վարդա-
 պետին՝ ամենեքեան ըստ հաւատոց իւրեանց
 յանուն քրիստոսի նյ գտանելին զբժշկութիւն
 և զառողջութիւն հոգւոց և մարմնոց. և ու-
 րախութեամբ դառնային 'ի տեղիս իւրեանց՝
 փառաւորելով զքրիստոս:

Եւ այնքան տարածեցաւ համբաւ սքան-
 ճելեաց նորա ընդ ամենայն երկիր, մինչ զի
 այլազգիքն և ս ամենեքեան լուեալ զարմա-
 նային: Ալ ոմանք 'ի նոցանէ հայհոյելին զնա .
 սուտ և խաբեբայ կարծելին զնա՝ ասելով թէ
 այսպիսի հրաշագործութիւն միայն անսուծոյ
 է գործ, և ոչ հողեղէն մարդոյ:

Եւ մի ոմն ՚ի յանհաւատից՝ անօրէն չարագործ և ժանտաբարոյ՝ որոյ անուէն էր Իւսիւֆ , ՚ի բերդէն Ամկոյ , արուեստիւ մտագործ , ըստ չար բարուց իւրոց կամեցաւ նենգութեամբ փորձել զսուրբ վարդապետն , և զամենայն հրաշագործութիւնս և զբարի համբաւն ստել և քամահել :

Եւ ելեալ գնաց ՚ի վանքն Երեմնայ՝ յանապատն սրբոյն Իսահակայ , զինքն քրիստոնեայ ասելով , զի լաւ գիտէր զԵզու հայոց . և ասէր ՚ի մտի իւրում՝ Թէ հոգևոր բժշկութիւն և օգտութիւն ոչ կարեմ իմանալ և տեսանել , այլ կամիմ մարմնական ինչ կերպիւ փորձել զքանչելեաց համբաւ քրիստոնէից :

Եւ եդ ՚ի մտի իւրում զկոճն՝ յորոյ վերայ կոտորէր զմիան ՚ի կրպակին , և ասէր ընդ միտս եթէ ՚ի չոր փայաս այս երևեսցի նշան ինչ , ապա հաւատամ թէ ճշմարիտ է հաւատ քրիստոնէից՝ և համբաւ սքանչելեացն քի և սիրողաց իւրոց , և զայն կոճ անուանեաց իւր հայր :

Եւ մտեալ առ սուրբ վարդապետն Ստեփաննոս իբրև զքրիստոնեայ՝ երկրպագութի մատուցանէր , և հայցէր բաժին աղօթից նր . և տայր մարմնական ինչ սրբևս եկեղեցւոյն և վարդապետին , և քրճնելով աղաչէր , և կեղ

ծաւորութեամբ ասէր, աղաչեմ՝ զքեզ՝ յիշել
զհայրն իմ՝ յարժանաւոր աղօթս քո՝ ի ժամ
սուրբ պատարագին։

Եւ սուրբ վարդապետն ասէ ցնա, զի՛նչ է
անուն հօր քոյ . և նա ասէ՝ կոճիկ է անուն
հօր իմոյ՝ ասէր հոգևոր։ Եւ ՚ի գիշերին յայն-
միկ՝ որ էր կիրակի և յարութեան տօն տե-
րունի, սուրբ վարդապետն Ստեփաննոս յա-
ռանձնական աղօթս իւր՝ զոր ՚ի գիշերի մա-
տուցանէր, արտասուահառաչ պաղատանօք
հայցէր յայ՝ առնել ողորմութիւն կոճիկն։

Եւ ՚ի վաղիւն ելեալ մտազործն ՚ի վանացն՝
համբուրեաց զվարդապետն և գնաց ՚ի տուն
իւր։ Եւ իբրև եհաս մերձ ՚ի կրպակն՝ էառ
զհոս անուշութն . և բացեալ զգուռն կրպա-
կին՝ ետես զկոճն զի կանաչացեալ էր ազգի
ազգի տերևով, և ուղեշս արձակեալ՝ զոր ոչ
էր տեսեալ ակն մարդոյ։ Եւ ապա յոգւոց
հանեալ և արտասուահոս ողբովք երանի աայր
բրիատնէիցն և իւրեանց հաւատոցն։ Եւ ըն-
թացեալ ՚ի տունն առ ընտանիսն և առ ամ
բնակիչսն՝ պատմեաց զվեճ և զարմանալի հը-
րաշն . որք եկեալ տեսին զքանչելիան, և հի-
ացեալ փառս ետուն աստուծոյ, և երկբայե-
ցան ՚ի վերայ հաւատոցն իւրեանց։

Եւ ապա մնագործն Իւսիւֆ առեալ զկոճիկն այնպիսի կանաչացեալ շքեղութեամբ՝ եղի վերայ գլխոյ իւրոյ . և ամենայն ընտանեօքն և ազգականօքն գնացին առ սուրբ վարդապետն Ստեփաննոս ՚ի վանքն Երերնայ . և անկան առ ոտս նորա , և հայցէին զներողութիւն և զթողութիւն յանցանաց . և ասէր՝ հայր սուրբ՝ ես խաբէութեամբ փորձեցի զքեզ . և ապա խնդրեաց զմկրտութիւն :

Եւ սուրբ վարդապետն մկրտեաց զնա նամ ընտանեօքն և ազգականօքն՝ յաղբիւր անապատին սրբոյն Սահակայ . զոր ակներև անսին ամենեքեան լոյս սաստիկ իջեալ յերկնից ՚ի յամ սուրբ մկրտութեան վկայ սքանչելեացն աստուծոյ . և եղև ուրախութիւն և ցնծութիւն մեծ ամենայն քրիստոնէից :

Եւ ապա սուրբ վարդապետն Ստեփաննոս եմուտ ՚ի տաճար սրբոյն Սահակայ , և արտասուալից սրտատանօք խնդրեաց յաստուծոյ , զի այնու կանաչացեալ կոճիկն՝ բազում ցաւոց անողջութիւն եղիցի : Եւ զկնի աղօթիցն՝ ետես ՚ի անտիւեան սուրբ վարդապետն , զի ձեզունք տաճարին բացան . և յերկնից սաստիկ լոյս փայլատակեալ՝ եմուտ ՚ի տաճարն . և ընդլուսոյն բազմութիւնք զօրաց հրեշտակաց՝ և ՚ի

միջի նոցին ահեղակերպ և զուարթատեսիլ
երիտասարդ մի՛ նստեալ ՚ի վերայ չորեքկերպ
եան աթոռոյ . զոր երեքսրբեան քաղցրաձայն
բարբառով բերեալ՝ եղին ՚ի վերայ սրբոյ սե-
ղանոյն : Եւ նա ինքն քրիստոս ձայնեալ առ նք
վարդապետն Ստեփաննոս՝ և քաղցր բարբա-
ռով ասաց , կատարեցան ինդրուածքքո՛ զոր
հայցեցերդ և զոր հայցեսդ , ո՛վ սիրելի իմ . և
ապա ամփոփեցաւ տեսիլն :

Եւ յայնմ օրէ մինչև ցայսօր և առ յապայ՝
հաւատացեալք և անհաւատք , որք ՚ի հեռաւո-
րաց և ՚ի մերձաւորաց դիմեալ գան հաւատով
և յուսով յուխան ՚ի վանքն սրբոյն Սահակայ ,
առնուն զկատարեալ առողջութիւն հոգւոց
և մարմնոց , և զփարատումն ամենայն ցաւոց՝
չնորհօքն քրիստոսի և աղօթիւք տէր Յուսկայ
որդւոյն Ստեփաննոս վարդապետին :

Եւ յաւորս աղուհայիցն՝ զկնի տօնի սրբոյ
Լուսաւորչին՝ ՚ի կիրակէի առաւօտուն զկնի
գիշերային ժամուն՝ սուրբ վարդապետն Ստե-
փաննոս դնաց առանձին յարևելեան կողմն
սաճարին . և ըստ իւրում սովորութեանն ՚ի
ծունկս անկեալ՝ արաստուաբուղիս աչօք աղօ-
թէր առաստուած տարածմամբ ձեռաց մինչև
ցերրորդ ժամ աւուրն : Եւ անկաւ զնովաւ

Թմբուլթիւն . և ետես 'ի անսլեան գրիտառո
մեծաւ փառօք իջեալ 'ի վերայ բարձր գղեկին
Ամկոյ բերդի եկեղեցւոյն , զոր յառաջագոյն
շինեալ էր սուրբ առաքեալն Թադէոս . և ե-
կաց մնաց անդ իբրև ժամ մի 'ի անսուլթիւն
մխիթարուլթեան սուրբ վարդապետին , և
ապա վերացաւ յերկինս :

Եւ յետ անցանելոյ ամաց երկոտասանից՝
յամսեան Մայիսի տասն և հինգ՝ յաւուր Համ-
բարձման փրկչին մերոյ զկնի սրբոյ պատարա-
գին՝ ելեալ սուրբ վարդապետն Ստեփաննոս
և գնաց 'ի լեառն Խաչ գլուխ , ուր սուրբ
առաքեալն Թադէոս և յետ նորա Իբն Գրիգոր
Խաչ գրոշմեալ օծեցին , զոր յառաջագոյն յի-
շեցաք : Եւ զի ազդմամբ սուրբ հոգւոյն՝ յա-
ռաջագոյն գլխաց զվաստանն իւր , և անդ 'ի
լերինն առաջի սուրբ Խաչացն զծունկան 'ի
վերայ ասպառած վիմի միոյ եդեալ՝ բազկա-
տարած մաղթանօք և յորդահոս արտասուօք
հայցէր յայ , զի առաքեսցէ նմա զհրեշտակ
խաղաղութեան՝ որ եկեալ քաղցրութեամբ
աւանդեսցէ զհոգի իւր , և անխուով խաղաղու-
թեամբ անցուսցէ ընդ դասս օդային այսոցն
չարութեան՝ որք են 'ի ներքոյ երկնից :

Նաև խնդրէր զպէս պէս հայցուածս վասն

ամենեցուն . աշխարհի խաղաղութիւն , քրիստոսնէից անդորրութիւն , եկեղեցեաց հաստատութիւն , հայրապետաց ուղղափառութիւն , վարդապետաց անձանձիր քարոզութիւն , քահանայից սրբութիւն , կրօնաւորաց արիութիւն , այդեստանեաց պաղաքերութիւն , պարտիզաց առաւելութիւն , խաշանց և անասնոց անասալ ծննդականութիւն , տանց շինութիւն , արանց խոհեմութիւն , կանանց պարկեշտութիւն , երկտասարդաց սղջասհութիւն , կուսից զգաստութիւն , սղայոց պահպանութիւն , բարեաց լիութիւն , աղբերաց յոլովութիւն , ծովու խաղաղութիւն , ամպոց քաղցրութիւն , անձրեաց յորդութիւն , գետոց հանդարտութիւն , թագաւորաց հաշտութիւն , բռնաւորաց խաղաղութիւն , սորնոց և ամենայն մնասակար զեռնոց և թիւնաբեր ճճեաց վերացումն , հիւանդաց առողջութիւն , տկարաց զօրութիւն , գլորելոց կանգնումն , նեղելոց անդորրութիւն , և ամ միրաւորելոց փարատումն և առողջութիւն , մեղաւորաց դարձ և ապաշխարութիւն , ննջեցելոց հանգիստ և ողորմութիւն և երկնից արքայուհի

Եւ ապա յետ աղօթիցն եղև ՚ի զարմացման և ետես ՚ի վերայ ծովուն յարեմսեան ՚ի հիւսիսոյ կողմանէ ամպ լուսափայլ և ՚ի վերայ

ամայոյն սիրամայր սբ նծածինն, որ ունէր ՚ի
 գիրկն իւր զորդին միածին լուսափայլ դիմօք .
 և երկու հրեշտակք եղեալ պսակ լուսածաճանչ
 և աստեղափայլ ՚ի վերայ գլխոյ սբ նծածնին :

Եւ ձայն եղև ՚ի լուսափայլ մանկանէն առ
 սուրբ վարդապետն՝ որ ասէր, կատարեցան
 նամ խնդրուածք քո, զորս յառաջագոյն խնդրե-
 ցեր . և զոր այժմ խնդրես՝ որք հաւատով ա-
 դաչեն զիս ապաւինելով ՚ի բարեխօսութիւն
 քո՝ ես կատարեցից զնամ խնդիրս նց . և դու եկ
 և վայելեա՛ զանսպառ ուրախութիւն, զոր պատ-
 րաստեցեր դու քեզ քոյին անտանն լի ճգնութիւն :

Եւ յետ աւետաւոր քաղցր բարբառոյն
 տեսիլն վերացաւ . և ինքն մեծաւ գոհութիւն
 փառաւորելով զբրիստոս էջ ՚ի լեռնէն՝ և ե-
 մուտ ՚ի տաճարն սուրբ . և անդ գոհացողական
 և սրտահառաչ պաղատանս վերառաքէր առ
 ամենասուրբ երրորդութիւնն, միջնորդ և բա-
 րեխօս ունելով զերանուհի կոյսն Մարիամ :
 Եւ յետ Համբարձմանն՝ ՚ի նոյն կիրակէին
 հրամայեաց միում աշակերտացն իւրոց՝ որ էր
 յոյժ խստակրօն և ճգնազգեաց արեղայ, զի
 հսկմամբ մատուցանիցէ զսուրբ պատարագն :
 Եւ ինքն հաղորդեցաւ ՚ի կենդանարար սուրբ
 մարմնայ և յարե՛նէ որդւոյն նոյն : Եւ անկաւ ՚ի

մահի՞նս յաւուր երկու շաբթի . և պայծառացան
 երեսք նորա ուն անուանակցին իւրոյ Ստեփան
 նոսի նախալկային . և բազում խրատս հոգե-
 շահս՝ և բանս մխիթարականս խօսէր առ իմ
 եղբարսն , որք ՚ի կարգաւորաց և յաշխարհա-
 կանաց և յիմ գաւառաց գային , և ընդունէին
 ՚ի նմանէ զօրհնութի՛ն և զառողջուի պէս պէս
 ցաւոց իւրեանց՝ և ուրախութիւն դառնային :

Եւ հասեալ ՚ի շաբաթ օր կիրակամաի ե-
 րեկոյին՝ ՚ի մեծի հրաշափառ տօնի Գալստեան
 Հոգւոյն սքչ՝ հրամայեաց եղբարցն բառնալ
 զինքն և մուծանել յեկեղեցին ՚ի տաճար սքչն
 Սահակայ : Եւ սրատուիրեաց պաշտօնէիցն ամե-
 նեցուն՝ զի յերեկորեայ մինչև ցառաւօսն զգիշե-
 րապաշտօն կարգ ժամուցն հսկամաբ կտրեսցեն :

Եւ յորժամ հասին յիւղաբերից աւետա-
 րան՝ մտին ՚ի տաճար քահանայքն , և սարկա-
 ւազունքն , զի զգեցցեն հանդերձս՝ և ընթեռ-
 նուցուն զիւղաբերից սք աւետարանն , տեսին
 զսուրբ վարդապետն Ստեփաննոս ՚ի ծունկս
 անկեալ՝ և զբազուկս յերկինս տարածեալ , և
 այնպէս աւանդեալ զհոգին իւր առ իմ . և
 նորա ոչ ումեք յայտնեցին զայն՝ մինչև ցար-
 ձակել ժամուն : Եւ յետ արձակման պատա-
 րագին՝ ազգ արարին իմ եղբարցն , որք ձայն

բարձեալ յոյժ տղբալի սգով և մորմնքմանք
արարին կոծ մեծ 'ի վերայ նորա:

Եւ ապա պատեցին զնա մաքուր կտաւօք
ըստ օրինի, բայց զմազեղէնն՝ որ ոչ էր փոխ-
եալ երբէք, ոչ հանին յանձնէն ըստ հրամանի
սրբոյ: Եւ յաւուր երկուշաբթի զկնի սրբոյ
պատարագին զարդարեցին փոքրիկ սայլմի, և
իջուցեալ զսուրբ մաքուր մարմինն եղին 'ի
վերայ սայլին, զի սարցեն 'ի վանքն Արդեւան՝
և անդ ամփոփեցեն, որայէս և հրամայեալ էր
նոցա յառաջագոյն: Եւ իսկոյն տեսին, զի բա-
զումք աստի և անտի՝ արք և կանայք՝ հիւանդք
և ախտաժէտք՝ եկեալ անկան առաջի սայլին
ուր էր: եղեալ նք մարմինն. և բժշկեցան 'ի
ցաւոցն, և առողջացան 'ի հիւանդուեցիւրննց:

Եւ ապա լծեալ զուծս եզանց՝ վառեալ
լապտերօք և անուշահոտ խնկօք տարեալ 'ի
վանքն Արդեւան, և անդ ժողովեալ բազում
եպիսկոպոսոք և վարդապետք և անթիւ քա-
հանայք և ժողովուրդք, մեծաւ պատուով
եղին 'ի դիրս հանգստեան:

Եւ շինեցին 'ի վերայ նք մարմնոյն մասուռ
վայելուչ, որ մինչև ցայսօր և առ յապայս առ-
նէ բազում ցաւոց՝ և ազգի ազգի ախտաժե-
տաց բժշկու թիս. և մանաւանդ 'ի կատարեալ

քանց և գայլոց և յամ չար գազանաց խածա-
 տելոց . որք ՚ի հեռաւորաց և ՚ի մերձաւորաց՝
 հաւատացեալք և այլազգիք՝ հաւատով և յու-
 սով դիմեալ գան յուխա ՚ի սուրբ գերեզման
 և յաղօթատեղ սքն՝ և առնուն զկատարեալ
 բժշկութիւն , աղօթիւք և բարեխօսութեամբ Ստե-
 փաննոսի սուրբ վարդապետին՝ տէր Յուսկայ
 որդւոյն : Եւ արդ՝ զսի զօրութի և սքանչեւա-
 գործութի շնորհեն ամի՝ այս երկու սք մենաս-
 տանքս , այսինքն՝ անասպան սքն Իսահակայ , և
 վանքն Արգեւանից՝ ՚ի փառս ամենազօր տրուե :

Եւ զի սք վարդապետս այս Ստեփաննոս՝
 ՚ի մանկութե իւրմէ էր յոյժ պահեցօղ , մինչ
 զի յաւուրս քառասնորդաց աղուհացից պա-
 հոց , ՚ի տասներկու օրն միանգամ ճաշակէր
 հաց , և զայն ևս ոչ յագ , այլ հոգեպահ մի . և
 յաւուրս չորեքշաբաթի և ուրբաթի՝ և զամ
 տէրունի շաբաթսն անսուաղ անցուցանէր :
 Եւ էր յոյժ ժուժկալ , աղօթատէր և արսաս-
 ուեղ , լռակաց և խորհրդական , անձանձիր ու-
 սուցանօղ , և յանդիմանիչ ստահակաց , քաղց-
 րախօս՝ գթած՝ և առտաձեռն , երկայնամիտ և
 ողորմած , լի ամ շնորհօքն այ : Որոյ յիշատակն
 օրհնութե եղիցի , և աղօթիւք նորին տէր յի-
 քս ամն ամի մեզ ողորմեսցի , ամէն :



Ա

Ամենասուրբ երրորդութիւն փրկէ զքեզ
 յամ փորձութիւն. փարստեցաւ ցաւ սրախի քո .
 մեծ ուրախութիւն և շնորհ գտանես յայ, և
 դու... բարձրանաս մեծ պատուով: Այլ յոր-
 ժամ ընծայեցար ՚ի ճնողաց քոց՝ մեծ հիւան-
 դութի կրեցեր, և հալածական եղեր յազգա-
 կանաց քոց և ՚ի բարեկամաց: Բայց պատրաստ
 կացո՛ զանձն քո ՚ի գազանաց և յանօրինաց . զի
 փոթորիկ կայ առաջի քո, և չարախօսքն քո
 շատ են . գնա՛ աղօթք արա՛ առ անձ՝ որ փրկիս
 ՚ի նոցանէ . և զինչ բան զոր խորհեալ ես՝ կա-
 տարի ՚ի բարին:

Բ

Բանն անսկիզբն՝ որ ՚ի հօրէ առաքե-
 ցաւ, նա է յոյս նեղելոց, և փրկէ զքեզ յամ
 փորձութիւն . ՚ի բաց մերժեցաւ նեղութի սրախի
 քո . և կատարեցաւ մի՛ ճանկն քո ՚ի բարին . զինչ
 բան սկսեալ ես՝ ան յաջողէ քեզ և առաջ
 նորդէ: Արդ արա՛ զխորհուրդ քո . թէ վա-
 ճառ ունիս՝ շահիս, թէ ՚ի ճանապարհ երթաս
 բարեաւ գաս, թէ ՚ի հեռաւոր տեղիս մարդ
 ունիս՝ բարով տեսանես, թէ հիւանդ ունիս՝

չուտով առողջանայ, զինչ կորուսեալ ես՝ գըտանես:

Գ

Գնա՛ մի ինչ հարցանէր՝ զի բազում ներդուծի ունիս. և արամուծի կայ առաջի քո. և վիշտք մահու արամեցուցին զքեզ. և եհաս ՚ի վերայ քո ներդուծիւն մեծ, ոչ գտաւ քեզ բարեկամ ոք և օգնական. ՚ի հայրենական ժառանգութէն զրկեցար, և այժմ տարակուսեալ ես վասն կենացդ: Արդ աղաչեա՛ զսօճ և ուխտեա՛ նմա, որ կործանէ զթշնամին քո, և հանէ զքեզ ՚ի ներդուծենէ ՚ի հանգիստ, և զկամքն սրտի քո ՚ի բարին կատարէ:

Դ

Դու սով սիրելի՛ վասն այդ բանիդ հարցանես և հոգաս հանապազ. բայց չա՛մ փրկէ յամ՝ ներդուծէ զանձն քո. և յանկարծակի հարտանաս յայնպիսի տեղեաց՝ ուստի ակն ոչ ունիս. և բանայ քեզ չա՛մ դուռն բարի: Ի ճանապարհ երթաս, բարեաւ յեսս դառնաս, և թշնամին քո յամօթ լինի. եթէ հեռաւոր ունիս՝ տեսանես. վիշտք մահու արամեցուցին զքեզ՝ բայց մոռանաս զայն. փոխիլ կամիս ՚ի տեղովէ ՚ի տեղի, սակաւ մի համբերեա՛ և ապա

փոխեանց, և բարի դասնես. մեծանաս և ուրախ լինիս. յուսմ առ անձ և ոչ երբեք հասանի քեզ յնաս:

Ե

Երանի է քեզ սով սիրելի՛ զի ան է քեզ օգնական. բայց դու շատ ես աշխատեալ, և ոչ գտեր հանգստութի, և ոչ օգնական քեզ՝ ոչ եղբայր և ոչ սիրելի: Որպէս ՚ի ծովու ծփիս յալեաց, և ոչ դասնես հանգիստ. սով սիրելի սուր փառսն՝ զի ուրախութի հասանի քեզ ՚ի նմանէ և առողջութի. թէ փոխիս ՚ի տեղեացդ՝ բարոյ հանդիպիս, և ան դժուարութի ՚ի բարին դառնայ. ՚ի յաւագաց պատրաստ կաց. որոգայթ երևի քեզ, ՚ի յընկերաց և ՚ի մասնողաց պատրաստ կաց:

Զ

Զարմացեալ եմ սով այր՝ զի երկնեալ ես և ՚ի թշնամեաց սասանիս, և խորհիս վասն մեծանալոյ, և ոչ խորհիս առնել զաղաչանսն. վասն այնորիկ եկն ՚ի վերայ քո նեղութի մեծ. և թշնամին քո զօրացաւ ՚ի վերայ քո: Գնա՛ աղաչեմ զանձ և ուխտ կատարեմ նմա՛ զի հանցէ զքեզ յամ նեղութի, և աղոթիս յայն՝ զայթի, վաճառ ունիս՝ սիրով շահիս:

Է

Ո՛վ այր՝ առնուս զոր խորհիս և ուրախ լինիս և ազատիս ՚ի չարէ . գնա՛ գոհացիր զայ՛ , և անձ հանէ զքեզ յամ՛ նեղութի՛ և սրողայթի . զի դու բարի կամիս՝ և անձ բարի առաջնորդէ քեզ . զինչ բան զոր սկսեալես , յաջողէ քեզ անձ . զոր ցանկաս՝ տեսանես . զոր կորուսեալես՝ գտանես . թէ հիւանդ ունիս՝ ողջանայ , թէ տուն շինես կամ հողագործութիւն առնես՝ բարի գայ և արդիւնաւոր լինի . ՚ի կախարդաց սխառանսս կաց :

Ը

Ո՛վ մարդ՝ ժամանակ դժուարութե՛ն եկն ՚ի վերայ քո . և արտմեցար յազգականաց քոց և ՚ի բարեկամաց . և ազգն քո նենգաւոր եղեն քեզ . և եղև աւերումն սան քո . և շրջեցար դու ՚ի վերայ երկրի : Այլ գոհացիր զայ՛ զի գալոցէ քեզ ուրախութի մեծ . և զով խնդրես՝ տեսանես . թէ ՚ի ճանապարհ երթաս՝ բարով յեսս դառնաս . զինչ բան առնես՝ յաջողէ քեզ անձ . զուխտն զոր խոստացեալես անձ՝ կատարես . թէ վաճառ առնես՝ շահիս :

Թ

Ո՛չ յառաջացար ՚ի բարին . զոր ունէիր՝ զլիցար յայնմանէ , ոչ կայր քեզ օգնական ,

ոչ եղբայր և ոչ սիրելի: Բայց դու անխուրդ
 ես, և աղօթից ծոյլ. վասն այնորիկ եկն ՚ի վերայ
 քո նեղութի, և դու շրջեցար յօտար երկիր՝
 բայց ոչ մնասեցար: Ապա թէ ոչ դառնաս ՚ի
 կամս ւոյ, գայ ՚ի վերայ քո բարկութի ւոյ, և
 լինի յափշտակութի ընչից քոց և աւերումն տան
 քո. և գործք ձեռաց քոց՝ ոչ յաջողի. և զով
 խնդրես՝ ոչ տեսանես. զոր կորուսեալ ես՝ ոչ
 գտանես: Այլ թէ դառնաս ՚ի կամս ւոյ, նա
 փակեալ դուռ մի բանայ քեզ և յաւելու բա-
 րիս: Գնա՛ աղօթք արա՛ առ ւած, և ուխտ կա-
 տարեա՛. որ ազատիս ՚ի տանջանացդ:

Ժ

Զոր ինչ ՚ի ձեռին քում բան ունիս՝ յա-
 ջողէ քեզ ւած. և արա՛ զխորհուրդ սրաի քո: Ա-
 լեաիս տուր անձին քո՝ զի ուրախանայ ՚ի
 գործդ զոր ՚ի ձեռին ունիս. մեծ օգուտ և
 շահ գտցես անաի, և բազումք կերիցեն զվաս-
 տակս ձեռաց քոց: Այլ հիւանդացար շատ՝
 որ ՚ի մահ մերձ եղեր, և ւած եհան զքեզ ՚ի
 նեղութէ և ասրեցոյց: Ի հեռաւոր տեղեաց
 ուսաի ակն ոչ ունիս՝ բարի գալոց է քեզ. և
 արամութի քո՝ յուրախութի փոխարկի. զի դու
 բարի կամիս՝ և ւած բարի առաջնորդէ քեզ.
 և զաւակ մի շնորհաւոր լինի քեզ: Գնա՛ աղաչեա՛

զնձ և ուխտ կատարեա՛ն նմա . զի ողորմութի՛ն
 նորա եկեացէ՛ ՚ի վերայ քո . թէ ՚ի ճանապարհ
 երթաս՝ բարով գաս՝ և բարւոյ հասանիր :

Ի

Ո՛վ այր՝ մի՛ ապաւինիր ՚ի խորհուրդ քո և
 մի՛ մոռանար զուխան ւնյ . և տրամութիւն քո՝
 յուրախութի՛ն փոխարկի . ՚ի հեռաւոր տեղեաց՝
 ձայն աւետեաց լսես , կամ հեռաւոր մարդ
 տեսանես . և յնյ առողջութի՛ն գտանես . և դար-
 ման ոսկերաց քոց ոչ պակասի . բայց ճնողաց
 քոց դիմադարձ մի՛ լինիր . և զոր ինչ խնդրես
 յնյ՝ սայ քեզ նձ : Եւ փոխիլ տեղովէ՛ ՚ի տեղի
 բարի լինի քեզ . և յամ՝ դժուարութե՛ ազատիս .
 և զինչ խորհուրդ զոր ունիս և զինչ գործ կա-
 միս առնել՝ գնա՛ արա՛ , շատ շահ և արդիւնս
 առնուս . և վախճան քո ՚ի բարի օր լինի :

Լ

Ո՛վ այր՝ ահա տեսանեմ՝ գքեզ և զխոր-
 հուրդ քո որ նմանիս ալեաց ծովու . որպէս
 ճ՛նձղուկ որ անկաւ ՚ի ձեռս որսողաց , նոյն-
 պէս և դու ՚ի ձեռս բռնաւորաց : Ապա թէ
 ոչ գատնաս ՚ի կամս ւնյ , գայ ՚ի վերայ քո նե-
 ղութի՛ն , և լինի յախշտակութի՛ տան քո և ընչից
 քոց : Եւ դու հալածական լինիս . և վիշաք մա-

հու արամեցուցանեն զքեզ . և յօտար երկիր
վտարիս : Գնա՛ աղաչեա՛ զա՛ծ , և փրկէ՛ զքեզ
յամ՝ որոգայթէ՛ և ՚ի նեղութի՛ն , և բանայ քեզ
դուռն բարուոյ և շահիս . և ինչ գործոյ ձեռն
արկանես , յաջողէ՛ քեզ ա՛ծ :

Խ

Ո՛վ մարդ՝ ողորմութի՛նն այ լինի ընդ քեզ
զամ՝ աւուրս կենաց քոց . բայց ՚ի յօտար աշ-
խարհ վտարեցար . զով խնդրես՝ տեսանես .
զինչ կամիս առնուս . զոր կորուսեալ ես՝ գտա-
նես . զի յայ շատ շնորհ ունիս . և զաւակ մի
շնորհաւոր լինի քեզ : Բայց վիշտք մահու արա-
մեցուցին զքեզ . իսկ բան և խորհուրդ զոր
ունիս՝ գնա արա՛ , շահիս և բարի գտանես :
Եւ ՚ի քո վաստակէն բազումք կերիցեն . և
պարգևս ՚ի յայ առնուս . ՚ի յիշոցաց և ՚ի կա-
սարդաց պատրանսս կաց :

Ծ

Ո՛վ այր դու՛ նման ես գեաոյ որ երթայ
յերկար և ոչ կայ նմա դադարումն : Գու հա-
լածական եղեր և ՚ի հայրենական ժառանգութի
զրկեցար . և ՚ի ծնողաց քոց ոչ խնդացիր . զա-
բախտ ես զի ա՛մ մարդ զրկեալ է զքեզ : Արդ
աղաչեա՛ զա՛ծ և ուխտ կատարեա՛ նմա , որ օգնէ

քեզ և փրկէ յորողայթէ: Դու մի տրումիր զի բանիդ գժուարութիւնն ՚ի լոյս ելանէ . և քեզ ձայն աւետեաց գայ և դու խնդաս և ուրախանաս . յանկարծակի հարստանաս՝ ուստի ակն ոչ ունիս:

Կ

Ո՛վ սիրելի՛ կակղացո՛ զբարբդ քո և պահեա՛ զկամս նայ . և սո՛ւր հաց քաղցելոց և ջուր ծաւաւեաց: Ապա թէ ոչ դառնաս ՚ի կամաց քոց, գայ ՚ի վերայ քո նեղութի մեծ և յափշտակութի ընչից քոց և աւերումն տան քո . և ինչ գործոյ ձեռն արկանես, ոչ յաջողի . և որում ցանկաս՝ ոչ հասանիս . և զոր կորուսեալես՝ ոչ գտանես: Ապա թէ դառնաս ՚ի կամս նայ և զսատուիրանս նորա պահես, ողորմութիւն նայ հասանէ ՚ի վերայ քո . և յաւագաց մեծարիս . և յաւելու փառք քո: Որպէս արեգակն ՚ի վերայ արարածոց՝ այնպէս նայ բարին հասանէ ՚ի վերայ քո, և յաջողէ քեզ զոր ինչ դու կամիս . և տարին բարով գայ քեզ:

Հ

Ո՛վ մարդ՝ աւետիս տամ քեզ . զի դու բարի կամիս և նձ բարի առաջնորդէ քեզ . և աէր փրկէ զքեզ յամ որողայթէ: Լինիս

ցանկալի ամենեցուն և ոչ լինի պակասումն ըն-
 չից քոց . և տայ քեզ անձ փառք և մեծութիւ-
 Գնա՛ աղաչեա՛ զանձ և ուխտ կատարեա՛ նմա
 որ ազատիս ՚ի չարէն . զինչ խորհուրդ որ ու-
 նիս՝ արա՛ և մի երկնչիր . զի որպէս կամիս
 դու , այնպէս կատարի գործք քո :

2

Ո՛վ մարդ՝ ձայն ցնծութե և ուրախութե
 մատուցանեմ քեզ . զի դու սասանեցար յազ-
 գաց և ՚ի բարեկամաց քոց . և ՚ի շատ իրաց
 զրկեցար : Տուն քո հայրենի՝ դարձաւ ՚ի յա-
 ւեր . և դու շրջեցար ՚ի մերայ երկրի . և սուգ
 մահու արամեցոյց զքեզ . այլ այժմ փառք
 տուր այ՝ զի հասեալ է քեզ ուրախութի մեծ .
 բազմանան ինչք քո , ոսկին և արծաթն : Թե
 հեռաւոր ունիս գայ . և զինչ խորհուրդ ու-
 նիս կատարի :

2

Ո՛վ մարդ՝ պարգևեցաւ արձակումն կա-
 պանաց քոց . որպէս մոգքն որ ելին յարևելից
 և եկեալ առ քո՛ գտին զնա և ուրախ եղեն ,
 նոյնպէս և դու ուրախանաս ՚ի գործս քո և ՚ի
 խորհուրդդ զոր խորհիս : Թե ՚ի ճանապարհ
 երթաս՝ բարով յեսս դառնաս և բարի գտա-

Նես: Որպէս մովսէս յաղթեաց փարաւօնի և
 եգիպտացւոցն, նոյնպէս և դու յաղթես թրչ-
 նամեաց քոց. և զինչ խորհեալ ես՝ գնա՛ արա՛,
 ՚ի բարին առաջնորդէ քեզ աէր անձ:

X

Ո՛վ մարդ՝ զոր հարցանես՝ ասեմ՝ քեզ .
 եղեր դու ՚ի մանկութէ՛ քումմէ հալածա-
 կանս. և պանդխտութիւն կրեցեր զնամ աւուրս
 կենաց քոց. և սասանեցար յազգաց և ՚ի յա-
 նօրինաց: Ո՛վ սիրելի մի՛ երկնչիր՝ զի հասեալ
 է քեզ ուրախութիւն և կասարեցաւ մի՛ ճակն
 քո ՚ի բարին. զինչ խնդրես ՚ի յայ՝ տայ քեզ
 անձ. թէ ՚ի ճանապարհ երթաս՝ բարով գաս:

V

Ո՛վ այր՝ նենգաւոր տեսանեմ զքեզ. արդ
 ՚ի չարդ յիմարեալ ես և ընկերի քում՝ չար
 առնես. և ամենեցուն վնաս խորհիս: Ընկեան
 զնենգութի՛ ՚ի մտաց քոց. և ընկերիդ չար մի՛
 խորհիր. որ չանկանիս ՚ի մեծ նեղութի՛, և պա-
 սուհաս գայ ՚ի վերայ քո: Ոչ խնդացիր ՚ի
 ծնողաց և ոչ ՚ի զաւակաց. ինչ գործոյ ձեռն
 արկանես՝ ոչ յաջողի քեզ: Ապա թէ դառնաս
 ՚ի կամս այ՝ և ընկերի քում և նամ մարդոյ նեն-
 գութի՛ ոչ առնես, ծագէ անձ զողորմութիւն

և ք ՚ի վերայ քո և ոչ լինի պակասումն ընչից
քոց . և մեծաւ պատուով վախճանիաւ :

Յ

Ո՛վ մարդ՝ աւետիս տամ քեզ . զի կասա-
րեցաւ . վիճակն քո ՚ի բարին . և դու խորհուրդ
ուենիս ՚ի սիրտդ , և տարակուսիս , մի՛ երկնչիլ՝
գնահ արա . զի խորհուրդ քո ՚ի բարին կասա-
րեցաւ : Որպէս լուսինն որ զխաւար զիշերն
լուսաւորէ՝ այնպէս լուսաւորի խորհուրդ քո
զոր խորհիս . և հասանէ քեզ բարութիւն ՚ի
յայ . և ում՝ ցանկաս հասանիս . և յաւագաց
բարի գտանես . և աւետեաց ձայն լսես և
խնդաս . գնահ աղաչեան զամ որ խորտակէ զքո
թշնամին :

Ն

Ո՛վ մարդ՝ ահա՛ ՚ի նեղութի՛ տեսանեմ
զքեզ . զի մեծամեծ վտանգ կայ առաջի քո ,
և ՚ի նեղութի՛ անկանիաւ : Բազումք խորհին
քեզ չարիք , և դու ոչ իմանաս զկորուստ ան-
ձին քո . և զի ոչ առնես զկամս նայ՝ վասն այնու-
րիկ եկն ՚ի վերայ քոյ նեղութի՛ . զինչ խոր-
հուրդ ուենիս՝ ոչ կասարի . թէ ՚ի ճանապարհ
երթաս՝ ոչ լինի քեզ բարի : Ս. յԼ թէ դառ-
նաս ՚ի կամս նայ և զուխան զոր խոստացեալ

ես՝ կատարես, յաջողու թի՛ գտանես, և յաւելլու փառք քո:

Վ

Շ

Ո՛վ մարդ՝ բազում բարիս տեսանեմ առաջի քո. առնուս պարգևս ՚ի մեծամեծաց. ուրախանաս և բարւոյ հանդիպիս. խնդաս ՚ի զաւակէ և ՚ի կնոջէ քումմէ. և լինիս յիշատակ ծնողաց քոց: Եւ զինչ խնդրես ՚ի յոյ՝ առնուս. զոր կորուսեալես՝ գտանես. թէ հեռաւոր ունիս՝ գայ զոր տեսանես. թէ հիւանդ ունիս՝ ողջանայ. և օր քան զօր լաւ լինի քեզ:

Ո

Ո՛վ մարդ՝ պարտ է քեզ յամ ժամ գոհանալ զոյ, զի թէպէտ տրամեցար, բայց դարձեալ ուրախանաս, և շնորհն ոյ հասանէ ՚ի վերայ քո: Այլ պատրաստ կաց ՚ի չարեաց, և պարգև և շնորհ ՚ի յոյ առնուս. և յորդւոյ խնդաս. և լինիս ցանկալի ամենեցուն. և ոչ լինի պակասումն ընչից քոց: Թէ փոխիս ՚ի տեղոջէ ՚ի տեղի՝ բարւոյ հանդիպիս. ճայն աւետեաց լես. և հեռաւոր մարդ տեսանես. քո մահն ՚ի բարի օր լինի. և երազն որ տեսեր՝ բարի է:

2

Ո՛վ մարդ՝ փառաւորիս յամենեցունց . և
 առնուես բարի իշխանուի, և թշնամին քո յա-
 մօթ լինի . և յօտար երկիր գնաս, և առնուես
 պարգևս . և յամ դժուարութիւն ազատիս . և
 զով խնդրես՝ բարով տեսանես . և ում ցանկ-
 կաս՝ հասանիս: Գնան աղաչեան զամ և ուխտ
 կատարեան նմա, որ ազատիս ՚ի շատ չարէ և ՚ի
 փորձանաց . և բանայ քեզ տրամ դուռն բարի:

9

Պարզ և բարեաց սացէ քեզ ամ . չարն հե-
 աացաւ և բարին մօտեցաւ կամօքն նոյ: Եւ
 դու ես իմաստուն որ խրատ տաս ամցուն .
 բայց պահեան զանձն քո ՚ի չար կամաց . և զոր
 ինչ գործես՝ ՚ի բարին առաջնորդէ քեզ տէր
 ամ: Յամ ապաւինէ որ կործանէ զքո թշնամին .
 և հանէ զքեզ յամ որոգայթէ . և լինի ցանկա-
 լի ամցուն . և ոչ լինի պակասումն ընչից քոց:

2

Ո՛վ մարդ՝ մեծ էիր և խոնարհեցար . ըզ-
 մտաւ ածես և ոչ կարես կալ ՚ի վերայ միոյ
 խորհրդոյ . դու մի տրամիր՝ գալոց է քեզ ու-
 բախութի մեծ՝ ուստի ակն ոչ ունիս . զի դու
 բարի կամիս՝ և ամ բարի առաջնորդէ քեզ

Փոխանակ տրամուծեան՝ ուրախուծի լինի
 քեզ . բարի և շնորհ ՚ի յայ առնուս : Գնա՛
 արա՛ զխորհուրդ քո և մի՛ տարակուսիր . թէ
 վաճառ առնես՝ շահիս . թէ ՚ի ճանապարհ եր-
 թաս՝ բարով գաս . այլ ՚ի վերայ բախտիդ քն-
 նուծի՛ առնես և հարցանես , անճ բանայ քեզ
 զդուռն բարւոյ , և յաւելու փառք քո :

Ռ

Ո՛վ մարդ՝ սասանեցար յազգաց և ՚ի յա-
 նորինաց . հասաւ ՚ի վր՝ քոյ տրամուծի , և եղև
 աւերու մն տան քո ՚ի բարեկամաց քոց . և խոր-
 հուրդ քո հանապազ ՚ի կորուստ ելանէ : Ո՛վ
 այր՝ մի՛ հողար զի շուտ դայ ՚ի վերայ քո բա-
 րին . և սէր անճ հանէ զքեզ ՚ի խաւարէ ՚ի
 լոյս , և քո բաղձանացդ հասանիս :

Ս

Ո՛վ մարդ՝ վասն կենաց քոց ընդէր հար-
 ցանես . զինչ յիմարեալ ես և չար խորհիս . և
 ամենեցուն վնաս առնես . ՚ի սեղոջէ ՚ի սեղի
 փոխի՛ և ուրեք ոչ հաստատիս . զոր կորուս-
 տալ ես ոչ գտանես : Ընկես՝ զնե՛նգուծի ՚ի
 մտաց քոց . ընկերի քում և անճ մարդոյ չար մի՛
 խորհիր . թէ չսես՝ փորձանաց հանդիպիս .
 զնա՛ աղաչես՝ զանճ որ ազատիս ՚ի չարէ :

Վ

Ո՛վ սիրելի՛ տո՛ւր փառս ւոյ . զի գալոց է
 քեզ ուրախութի՛ ուստի ակն ոչ ունիս : Եւ ՚ի
 քո վաստակէն շատ մարդ կերիցէ . և զաւակ
 մի խնդամիտ տեսանես և տայ քեզ ւած առող
 ջութի . պատրաստ կաց ՚ի չարէ որ չանկանիս ՚ի
 փորձութի . և զինչ բան ունիս ՚ի ձեռին՝ ՚ի
 բարին առաջնորդէ քեզ սէր ւած . ՚ի հեռաւոր
 տեղեաց ձայն աւետեաց լսես , կամ հեռաւոր
 մարդ տեսանես . գնա՛ արա զխորհուրդ քո :

Տ

Ո՛վ մարդ՝ ուրախութիւն մատուցանես
 քեզ . զի դու վարանեալ ես և տարակուսեալ .
 զրաբախտ ես , զոր ինչ տաս՝ կովով առնուս .
 ում բարի առնես՝ նա քեզ չար առնէ : Այլ
 աղօթից և աղաչանաց դու մի՛ դադարիր . գա
 լոց է քեզ ուրախութի՛ ուստի ակն ոչ ունիս .
 հեռաւոր ունիս գայ . թէ աղքատ ես՝ հա
 րստանաս . թէ հիւանդ ունիս՝ ողջանայ :

Բ

Ո՛վ մարդ՝ ցնծութի՛ և ուրախութի՛ տամ
 քեզ . զի դու բարի ես և ւած բարի առաջնոր
 դէ քեզ . և ում ցանկաս՝ հասանիս . բայց թր
 նամիքն քո շատ են . այլ դու մի՛ երկնչիր

Նոցանէ՛ զի ան է քեզ օգնական: Պատրաստ
կաց որ չմտանես ՚ի բանդ . իրաւ ի սուգանք
տաս , այլ իրք զոր կորուսեալես՝ գտանես :
Ի ճանապարհ կամիս երթալ , մի երկնչիւր՝ գնա՛ .
ընդ որ երթաս՝ բարով գաս . զինչ բան և
զինչ խորհուրդ զոր ունիս՝ յաջողէ քեզ ան
և ՚ի բարին կատարէ :

Յ

Ո՛վ մարդ՝ բազում բարիս տեսնեմ առա
ջի քո . առնուս պարգևս ՚ի մեծամեծաց . ու
բախանաս և բարւոյ հանդիպիս : Խնդաս ՚ի
զաւակէ և ՚ի կնոջէ քումսէ . և լինիս բարի յի
շատակ ճնողաց քոց . թէ փոխիս ՚ի տեղեացդ՝
ոչ հաստատիս . զի անքեան նենգաւորք են քեզ
Եւ ՚ի մարդոյ բախտ ոչ ունիս , այլ քո բարին
՚ի յայ է . և սայ քեզ ան զիւր ողորմութին
անչափ . և յամ դժուարութենէ ազատիս :

Ի

Ո՛վ մարդ՝ չարն հեռացաւ ՚ի քէն և բա
րին մօտեցաւ . այլ սասանեցար ՚ի յազգաց և
անօրինաց . և ազգն քո նենգաւոր եղեն քեզ
Պատրաստ կաց ՚ի թշնամեաց քոց , որ մտօն
չար խորհին քեզ . և ՚ի յընկերացդ փոթորիկ
կայ սուսջի քո . դատաստանն ունիս կամ ճա
նապարհ կամ վաճառ՝ համբերեալ :

Փ

Անգղամ մարդոյ մի լինիր սիրելի՛ որ յեւ
տոյ չմնասիս . և ՚ի ձեռաց քոց իրք ես կորուս-
եալ, մի տրամիր՝ ՚ի քեզ դառնայս Չինչ խոր-
հուրդ ունիս՝ կատարէ անձ . բայց սակաւ մի
համբերեա՛ . գալոց էր ՚ի վերայ քո տրամուխ
բայց ան խափանեաց . և բազում ուրախութի
կայ առաջի քո : Աման ես արբահամու , որ
անձ զինքն սիրեաց և ՚ի տրամութի ազատեաց .
նոյնպէս և դու ազատիս յամ չարէ :

Բ

Ո՛վ այր՝ տեսանեմ զքեզ զի մարդ մի լի գե-
ուաւ և սրաիւ չար խորհի վասն քո , կամ հոր
մի փորէ քեզ , այլ ոչ կարէ մնաս առնել քեզ :
Գնա՛ ուխտս կատարեա՛ այ՛ որ ՚ի շատ չարէ
փրկեցար . զի հասեալ էր քեզ նեղութի մեծ ,
այլ անձ դարձոյց զչարն ՚ի գլուխ թշնամույն քո :
Աման ես դու խահակայ , որ անձ օգնեաց նմա
և փրկեաց զնա , և բազում մեծուհի և փառաց
հասաւ . նոյնպէս և դու ուրախանաս կամօքն
այ՛ , և հասանիս բազում փառաց և պատուոյ :

Եւ այսոցիկ ամենեցուն դիտողն է անձ մարիտ ,
զի մարդ ոչ է տեսող սրտից և ապագայից , այլ միայն
անձ : Ուստի զոր ինչ ասեն և դրեն իմաստասէրք , թէ աս
կան կարծեօք են : Վասն որոյ նմա միայնոյ այ՛ զխոռ-
դին գաղտնեաց և յայտնողին ծածկու թից՝ փառք ՚ի
յամ արարածոց ՚ի յաւիտեանս յաւիտենից , ամեն :

Խոյ

ՏուԼ

Երկաւոր

Խեցգեւիտ

Առիւծ

Կոյս

Կէտ

Կարիճ

Աղեղնաւոր

Այծեղջիւր

Չրհոս

Չուկն

Հրատ

Արեգակն

Լուսաբեր

Փայլածու

Լուսին

Երկակ

Լուսնթագ

Խոյն:

Ո՛վ մարդ՝ լոյսն անհազիւն փառաց և շառա
 ւիրն աննուագ՝ ծագեսցի ՚ի վերայ քո որպէս
 արեգակն ՚ի վերայ արարածոց . և դու ՚ի բանս
 քո ուրախանաս: Այլ եթէ ուխտեալ ես՝ կա
 տարեա՛ . և տէր լցուցի զինդրուածս քո .
 ապա եթէ երազ տեսեալ և զարհուրեալ ես,
 մի՛ երկնչիր, զի երազն քո ՚ի բարին եղև:

Յուրն:

Ո՛վ մարդ՝ լուսաւորի խորհուրդ սրտիդ .
 յամ՝ ժամ տրտում ես, մի՛ երկնչիր՝ զի շարն
 հեռացաւ ՚ի քէն և բարին մօտեցաւ . և զոր
 ինչ խորհեալ ես՝ շուտով կատարէ քեզ անձ,
 և զիւր ողորմութիւնն տայ քեզ:

Երկաւորն:

Ո՛վ մարդ՝ զոր ինչ խորհեալ ես՝ կատարէ
 աստուծով . զի շատ բարութի կայ յայդ խոր
 հուրդդ . զի դու բարի ես՝ և շարն ոչ մերձե
 նայ քեզ . առ ժամս տրտում ես և ՚ի ցնորի
 կաս, մի՛ ցնորիր՝ զի շատ բարութի կայ առաջի քո:

Խեցգետինն:

Ո՛վ մարդ՝ զոր ինչ խորհեալ ես ՚ի սրտ
 ում փախիր ՚ի նմանէ, որ շինասիս . պատ

բանսս կաց ՚ի չար կամաց և աղաչեա՛ւ նոյ , և
 նա՛մ առաջնորդէ քեզ ՚ի բարին :

Առիւծն :

Ո՛վ մարդ՝ տայ քեզ նա՛մ զիւր ողորմու-
 թիւնն . ցանկու թի՛ սրտի քո կատարի . և ՚ի մօտ
 աւուրս՝ ձայն աւետեաց ըսես և ուրախա-
 նաս . բայց ՚ի կռուոյ պատրանսս կաց . և զոր
 խնդրես՝ տեսանես կամօքն նոյ :

Աղոյսն :

Ո՛վ մարդ՝ զղոյսն անսպառ ծագեացէ նա՛մ
 ՚ի վերայ քո . և ողորմութիւն իւր յաջողեացէ
 քեզ զոր դու կամիս . այլ մի՛ երկնչիւր յերազից
 քոց զոր տեսեր . զի թէպէս պատերազմն ա-
 հագին է , բայց նշան բարւոյ է . բարութիւն
 դալոց է քեզ ուստի ակն ոչ ունիս . և զինչ
 խորհեալ ես՝ կատարի . թէ հիւանդ ունիս
 ողջանայ . և պատուհասն ՚ի քէն հեռանայ կա-
 մաւն նոյ . աւուրքն որ ՚ի վերայ քո դալոց են՝
 լաւ են քան զառաջինսն :

Աշիւնն :

Ո՛վ մարդ՝ զոր ինչ խորհեցար՝ մի՛ երկնչիւ
 պի այնպէս ուրախանաս՝ որպէս պիտոյ է քեզ .
 բայց զխորհուրդդ նամ մարդոյ մի յայաներ ,
 զի քո վիճակն ՚ի կշիռն է . և նամ բան քեզ յա-
 ջողէ , ՚ի յիշոցաց պատրանսս կաց , և յնամ ժամ

աղօթք արա՛ . զի ամ չարիք ՚ի քէն հեռանան .
 և ՚ի հողոց ազատիս . թէ ՚ի ճանապարհ եր-
 թաս՝ բարով գաս . և թէ վաճառ ունիս՝
 բարով շահիս :

Վարիճն :

Ո՛վ մարդ՝ պատրաստ կաց և յայդ խոր-
 հրդոյդ հեռացիր՝ որ պահէ զքեզ ամ , թէ
 չէ յետոյ ապաշաւես . և թէ համբերես սա-
 կաւիկ մի՝ ամ բանայ քեզ դուռն մի բարի ,
 և զինչ որ կամք ունիս կատարի :

Աղեղնաւորն :

Ո՛վ մարդ՝ ժամանակս ըզորդեցաւ քեզ .
 և քո սրտին խորհուրդն ՚ի բարին կատարե-
 ցաւ . արա՛ զինչ որ կամիս և ինդաս ՚ի բանս
 քո . և տայ քեզ ամ զինչ բուժես քո . և ուստի
 ակն ոչ ունիս՝ ուրախանաս . թէ տուն շինես՝
 յաջողէ քեզ ամ . և ՚ի նեղութենէ ազատիս .
 թէ հեռաւոր ունիս՝ ատանես . բայց ՚ի
 լեզուէդ պատրաստ կաց :

Ածեղջիւրն :

Ո՛վ մարդ՝ յիշեա՛ զամ ՚ի բանս քո և նա
 հանէ զքեզ ՚ի սրտմութենէ , զի տրամութի
 հասանէ քեզ ՚ի սիրելեաց քոց . ասես թէ
 երբ ճար լինի ինձ կամ յաջողութի . և հի-
 ւանդութի երևի քեզ , բայց շուտով ողջա .

Նաս . թէ հեռաւոր ունիս գայ . և կատարի
խնդիրքդ ՚ի բարին :

Մ Չրհոսն :

Ո՛վ մարդ՝ բարութիւն շատ ունէիր և
զրկեցար . և չար դիպեցաւ քեզ . կռիւ սիրել
եացդ՝ հեռ քեզ եղև . և նման նաւու ՚ի
վերայ ծովուն երերման կաս . և կամիս քո
կենացդ հանգիստ գտանել՝ և ոչ կարես ճար
գտանել . ո՛վ մարդ մի արամիր՝ զի արամու
թիւն քո յուրախութիւն փոխի . և զոր խոր
հիս՝ կատարի կամաւն այ :

Չուկնն :

Ո՛վ մարդ՝ հեռաւոր տեսնուս , կամ ճայն
աւետեաց լսես և խնդաս . զի դիժարն քո
անցաւ և բարին մօտեցաւ , այլ թէ խոստումն
ունիս կատարես . և ՚ի յիշոցաց պատրաստ
կաց . և որպէս կապեալքն արձակին՝ և փակ
եալ դուռն բացուի , այնպէս բանալոց է
քեզ անձ զդուռն ողորմութեան :

Հրամն :

Ո՛վ մարդ՝ նման ես դու հովուին որ փախ
եաւ ՚ի ցրտոյն և եմուտ ՚ի յայրն , և ոչխա
րաց հոգս ոչ տարաւ . բայց եկն գայլն և ա
րար զնոսա գէշ . նոյնպէս և դու ՚ի բարեոյն
հեռանաս և երթաս զհեռ չար խորհրդոյն .

բայց պատրանստ կաց ՚ի նենգաւոր մարդոյ ,
 և ՚ի չար խորհրդոյդ հեռացիր . և բարի ե-
 ղիցի քեզ :

Արեգակն :

Ո՛վ մարդ՝ որպէս արեգակն որ լուսաւորէ
 զարարածս , այնպէս լուսաւորի խորհուրդ
 քո . զոր կամիս՝ կատարելոց է քեզ ան՝ ՚ի
 բարին . բայց ՚ի չար մարդոյ պատրանստ կաց .
 զի սրտիւն խորհի զնենգութի քեզ , և լեզ-
 ու ուն քաղցր խօսի ընդ քեզ . բայց դու ՚ի
 վերայ բանի միոյ հոգս ունիս՝ և զհետ մը-
 սաց քոց քննութիւն առնես , մի երկնչիր՝
 շուտով լուսաւորի խորհուրդ սրտի քո :

Լուսաբերն :

Ո՛վ մարդ՝ զհետ չար մարդոյ մի շրջիր .
 սպա թէ ոչ լես՝ մնաս կրես ՚ի նմանէ . և
 ՚ի քո լեզուէդ պատրանստ կաց . և յամ մար-
 դոյ քաղցր խօսից մի խարիր , զի կամին կորու-
 սանել զքեզ . սակաւ մի համբերես , թէ չէ
 յետոյ սպաշաւես . շատ բարութի կայ առա-
 ջի քո . կորուստն գտանի . և զոր ինչ առնես՝
 յաջողէ քեզ ան :

Փայլածուն :

Ո՛վ մարդ՝ ՚ի հեռաւոր տեղեաց ձայն ա-
 ւեանաց լես և ինդիր քո կատարի . և ուխտն

զոր ուխտեալ ես ւնայ՝ կատարեա՛ն, զի չարն հե-
ռանայ ՚ի քէ՛ն և բարին մօտե՛նայ քեզ . զինչ
բան ունիս՝ արա՛ն համարձակ . զի ըստ կամաց
քոց լինի և ուրախանաս աստուծով:

Լուսինն:

Ո՛վ մարդ՝ ցօղ ողորմութե՛ն ւնայ անպակաս
լիցի ՚ի քէ՛ն . և տէր ւնձ հաստատեսցէ զսիրտ
քո . զոր ինչ խորհեալ ես՝ արա՛ն և մի՛ երկնչիր ,
զի շատ բարութի՛ կայ առաջի քո . և ՚ի հե-
ռաւոր տեղեաց ձայն աւետեաց ըսես ՚ի մօտ
աւուրս և ուրախանաս . և զոր ինչ սրտիւ քո
խնդրես՝ աջօքդ տեսանես և խնդաս:

Երեակն:

Ո՛վ մարդ՝ ընդէ՛ր անիրաւի ջանաս և ՚ի
զուր աշխատիս . զի դժուարին է բանդ և ան-
հաստատ գործդ . զի խորհուրդդ այդ որ ՚ի
սրտիդ է՝ ոչ է պատշաճ ժամանակիս . փոխա-
նակ բարւոյ՝ չար հանդիպի քեզ . և թէ չսես
խրատու՝ մնասիս . այլ ժամանակ մի համբեր-
եա՛ն . և զյոյսդ առ ւնձ կալ հաստատուն և
մի՛ երկնչիր . զի թշնամին քո գլորի՛ և դու
կանգնիս կամաւն ւնայ . խնդաս միշտ ՚ի բարե-
կամաց և ՚ի սիրելեաց քոց , և լինիս յաղթօղ
ի վերայ թշնամւոյն քո:

Հուսնթագն:

Ո՛վ մարդ՝ շատ բարութիւն գալոց է քեզ
 ՚ի տեառնէ, և դու ուրախանաս. բայց այժմ
 ՚ի մէջ տրամութեան կաս, և որպէս նաև ՚ի
 վերայ ծովու ծփիս ՚ի յալեաց՝ մի երկնչիր.
 զի շուտով ազատիս ՚ի նեղութենէդ: Այլ
 խոստումն զոր ունիս՝ գնա՛ կատարեա՛. և ՚ի
 յիշոցաց պատրաստ կաց, և ՚ի ժամ աղօթից
 մատո՛ զաղաչանս առ անձ որ փրկեացէ զքեզ
 միշտ ՚ի փորձանաց:



ՅԼՆԿ

Պատմութիւն բանից պարունակելոց 'ի սմառ

Պատմութիւն վասն պղնձէ քաղաքին	3
Պատմութիւն վասն փահչուլ թագաւորին	47
Խրատք նուշրէ վան թագաւորին	59
Խրատք խիկարայ իմաստնոյ	69
Պատմութիւն աղջկան և մանկան	102
Հարցմունք աղջկան և մանկան	110
Վարք և պատմութիւն ալէքսիանոսի	133
Պատմութիւն տէր յուսկան, և որպէոյն նորին ստեփաննոսի	149
Զբօսանք տղայոց	176 և 194



